ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԸ

ԺԷ ՏԱՐԻ

Յունուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1960



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հույսի և կյանքի տոնը	3
Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և պետական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը	6
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Մենդյան տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	8
Ամանորի առթիվ Անդրկովկասի մուսուլմանների Շեյխ-ուլ-Իսլամ Հաֆիզադեի և Շեյխ Մուսան Մուֆտի Վելիևի շնորհավորական հեռագիրը և Վեհափառ Հայրապետի պատասխանը	12
Ամանորի և Սուրբ Մենդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	13
Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ և Սուրբ Մենդյան տոնի առթիվ	15
Հայտարարություն	18
ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ—եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակությունը Սուրբ Էջմիածնում և Մայր Տաճարի Ավագ Մեղանի օծումը	19
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	26
ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՆԼԻՅԱՆ.—Մայր Աթոռի սարկավագների տոնը	29
Ամանորը Մայր Աթոռում	33
Վկայականների բաշխման հանդես Հոգևոր ճեմարանում	37
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— եղիշե պատրիարք Դուրյան	41
ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ— Ղազար կաթողիկոս Ջանկեցու հերքողը նվիրված Սուրբ Էջմիածնին	50
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ— Սրտագին կոչ մեր թևմի սիրելի ժողովուրդին	53
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ— «Մենք աղոթում ենք բոլորի համար»	55
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Վաստակալից կյանքի ուղիով	57
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61

ՀՈՅԿԱԿԱՆ ՕՐՕ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the monthly review „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ԽՄԲԱԳԲԱԿԱՆ

ՀՈՒՅՍԻ ԵՎ ԿՅԱՆԳԻ ՏՈՆԸ

(ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԹԻՎ.)

Նոր տարվա և Բեթղեհեմի սուրբ մսուրի խորհրդի առաջ, նորից համախմբվում է քրիստոնեական աշխարհը՝ խորհրդածելու կյանքի, խաղաղության, արդարության մասին, աղոթելու և գոռնալու, հույս և հերշնչում, հույս և հավատ քաղելու համար:

«ԺԱՄ Է ՊԱՇՏԵԼ ՋՏԷՐ» (Սաղմ. ՃԺԸ 12):

ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՆՈՐ ՏԱՐԻ:

Նոր տարի է, նոր օր, որի առաջ կանգնել են նոր խոհերով, նոր երազներով և աշխատանքի նոր եռանդով:

«ՓՈՂ ՀԱՐԷՔ Ի ԳԼՈՒԽՍ ԱՄՍՈՅ, ՅԱՒՈՒՐ ՇԱՆԱՒՈՐԻ ՏԱՐԵԿԱՆԱՑ ՄԵՐՈՅ»:

Հրաժեշտ ենք տալիս անցնող տարվան, որ գնաց հավերժի գիրկը, շատ քան տանելով մեր կյանքից, մեր մտածումներից և ամավորում ենք նոր, մաղթելով, որ «ժամանց և ժամանակաց» Արարիչը «զմիւս ամս որ գալոց է, խաղաղութեամբ և պարագայս մեզ պահեսցէ»:

Հին ժամանակներում նոր տարվա առթիվ եղած նոր ամսամտին, մեծյանի քուրմը կամ տաճարի քահանան փող էր փչում և ծանուցում պաշտամունքի օրերը, որպեսզի մարդիկ «ցնծութեամբ և գոհութեամբ» պատաստվեին իրենց կրոնական պարտականությունների կատարմանը:

Ամանորը ուրեմն մարդկանց պարտակությունները հիշեցնելու օր էր, հոգևոր ու մարմնական վերանորոգման օր:

Նոր տարի՝ նշանակում է նորոգված նոր անք, նորից և նորից նորաստեղծում: Ամանորը իր հետ բերում է կյանքի և մարդկության նորոգության, տեսական վերափոխության գաղափարը, դեպի լավագույն և լուսավոր ապագա:

Նոր կյանքի շրջանը, խաղաղության դարաշրջանը ահա այսպես են պատկերել հին աշխարհի իմաստուններն ու մարգարեները, իսկ ՆՈՐ ՏԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ՆՈՐՈԳՎԱԾ ԿՅԱՆՔԻ ՀՈՐՀՐԴԱՆԻՇԸ: Մարդկությունը, նիրհին ու բնական աճումով, հոգեպես, բարոյապես, պետք է աճի, վերանորոգվի: Մարդկային կյանքի արժեքը ապրված տարիների մեջ չէ, «ոչ թուով ամացն չափեսցի», այլ հոգևոր, իմացական հասունության և կատարելության մեջ:

Բարոյական, հոգեկան աճում և վերանորոգում, ահա նոր տարվա՝ Ամանորի թելադրությունը:

Երբ Նոր տարվա առաջին առավոտը աղոթքի նման բացվում է աշխարհի և մարդկության վրա, բոլորի ցանկությունը, հույսը այն է, որ խաղաղություն լինի երկրի վրա և համերաշխություն ազգերի միջև:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՐԵՎԱՄԱԳԸ ՀՈՒՅՍԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՌԱՎՈՏՆ Է:

Խաղաղությունը, խաղաղ գոյակցությունը մարդկանց երազն է եղել դարերով: Աշխարհը դարեր շարունակ տառապել է և հուսացել խաղաղության, որոնել ճշմարիտ ճանապարհը, «որ տանի ի կեանս յաւիտենականս», այսինքն դեպի նորոգված, արդար և խաղաղ կյանք: Մարդիկ միշտ ձգտել են հավերժական, «առաւել կեանք»-ին, ուզեցել են ապրել հավերժորեն, առանց «ճեծութեան և

ցաւի», առանց պատերազմի, առանց երկյուղի և առանց չղջաների:

Նոր տարին իր խոնարհով նորից և նորից այդ միտքն է խորացրել միշտ մարդու մեջ։

Բայց էականը ոչ թե ժամանակի փոփոխությունն է մարդու համար, այլ կյանքի և մարդու փոփոխությունը՝ անփոփոխ և հավերժական ժամանակի մեջ։ «Ամենայն կեանք մեր անկայուն և շարժական է և ոչ մնացական։ Ո՛չ մեծութիւն, ո՛չ փառք, ո՛չ ուրախութիւն, ո՛չ հեշտութիւն, և ո՛չ այլ ինչ, այլ ամենայն ինչ փոփոխի և գնայ որպէս հին տարին գնաց» (Տարեացի)։

Նոր տարվա սեմին, մարդկային կյանքի և աշխարհի վերաբնորոգության հիմնական պայմաններից մեկը հին թոթափելու կամքն է և վճռականությունը։

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀՈՒՅՍԻ ՏՈՆՆ Է, ՈՐՈՎ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՏՈՆԸ։ Այս իմաստով, երբեմ պատահականություն չէ, որ Ամանորի և Քրիստոսի Ծննդյան տոների միջև եկեղեցու իմաստուն հայրապետները տեսել և նշել են սերտ առնչություն, հերին կապ։ Քրիստոս Իր ծննդով աշխարհին բերեց խաղաղության պատգամը, որով հույսի տոնին հաջորդեց կյանքի տոնը։ Նոր տարվա առաջին տոնը Քրիստոսի Ծննդյան տոնն է, որը մի տեսակ սրտագին կոչ է կամ սրտառուչ ազդարարություն, ուղղված մարդկանց՝ հասկանալու համար, թե մարդիկ «ի՞նչ կերպով, ինչպիսի՞ ճերշնչումներով և ի՞նչ պարտականությանց կատարումով պիտի կարենան արժեքավորել իրենց կյանքը»։

Մարդու գերագույն կոչումը և պարտականությունն է ԺԱՄԱՆԱԿԸ ԼՅՆԵԼ (Պողոս առաքյալն ասում է՝ «գնեցէ՛ք զժամանակս») ազնիվ գործերով, ստեղծագործ աշխատանքով, բարիքների ստեղծումով, ՀՈՒՅՍԸ ՎԵՐԱՄԵԼՈՎ ԿՅԱՆՔԻ, ԳՈՐԾԻ, ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ։

Իսկ այդ բոլոր ցանկալի բարիքները կլինեն միայն և միայն խաղաղության պայմաններում։

Այդ իմաստով անցնող տարին արդարացրեց մարդկության հույսերը և եղավ արդարև նատկանշական մի ժամանակաշրջան, երբ անդուլ և հետևողական ջանքեր թափվեցին պետական ղեկավար գործիչների, քաղաքական, կրոնական տարբեր համոզմունքների տեր միլիոնավոր մարդկանց, գրականության, արվեստի բազմաթիվ ներկայացուցիչների կողմից, մեղմելու միջազգային լարվածությունը, վերացնելու «սառը պատերազմ»-ի հոգեբանությունը, ամրապնդելու ժողովուրդների անվտանգությունը և բարելավելու տարբեր պետական սիստեմ ունեցող կառավարությունների փոխհարաբերությունները։

Մարդկության վերև, այս նոր ժամանակների հորիզոնի վրա, փայլում է արդեն ՀՈՒՅՍԻ ԱՍՏՂԸ, և մոտ է ԱՒԱՒՈՏԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, իր սրտապնդիչ ավետիսով «ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅՆԵԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻՍ ՀԱՃՈՒԹԻՒՆ»։

Նոր տարվա սեմին, գոհունակության խորին զգացմունքով, պայծառ լավատեսությամբ կարող ենք ասել, որ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻԱԾԱՆԸ 1960 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԾ ԵՐԿՆԱԿԱՄԱՐԻ ՎՐԱ ԵՐԲԵՔ ՉՊԻՏԻ ԴԺԳՈՒՆԻ, բոլոր խաղաղասեր և բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց պայքարի, ջանքերի և միասնական գործունեության շնորհիվ։

Ուրախությամբ պիտի արձանագրել, անցնող տարվա վերջին ամիսներին մանավանդ, միջազգային իրադրության բարելավումը։

Նոր տարվա այս օրերին, ավելի քան երբևէ, հանուն խաղաղության մղված պայքարի շնորհիվ, ժողովուրդների անվտանգության և ամբողջ աշխարհում խաղաղության հաղթանակի հեռանկարները դարձել են ավելի պայծառ, ավելի շոշափելի և ավելի կոնկրետ։ Բովանդակ աշխարհը ձգտում է խաղաղության։ Ժողովուրդները իրենց ձեռքն են վերցրել խաղաղության պաշտպանության նվիրական գործը։ Խաղաղությունը այլևս «սարի հետը» չէ։

Խաղաղության պաշտպանությունը, հասարակական տարբեր սիստեմներ ունեցող պետությունների համերաշխ գոյակցության սկզբունքը այսօր կյանքի հրամայական պահանջն է։

Խաղաղության պաշտպանության գործը, պետությունների և ժողովուրդների համագործակցության գաղափարը՝ արդար և նվիրական գործ է, որովհետև աստվածահաճո գործ է։ Անա թե ինչու Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, կապվել է Ավետարանի խաղաղության պատգամին, և խաղաղասեր մարդկության շարքում աշխատում է հանուն խաղաղության, ազգերի եղբայրացման և պետությունների համագործակցության։

Մեր ժողովուրդը, մեր եկեղեցին, նոր տարվա շեմքին, ունեն մի սրտագին, մի իրավ ցանկություն միայն, այն է՝ ապրել խաղաղ, շինել և շինել խաղաղության մեջ, մեր մեծ Հայրենիքի և ամբողջ երկրագնդի խաղաղասեր, աշխատասեր այլ ժողովուրդների հետ։ Այսօր բովանդակ աշխարհը կարիքն ունի այդ մնայուն խաղաղության, որպեսզի մարդկությունը ընդմիշտ ազատվի նոր պատերազմի արհավիրքներից։

«ՊԱՏԵՐԱԶՄ, ԵՐԲԵ՛Ք, ԵՎ ՈՉ ՈՔԻ ԴԵՄ. ԱՅՍ է ԵՎ ԱՅՍ ՊԵՏՔ է ԸՆԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԿԱԲ-

ԴԱՆՈՍԸ ԵՎ ԴՈՐԾԵԼՈՒ ՈՒՂԻՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ, ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ, ԱՄԵՆ ՄԵԿՍ ՄԵՐ ԴԻՐՔԵՐՆԵՐՈՎ, ԱՄԵՆ ՄԵԿՍ ՄԵՐ ՈՒԺԵՐՈՎ»,— գրում է վեհափառ Հայրապետը թեմական առաջնորդներին ուղղված իր խաղաղության կոչի մեջ:

«ՄԱՐԴԱՍԵՐ ԱՍՏՎԱԾ, ՏՈՒՐ ՄԵԶ ՔՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅՈՐԱՎԻԴ ԵՂԻՐ ՈՐՈՐ ԻՐԱՎ ԽԱՂԱՂԱՐԱՐՆԵՐՈՒՆ:

ԹՈՂ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏԱՐԻ ԴԱՌՆԱ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ»,— սրտագին բարեմաղթում է Վեհափառ Հայրապետը Իր Ս. Մենդյան գեղեցիկ Թարոգի մեջ:

«ԵՂԻՑԻ, ԵՂԻՑԻ ԵՒ ԵՂԻՑԻ»:

Թո՛ղ 1960 թվականը Քրիստոսի Հարություն սուրբ Ծննդյան երկնատուր շնորհներով և խաղաղասեր մարդկանց բարի աշխատանքով լինի համայն աշխարհի համար նշմարիտ խաղաղության տարի, իսկ մեր Հայրենիքի և մեր ժողովրդի համար՝ նոր նվաճումների, նոր հաղթանակների տարի:

Թո՛ղ 1960 թվականը լինի արգարև Հայ եկեղեցու համար ազգային-եկեղեցական միասնականության, հոգևոր և ազգային գիտակցության զարթոնքի տարի:

Այս բարեմաղթություններով, նոր տարվա խոհերով և Ս. Մենդյան հոգևորոց ներշնչումներով դիմավորենք ՀՕԻՑԻՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԿՐԿՆԱԿ ՏՈՆԵՐԸ՝ ԱՄԱՆՈՐԸ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՈՒՆԴԸ:

ՇՆՈՐՀԱՎՈ՞Ր ՆՈՐ ՏԱՐԻ, ԲԱՐԻ, ԱՐԻ, ԱՇԽԱՏԱՍԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱ՞Ի ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՐՕՐԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները նոր տարվա առթիվ: Մաղթում ենք Ձեզ, Պարոն նախագահ, բաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն: Աղոթում ենք մեր ժողովրդի բարեկեցության և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ջերմորեն շնորհավորում ենք Ձեր և կառավարության անդամների նոր տարին, մաղթելով ամենայն առողջություն և բեղմնավոր գործունեություն: Աղոթում ենք, որ նոր տարում մեր Հայրենիքը նորանոր հաջողություններ ձեռք բերի և մեր ժողովուրդը առավել երջանիկ ապրի Սովետական մեծ Հայրենիքի ժողովուրդների եղբայրական ընտանիքում խաղաղությամբ:

Սիրով և ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Սրտագին շնորհավորում ենք Ձեր և պատվարժան խորհրդի բոլոր անդամների նոր տարին, մաղթելով ամենքիդ հաջողություն և ուրախ տարի:

Սիրով և ողջույնով՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ հաջողություն և երջանկություն:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի հասցեով Ձեր հղած շնորհավորանքի համար հայտնում եմ իմ և Հայաստանի կառավարության շնորհակալությունը:

Հանձնեմ ընդունել մեր շնորհավորանքը և Ձեր հաջողության ու բարեբության մեր լավագույն ցանկությունները:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ հաջողություն և երկար կյանք: Լիաձայն եմ, որ այսուհետև ևս Դուք և Հայ եկեղեցին Ձեր գնահատելի լուման կբերեք ամբողջ աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման ազնիվ գործին:

Լավագույն ցանկություններով՝

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ՓԻՌՁԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՅԵՐԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Ֆ. Ֆ. ՎԱՆԱԳԻՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԽՈՒՄԻՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Ք՝ՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (*ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ*),

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՆ
(*ԼՈՆԴՈՆ*),

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),

ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ
ՄԱՐ ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ-ԻՆ (*ՔԵՐԱԼԱ*),

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԻՆ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ԿԵՆԵՏԻԿ*),

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅՇԱՌ ՀԱՅՐ
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*):

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Ողորմության Աստուծոյ փեշերեն և Ս. Էջմիածնեն, հուսացյալ և ուրախ սրտով, կողջունենք զՁեզ մեր Տիրոջ և Փրկչի Ս. Մենդյան ավետիսով. Մեր ջերմագին մաղթանքները բերելով Ձեզ Սրբության՝ վասն քաջառողջ և երջանիկ հովվապետության ու Ձեր լուսափայլ Ս. եկեղեցին ու ժողովուրդին՝ վասն բարեօրության և ծաղկման:

Թող Ս. Մենդյան շնորհները առատապես իջնեն մեր աշխարհին վրա, հիրականացնում երկնային մեծ ու փրկարար պատգամին՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ձեզ միշտ սիրող ու հարգող՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր Մեր ի Տեր.

Հավատի նույնությամբ և սիրով ու համերաշխությամբ ողջունում եմ Ձերդ Սրբությանը Քրիստոսի Ս. Մենդյան տոնի առթիվ, փառավորելով Ձեզ հետ միասին աշխարհի Փրկչի ծնունդը, միաժամանակ աղոթում եմ, որ Տերը նորոգի Ձեր կյանքը և ուժերը, առավելյալ հաջողությամբ շարունակելու համար Ձեր ջանքերը Տիրոջ փառքի և հոգիների փրկության համար:

Եղբայրական սիրով ի Քրիստոս մնամ միշտ Ձեզ անձնվեր՝

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱ

ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

Սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

Խոր նրվանքով է, որ Մենք ստացել ենք Ձերդ Սրբության ողջույնները ու Մենդյան մաղթանքները Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Մենդյան առթիվ:

Մեր սրտի խորքից փոխադարձելով Ձերդ Ամենապատվության ողջույնները ու եղբայրական բարեմաղթությունները, աղոթում ենք ամենակարող Աստուծուն, որպեսզի նորածին Հիսուսը պարգևի Ձեզ, Ձեր եղբայր եկեղեցու հոգևորականության և հավատացյալ հոտին՝ խաղաղություն և բարություն և առատ օրհնություններ:

Ամենաանկեղծ եղբայրական մաղթանքներով՝

ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՖՐԻԿԱՅԻ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Սիրեցյալ Եղբայր մեր ի Տեր.

Եղբայրական համբույրով ի Քրիստոս, ողջունում և շնորհավորում եմ Մենդյան մեծ տոնը և նոր տարին, և ամբողջ հոգվով ցանկանում Ձերդ Սրբության առողջություն և երկար տարիներ:

Թո՛ղ Տերը արժանացնի մեզ Ձեզ հետ ամեն տարի խաղաղությամբ ու սիրով դիմավորելու փառավոր այս տոնը և ապրելու ամբողջ աշխարհում, նրեշտակների խմբի Մենդյան գիշերը ավետած իսկական քրիստոնեական խաղաղությամբ:

Ձերդ Սրբության եղբայր՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ

ԴԱՄԱՍԿՈՍ

ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս.

«Շնորհք ընդ Ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ, ի Հօրէ մերմէ և ի Փրկչէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»:

Մեր Տիրոջ Մենդյան տոնը տոնելով, նշում ենք պատմության մեջ ոչ թե մի դեպք, այլ այն, որ ժամանակը հավիտենականության է կապում. և գոհություն ենք հայտնում, որ Բանը, որ «ի սկզբանէ էր առ Աստուած, մարմին եղև և բնակեաց ի մեզ» (Յովհ. Ա 14): Մարդկային մարմին առնելով, մեր օրհնյալ Տերը չեկավ արքայական իշխանությամբ, այլ ամենայն հեզությամբ, որպես մսուրում ծնված Մանուկ, «զանձն ունայնացոյց՝ զկերպարան ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղև» (Փիլիպ. Բ 7):

Այնուհանդերձ սա նա է, որի մասին մարգարեն խոսեց որպես «Սքանչելի, Խորհրդակից, Աստուած ճգոր, Հայր հանդերձեալոյ աշխարհին և Խաղաղութեան» (Եսայի Թ 6):

Մինչ մենք միասին ուրախանում ենք այս տոնին հրեշտակների դասով և երգում ենք «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», Ձեզ եմ հղում, սիրելի եղբայր, իմ ջերմագին շնորհավորությունները ու եղբայրական սերը, մաղթելով Ձեզ՝ մեր Փրկչի Սնունդից ելող այդ սուրբ ուրախությունը: Մինչ աշխարհում դեռ մեր շուրջը մթություն է տիրում, ուրախանանք, որ «Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ և խաւար ոչ եղև ետուն» (Յովհ. Ա 5):

Աղոթենք, որ Աստուծո ողորմությամբ մարդիկ ճամբեստություն ունենան իրենց բոլոր գիտությունը ենթարկելու Աստուծո սուրբ կամքին, որ մարդիկ դառնան Քրիստոսի արդարության, խաղաղության և սիրո քաղաքացիներ, որ չարի բոլոր ուժերը խափանվեն և ամբողջ մարդկությունը կարողանա տեսնել «զփառս Նորա, զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ» (Յովհ. Ա 14):

Այս առթիվ սրտագին ուրախությամբ է, որ միացած ենք ոչ միայն Բեթղեհեմի հովիվներին, այլ նաև մեր բոլոր եղբայրների հետ՝ ի Քրիստոս Հիսուս պաշտելով Սուրբ Մանկան Իր օրհնյալ Մոր բազուկների մեջ և ընդունելով նրա հերկայության օրհնությունը:

Սիրելի եղբայր իմ, ճանեցեք ընդունել անկեղծ բարեմաղթությունները, աղոթելով, որ այս տոնի առթիվ Բեթղեհեմի Քրիստոս Մանուկը օրհնի Ձեզ, Ձեր հոգևորականությանը և Ձեր համայն հավատացյալ ժողովրդին:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՉԵՈՖՖՐԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,

ԼՈՆԴՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

Ձերդ Սրբություն.

Մեծ և սքանչելի ամենագետ Տեր Աստվածը, որպեսզի մեզ Իրեն համար կենդանի արարածներ դարձնի, ուղարկեց Իր Միածին Որդուն, որի ծնունդը, որպես «մեծ խորհուրդ», տոնում ենք ուրախ սրտով: Ս. Եկեղեցին խանդավառ երգեցողությամբ տոնում է այս նշանալի դեպքը երգելով. «Սնաւ Կոյսն»... «և Թանձ մարմին եղև: Հովիւքն փառս տան ընդ հրեշտակս, և մեք ընդ նոսին գովերգեմք՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»:

Ուրախ է Աստուծո Եկեղեցին: Հրճվում են և «Ուրախ եղեն հրեշտակք յերկինս, ուրախ եղեն և մարդիկ, զի ծնաւ Աստուած Փրկիչ ի Բեթղեհէմ»: Աստվածային ողորմության և խոնարհության այս տոնը մեր մեջ ցանկություն է առաջ բերում՝ արժանի լինելու աստվածահաճո մեծ և բարի գործերի, որոնք ուղարկվում են մեզ Աստուծուց, մեզ անեծքից փրկելու և դեպի հավիտենական կյանքը առաջնորդելու համար:

Թո՛ղ օրհնված լինի Տիրոջ օրը, երբ սուրբ առաքյալների մարգարեությունը կատարվում է «Հզօր Իշխանի» մասին (Եսայի Թ 6), որը մարդկությանը հաշտեցնում է Տիրոջ հետ և մարդկային բնությունը բժշկում մեղքից:

Քրիստոսի այս լուսապայծառ տոնի օրը բաց անենք մեր սրտերը խաղաղության երկնային հիմնի առաջ, որպեսզի խաղաղությունը քաղավորի ամբողջ աշխարհում, զի կույսից ծնվածը «մեր խաղաղությունն» է (Եփես. Բ 14):

Ձերդ Սրբություն, իմ և Ս. Սիոնի կողմից շնորհավորում եմ Քրիստոսի Սնունդյան լուսապայծառ տոնը: Ջերմորեն աղերսում են մանկացյալ Տեր Հիսուսին, որ պանպանի Ձեզ առողջ և Ձերդ Սրբության պարգևի երկար տարիներ, Ձեր բարեպաշտ հոտին և բարի կամքի տեր բոլոր ժողովուրդներին շնորհի խաղաղություն և հաջող ու բախտավոր նոր տարի:

Ապավինելով Ձեր լուսապայծառ աղոթքներին, մնամ Ձերդ Սրբության խոնարհ եղբայր և լծակից՝

ԿԻՐԻԼ

ՍԻՈՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս.

Սննդյան երկրից շատ հեռու՝ Հնդկաստանից, որտեղ մեր Տիրոջ սիրելի Ս. Թովմաս Առաքյալը քարոզեց Ավետարանը և մահացավ որպես մարտիրոս. Ձեր խոնարհ եղբայր Բասիլիոս կաթողիկոսը, Ձեր շնորհավորանքների համար մեծ հրճվանքով շնորհակալություն է հայտնում Ձերդ Սրբության և փոխադարձում է մեր Փրկչի Սննդյան ավետիսը: Թո՛ղ առաջին այդ ծնունդի հրճվանքը և իմաստը բերեն խաղաղություն և Աստուծո օրհնություններ Ձերդ Սրբության Սննդյան այս տոնին և թո՛ղ նոր տարին լինի պայծառ և երջանիկ՝ Իսանուկ Հիսուսի օրհնություններով:

«Ամեն Սնունդի Քրիստոս նորից է ծնվում
Հավատացյալ սրտերի մեջ:
Թող այս հրճվանքը բերվի երկիր,
Մնա ձեզ հետ հավիտյան»:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԲԱՍԻԼԻՈՍ ԳԵՎԱՐԳԵՍԵ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԵՎԵԼՔԻ

ՔԵՐԱԼԱ

Քրիստոսի ծննդյան նախօրյակին և նոր տարվա շեմքին, գոհունակությամբ հիշում եմ մեր համատեղ աշխատանքը խաղաղության պաշտպանության կոմիտեում, ինչպես նաև Մոսկվայում, շվեդական հոգևորականության ներկայացուցիչների՝ Բալթիական ծովի ափերից լութերականների հանդիպումները և ծանոթությունը Արարատի ստորոտում գտնվող հնադարյան Հայ եկեղեցու բարձր ներկայացուցիչների հետ:

Խնդրում եմ ընդունել սրտագին շնորհավորություններս և բարեմաղթություններս Ձեր եկեղեցու հավատացյալների, Ձեր աշխատանքների համար, հրեշտակային երգակցությամբ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ձերդ Սրբություն.

Քրիստոսի Սննդյան նշանակալից տոնի առթիվ, ամբողջ սրտով ողջունում եմ Ձերդ Սրբության Սննդյան երգով, որը երգում էր հրեշտակների խումբը Բեթղեհեմի վրա. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ողորմած Աստված թող պահպանի Ձերդ Սրբությանը Իր նախախնամությամբ: Թող օրհնի նա Ձեր ս. եկեղեցին:

Առաջիկա նոր տարվա առթիվ թող Տերը առատի մեզ Իր ողորմությունը և սերը, որպեսզի խաղաղության Աստվածը մշտապես մեզ հետ լինի:

Ձերդ անկեղծորեն՝

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Երախտագիտությամբ վերհիշելով մեր հիշատակելի այցը Ձերդ Սրբության, Ս. Սննդյան առթիվ առաքում ենք ջերմագին բարեմաղթություններ Ձեր եպիսկոպոսներին, հոգևորականության և հավատացյալներին:

ԴՈԿՏ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐՏ ԴԸ ՀՈՒՖՏ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԺԸՆԵՎ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ՀԱՔԻՄՋԱԴԵԻ ԵՎ ՇԵՅԽ ՄՈՎՍՈՒՆ ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻԵՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհավորում ենք առաջիկա 1960 թվականը: Մաղթում ենք առողջություն, երկար բախտավոր կյանք: Թո՛ղ Ալլահը օգնի Ձեզ՝ խաղաղության գաղափարը ամրապնդելու համար աշխարհում: Թո՛ղ այս տարին լինի սովետական կառավարության բոլոր բարի ձեռնարկությունների իրագործման և նոր միջոցառումների տարի՝ աշխարհի ժողովուրդների բախտավորության համար:

ՇԵՅԽ ՈՒԼ ԻՍԼԱՄ ՀԱՔԻՄ ԶԱԴԵ,
ՇԵՅԽ ՄՈՎՍՈՒՆ ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻԵՎ,

ԲԱՔՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԱՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՋՈՒԹՅԱՆ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ՀԱՔԻՄՋԱԴԵԻՆ, ՇԵՅԽ ՄՈՎՍՈՒՆ ՄՈՒՖՏԻ ՎԵԼԻԵՎԻՆ

ԲԱՔՈՒ

Անկեղծորեն շնորհակալ ենք նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի համար: Փոխադարձաբար շնորհավորում ենք Ձեր նոր տարին, մաղթելով բարեկեցություն և երկար կյանք: Աղոթող ենք առ Աստված՝ մեր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամության ամրապնդման, ամբողջ աշխարհի խաղաղության համար:

ՎԱՋԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՒՕԴՆԵՐԻ ՕՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳԻՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր լուսաբնակ նախնյաց լույս հավատքի և հույսի բարձունքեն, վերջապես կտեսնենք ծագող «Արեգակն արդարության» և վերստին կլսենք փրկարար երգը Բեթղեհեմի հրեշտակներուն՝ «ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ եւ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Այս մեծ և սքանչելի ավետիսով սիրտ առած, այս նոր տարվա սեմին կոչչունենք և կօրհնենք զՁեզ բոլորդ, ամենայն հայոց Սրբություն Սրբոց լույս էջմիածնեն, մարդացյալ Փրկչի Իշխան Ս. Տեղեն:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ձեզ և աստվածասեր հոգևոր դասիդ:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն ազգային-եկեղեցական և բարեսիրական կազմակերպությանց բարեպաշտ անդամներուն:

Ողջո՛ւյն և օրհնություն մեր սիրեցյալ ու հարազատ ժողովուրդի բոլոր գավակներուն, բոլորին անխտիր:

Եվ նաև Մեր հայրական սրտեն բխած բյուր մաղթանքներ բարի ամենուդ, ամենուդ՝ վասն հաջողության առաքինի կյանքի, վասն երջանկության ու բարօրության Ձեր, վասն հաջողության առաքինի գործոց Ձեր:

Խաղաղությո՛ւն Ձեզ, խաղաղությո՛ւն Ձեր հյուրընկալ երկրին և ժողովուրդին, խաղաղությո՛ւն ամբողջ աշխարհին, համայն մարդկության, այժմ և հավիտյան:

«ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈՒՔ եւ ՁՕՐԱՍՑԻՆ ՍԻՐՏՔ ՁԵՐ, ԱՄԵՆՆՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՑԵԱԼՔ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. ԼԱ 25), զի «ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ եւ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Դալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ագերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Արգարյան ավանդի և Ս. էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարեբարերին և ազգային ծանոթ դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մարդացյալ Փրկիչը Իր խաղաղությամբ և ճոգևոր վերածնունդով վերանորոգե խոով աշխարհը բոլոր ժողովուրդներու երջանկության համար։ Միածինը գոռավիգ ըլլա Վեհիդ և առատ պտուղներով արդյունավորե Ձեր եկեղեցիներ բոլոր ծեռնարկները։ Այս է ամենուս ստացին մաղթանքը Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ։

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՅԱՄԲՈՒԼ

Ստացին շնորհավորություններ և լավագույն բարեմաղթություններ Ամանորի և Ս. Ծննդյան համար։

Մաղթելով Ձեզ հաջառողջություն և հաջողություն՝

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Նոր տարվան և Աստվածահայտնության տոնի առթիվ կնիրկայացնենք Ձեզդ Ս. Օծության մեր և Սրբոց Հակոբյանց միաբանության ճարգալից շնորհավորությունները։

Կաղոթենք Ամենակալին Ձեր կյանքի արեշատության համար, խաղաղությամբ ճովվելու մեր եկեղեցվո ճոտը։

ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Նորին Ս. Օծություն Վեճափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական ճեռագրեր և նամակներ, ամենաջերմ և ճարգալից զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, ճոգևոր ճովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, ճայ և օտար պաշտոնական անձնավորություններից։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԳԱՐՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԵԼԻՔԱՆ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Քրիստոնյա աշխարհի մեծ տոնը՝ Փրկչի ծննդյան և աստվածահայտնության հիշատակը, հունվարի 6-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տոնվեց ավանդական մեծաշուք հանդիսությամբ։

Մայր Տաճարը զարդարվել էր տոնականորեն։ Պաշտվեց Ս. Ծննդյան առավոտյան ժամերգությունը՝ մեծ և սքանչելի խորհրդի ալիտիսը բերելով հավատացյալ և հուսացյալ հոգիներին։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Մայր Տաճար՝ մատուցելու Ս. Ծննդյան պատարագը։

Ս. Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Սահակ և գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանները, հոգեշնորհ Տ. Եղիշե և հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետները, արժանապատիվ Տ. Կոմիտաս և արժանապատիվ Տ. Հակոբ քահանաները, ինչպես նաև Մայր Աթոռի սարկավագների խումբը։

Մայր Տաճարը լիքն է հավատացյալների և ուխտավորների բազմությամբ։

Մայր Աթոռի երգչախումբը քառաձայն երգում է սուրբ պատարագի երգեցողությունը։

Սուրբ պատարագին ներկա են պաշտոնական անձնավորություններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ինչպես նաև ուխտավորներ Ֆրանսիայից և Սիրիայից։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը, Մայր Տաճարի նվիրական կամարների տակ, ավետիսը տալով Քրիստոսի Ս. Ծննդյան և խաղաղության պատգամը ուղղելով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդին։

Վեհափառ Հայրապետի քարոզը, Քրիստոսի Ս. Ծննդյան խորհրդով օծուն և խաղաղության ջերմ շնչով բաբախուն, լսվում է հոգեկան ուրախությամբ և խորին երկյուղածությամբ.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»։

Հավատացյալ և հուսացյալ որդիք Մեր սիրելի.

Միածնի Իշման լույս Սեղանեն Ձեզ ավետիս՝ ծնավ Քրիստոս։

Ծնավ Քրիստոս՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ»։

Ծնավ Քրիստոս՝ «Խաղաղութիւն յերկիր»։

Ծնավ Քրիստոս՝ «Հաճութիւն ի մարդիկ»։

Այսօր մեր սրտերը վերստին կլուսավորվին մեծ և սքանչելի խորհուրդովը Աստվածորդվույն սուրբ ծննդյան։

Այսօր, հավատքի լույսով և փրկության հույսով բացված երկինքեն, կծագի ահա Արեգակը խաղաղության, և մեր հոգիները խոնարհ, ծունկի եկած բարի հովիվներու կողքին, անգամ մը ևս կլսեն երգը Բեթղեհեմի հրեշտակներուն։

Այսօր, աշխարհի հորիզոններու վրա, միլիոնավոր մարդիկ իրենց ձեռքերը դեպի երկինք կարկառած խաղաղություն կհայցեն,

տական և ամբողջական խաղաղություն բոլոր ժողովուրդներուն համար, համայն մարդկության համար, այժմ և հավիտյան։

Հայաստանյայց Ս. Եկեղեցին, ինչպես միշտ, այսօր ալ հավատարիմ մեր Տիրոջ և Փրկչի պատգամին, կա ու կմնա անսասան՝ խաղաղության ուխտի վեմին վրա, և կաղոթե ու անձանձրույթ կգործե վասն խաղաղության աշխարհի, վասն համերաշխ գործակցության ժողովուրդներու, վասն բարեկամության պետություններու։

Մեծ մխիթարություն է մեզ, իբրև Հայ Եկեղեցի և իբրև հայ ժողովուրդ, որ խաղաղության մարդասիրական պատգամը հետզհետե առավել հստակությամբ կպայծառանա և մարմին կառնե մարդկային խղճին ու մանավանդ մեծ պետությանց ազնիվ և իմաստուն ղեկավարներու գործակցության մեջ։

Այսօր, այս սուրբ խորհուրդի պահուն և նոր տարվան սեմին, բազմադարյան քրիստոնեական կեդրոն Ս. Էջմիածնեն Մենք երախտագիտության և օրհնության խոսք կուղղենք բոլոր այն մեծահոգի պետական ղեկավարներուն, որոնք իրենց խաղաղարար գործունեությամբ կհանդիսանան ամենահարազատ ներկայացուցիչները մարդկության ամենազնիվ զգացումներուն։

Երախտագիտության և օրհնության Մեր խոսքը կուղղենք ի մասնավորի Սովետական Միության կառավարության, որ հանդես եկավ ամբողջ աշխարհին ծանոթ իր ավետարեր առաջարկություններով հօգուտ խաղաղության և հօգուտ ընդհանուր և ամբողջական զինաթափման։

Մարդասեր Աստված, տո՛ւր մեզ քու խաղաղությունը և զորավիգ եղիր բոլոր իրավ խաղաղարարներուն։

Թող նոր տարին խաղաղության վերջնական հաղթանակի տարին դառնա՝ մեր ժողովուրդին և համայն աշխարհի համար։

Մենք կհավատանք, թե «Դիշերն մերձեցաւ և տիւն մերձեցաւ» (Հռոմ. ԺԳ 12), «զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և խնդութիւն և խաղաղութիւն» (Հռոմ. ԺԴ 17)։

Ահա ուրեմն, սիրելի՛ հավատացյալ զավակներ Մեր, որ հերկիր Հայաստան և ի սփյուռս աշխարհի, Միածնէջ այս Ս. Տաճարի լույս կամարներեն, Քրիստոսի ծննդյան և աստվածահայտնության սքանչելի ավետիսով, ձեզ բոլորիդ, բոլորիդ, կբերենք նաև ավետիսը խաղաղության, մեծ ավետիսը ի մարդիկ հաճության։

Հարազատնե՛ր Մեր, մնացե՛ք հավատարիմ խաղաղության ուխտին, աղոթեցե՛ք աշխարհի խաղաղության համար, աշխատեցե՛ք, գործեցե՛ք հօգուտ խաղաղության։

Այսպիսով, և միայն այսպիսով ձեր անձը ընտիր պիտի կացուցանեք առաջի Աստուծոյ, վասնզի Ինքը Հիսուս, երանելի օր մը, իր մեծ քարոզով պատգամեց՝ «Երանի՝ խաղաղարարաց, զի նոքա զԱստուած տեսցեն»։

Այսպիսով, և միայն այսպիսով, ձեր անձը ընտիր պիտի կացուցանեք նաև մեր Ազգի և մեր պատմության դատաստանին առաջ, զի անցյալի մեջ բազում անգամներ հոշոտված և նահատակված մեր ժողովուրդը, ապրելու և գոյատևելու, կառուցանելու և ստեղծագործելու ամբողջ իր հույսը դրած է խաղաղության պահպանման ու ամրապնդման վրա։

Խաղաղութենեն դուրս չկա հայ ժողովուրդ։ Ով հայ է ճշմարտապես և իր հայացքը անվարան հառած կպահե դեպի հավերժական Արարատը և նույնքան հավերժական Ս. Էջմիածինը, չի կրնար տարբեր զգալ, չի կրնար տարբեր մտածել, չի կրնար տարբեր գործել։

Մեր սրտեն բխած ամենաջերմ աղոթքն է նաև, որ խաղաղություն իջնե հայ Սփյուռքի կյանքին վրա, որ վերջ գտնեն որոշ տեղեր սկիզբ առած ուղեկորույս և միայն չարիք բերող ձգտումները և վերահաստատվի մեր Ս. Եկեղեցվո ներքին միությունը և շինարար գործակցությունը։

Ինչո՞ւ այս անիմաստ պառակտումը և որո՞ւ օգտին՝ պառակտված մնալու այս անհորիզոն համառությունը։ «Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ զայս» (Սաղմ. ՃԶ 43)։

Չէ՛, այս չէ՛ ուղիղ ճամբան եկեղեցաշինության։ Այս չէ՛ ուղիղ ճամբան ազգապահպանման։ Այս չէ՛ ուղիղ ճամբան հայրենասիրության։

Մեր հորդորն է ու Մեր պատվերը, որ Մեր բոլոր պանդուխտ զավակները, բոլորն անխտիր, պահ մը կանգ առնեն և իրենց հայացքը ուղղեն դեպի մեր մոտավոր անցյալի անլույս անապատը, երբ հայու հոգին դարձեր էր, նահատակ բանաստեղծի խոսքերով՝ «այն երկինքը, ուրկէ հույսի բոլոր աստղերը թափեցան»։

Փա՜ռք Տիրոջը, և հազա՜ր փառք նաև մեր Ազգի ապրելու կամքին և կառուցելու հանճարին։ Հայե՛ր, ցնծացե՛ք և ուրախ եղե՛ք, զի այսօ՛ր, հայ ժողովուրդի կյանքի երկնակամարի վրա արևներ կշողան, և լույսի հեղեղ կիջնե խաղաղ, անվրդով, ամեն օր, ամեն ժամ՝ մեր վերածնած Մայր Երկրին վրա։

Օրհնությո՜ւն Հայոց խաղաղ աշխարհին։
Օրհնությո՜ւն հայոց արևին, լույսին։
Օրհնությո՜ւն հայոց նոր կյանքին։

Օրհնությո՛ւն հայոց շինող հանճարին։
Օրհնությո՛ւն հայոց պայծառ գալիքին։

Սիրելի՛ք Մեր, Փրկչի ծննդյան այս լույս առավոտուն և Նոր տարվան սեմին, այս Ս. Սեղանի առաջ, հավատքով զեղուն, ջերմագին կաղոթենք ձեր բոլորիդ կյանքին և երջանկության համար։ Թող բարին Աստված զձեզ բոլորդ անխտիր պահե, պահպանե քաջառողջությամբ, արևշատ երկար տարիներ, սիրով միաբան, արդար և սուրբ գործոց փառավոր հաջողությամբ։

Թող շեն մնան ձեր կեղեցիները, Թող շեն մնան ձեր դպրության օջախները, Թող շեն մնան ձեր աղգաշեն կազմակերպությունները։ Թող շեն մնան նաև ձեր տունները, և միշտ առատ ձեր սեղանները հացով ու լույսով։

Թող շեն մնա ու անսասան, միշտ լույսի մեջ, միշտ փառքի մեջ և միշտ խաղաղ, և միշտ աղատ երկիրը մեր Մայր հարազատ, աշխարհն Հայոց վերածնած։

Թող շեն մնա ու միշտ անշարժ՝ աղոթքի տուն, փրկության լաստ, հոգիներու կենաց աղբյուր, Հայոց Տաճար, սրբազնասուրբ էջմիածինը մեր ամենուն։

Հավատավոր հա՛յ ժողովուրդ, քեզ վերստին նոր ավետիս՝

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵԾԱՒ»

«Խաղաղությի՛ւն, խաղաղությի՛ւն, շնորհք և սէր Ս. Ծննդեան Փրկչին մերոյ եղիցին ընդ ձեզ հզօրիչ լոյս և առաջնորդ, այժմ և միշտ և յաւիտեան, ամէն»։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, նորակերտ Ավագ Ս. Սեղանի բեմի առաջ կատարվում է Ջրօրհնեքի, կամ ժողովրդական բացատրությամբ՝ «Խաչը ջուրը գցելու» մեծաշուք արարողությունը, ի հիշատակ Փրկչի մկրտության Հորդանան գետում, Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով։

Ջրօրհնեքի արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և «Տեր հոգի» մեծ շարականի երգակցությամբ, առաջնորդվում է Ծաղկյա դահլիճ, որտեղ բազմած Հայրապետական Գահի վրա, Ծննդյան տոնի առթիվ ընդունում է նշորհավորությունները Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի վերատեսչական և դասախոսական կազմի, վանքի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորությունների և հյուրերի։

Սուրբ պատարագին և Ծաղկյա դահլիճում ներկա էին երկու խումբ ուխտավորներ՝ Ֆրանսիայից և Սիրիայից։

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց Ազգն ու Եկեղեցին, ժողովուրդն ու Հայրենիքը և ողջ աշխարհին մաղթեց խաղաղություն և հաճություն։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատան մեջ, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները և այլ հրավիրյալներ սեղանակից եղան Վեհափառ Հայրապետին։

1010

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդս մեծ վշտով արձանագրում է Հայ Եկեղեցուց անջատված մի խումբ հայերի նրատարակած «Հայ Եկեղեցու տագնապը» վերնագիրը կրող 211 էջանոց անգլերեն գիրքը. Անթիլիասում տպված. որ գրի է առնված և օտար շրջանակների մեջ տարածված, Հայ Եկեղեցու շտեմների և հայ ժողովրդի ճշմարիտ ապրումների ու իղձերի հետ աղերս չունեցող նպատակներով:

Մուրով գրված այս սև գիրքը սկզբից մինչև վերջ լի է մեր Եկեղեցին ու ամբողջ մեր Ազգը վարկաբեկել փորձող անավոր զրպարտություններով և հանդիսանում է ամոթ հայի պատվավոր անվան համար:

Այս գիրքը մանավանդ է իր իսկ հեղինակներին, որոնք քաջությունը չունեն նրապարակ գալու իրենց իսկական անուններով:

Գերագույն Հոգևոր Խորհուրդս խոր վրդովմունքով դատապարտում է մեր օրերի այս սև գրքի հեղինակներին և կոչ է անում Սփյուռքի բոլոր հայ հոգևորականներին և համայն հայ հավատացյալներին՝ մնալ անսասան ու խաղաղ, և առավել լավատեսությամբ ու նվիրումով աշխատել՝ ի շինություն մեր բարեպաշտ ժողովրդյան հոգևոր կյանքի, ի միասնություն մեր Ս. Եկեղեցու և ի պայծառություն հավերժական Ս. Էջմիածնի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

28 հունվարի 1960 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՏՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԸ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԵՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ ՕԾՈՒՄԸ

Վեհափառ Հայրապետի հրավերով, 1959 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 14-ը Մայր Աթոռում էր գտնվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակությունը, որի կազմում էին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար գերհարգելի դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը, Արևելյան Ասիայի քրիստոնյաների կոնֆեդերացիայի գործադիր քարտուղար գերհարգելի Ջո Տանը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարի օգնական և Միջազգային հարցերի հանձնախմբի դիրեկտոր դոկտ. Օտտո Նոլդեն, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղարի օգնական և էկումենիկ գործունեության բաժնի դիրեկտոր, Անգլիկան եկեղեցու քահանա գերհարգելի Ֆրանսիս Հաուսը, էկումենիկ ինստիտուտի դիրեկտորի օգնական դոկտ. Նիկոս Նիսսիոդիսը և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի թարգման պր. Ալեքսանդր Դ. Վեյմարը։

Հյուրերին Մոսկվայից ուղեկցում էին Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահի տեղակալ հոգեշնորհ Տ. Նիկոդիմ վարդապետը, Լենինգրադի հոգևոր ճեմարանի դոցենտ արժանապատիվ Տ. Վիտալի քահանան, Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի անդամ պր. Վիկտոր Ալեքսեևը, Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի թարգման Ալեքսանդր Կապրալովը։

Մեծարգո հյուրերը Սովետական Միություն են եկել Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի հրավերով։ Մինչև Ս. Էջմիածին գալը նրանք այցելել են Մոսկվա, Լենինգրադ և Ռիգա։

Դեկտեմբերի 11-ի շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.30-ին Մոսկվա—Երևան ինքնաթիռը վայրէջք է կատարում Երևանի օդանավակայանում, բերելով իր հետ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատգամավորներին և նրանց ուղեկցող անձանց։

Հանուն Վեհափառ Հայրապետի, պատվիրակությանը դիմավորելու համար օդանավակայանում են Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Վրաստանի հայոց թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հ. Առաքելյանը։

Օդանավակայանում հյուրերին բարի գալստյան ճառով ողջունում է գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։ Շնորհակալության փոխադարձ ճառով հանդես է գալիս պատվիրակության ղեկավար գերհարգելի դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը։ Փոքր դադարից հետո մեծարգո հյուրերը առաջնորդվում են Երևանի «Արմենիա» հյուրանոցը։

Նույն օրը, ցերեկվա ժամը 12-ին, պատգամավորությունն ուղևորվում է Ս. Էջմիածին՝ պաշտոնական այցելություն տալու Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Կաթողիկոսին։

Հյուրերին Մայր Տաճարի բակում դիմավորում են Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը և Մայր Տաճարի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։ Պատվիրակությունը, նախքան Վեհարան մտնելը, այցելում է Մայր Տաճար, որի դռան առջև նրանց պատշաճ կերպով ընդունում է Մայր Աթոռի ողջ միաբանությունը, գլխավորությամբ լուսարարապետ սրբազանի։

Մայր Տաճարում աղոթելուց հետո, հյուրերը առաջնորդվում են Վեհարան, ներկայանալու Վեհափառ Հայրապետին, որը բարի գալուստ է մաղթում նրանց։

Պատգամավորության ղեկավար, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը պատգամավորության անունից շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար և ասում.

«Մենք, որպես հյուրը Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարքի, այցելեցինք Սովետական Միություն։ Մեր այցելության գերագույն նպատակը բարի է՝ ծանոթանալ երկրեցական կյանքին Սովետական Միության մեջ։ Այսօր մենք գտնվում ենք քրիստոնեության հնադարյան մի մեծ կենտրոնի մեջ։ Մեզանից ամեն մեկը գիտե Հայաստանյայց Եկեղեցին իր հնադարյան փառքի մեջ։ Մենք ուրախ ենք նաև, որ ոտք դնելով Հայաստանի հողի վրա, առիթ ունեցանք տեսնելու նաև տասնյակ տարիներով երազված սուրբ լեռը՝ բիբլիական ու հավերժական Արարատը, որի հովանու ներքև է գտնվում Ս. Էջմիածնի մայրավանքը։ Այստեղ Ձերդ Սրբության առջև խոնարհաբար պիտի ասեմ, որ հնադարյան Հայ Եկեղեցին իր մասնակցությունը մի քանի առիթներով բերել է եկեղեցիների համաշխարհային խորհրդի մեր նիստերին։ Մենք միշտ հաճույքով ենք հիշում Ձեր արքեպիսկոպոսներից Երուսաղեմի ներկայի պատրիարք Տիրան արքեպիսկոպոսի մասնակցությունը մեր ժողովներին։ Ցանկալի է նշել, որ մենք այստեղ, Սովետական Միության մեջ ականատես եղանք այն սիրալիր և

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

եղբայրական համագործակցությանը, որ գոյություն ունի քրիստոնեական եկեղեցիների միջև։ Մեր այցելության նպատակներից ամենակարևորն այն է, որ զորացնենք կապերը եկեղեցիների համաշխարհային խորհրդի և Հայ եկեղեցու միջև։ Մեզ համար ցանկալի է, որ Ձեր եկեղեցին իր մասնակցությունը բերի մեր խորհրդի նիստերին ընդհանրապես։

Նորին Ս. Օծությունը իր պատասխան խոսքում շնորհակալություն է հայտնում հյուրերին և պատգամավորության նախագահ դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտին՝ նրա Հայ եկեղեցու հասցեին արտասանած այնքան ջերմ խոսքերի համար.

«Մենք շատ երջանիկ ենք, որ Սովետական Միությունն այցելող բարձրաստիճան հոգևոր-



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՆՈՐԱԿԵՐՏ ՄԱՐՄԱՐՅԱ ԱՎԱԴ Ս. ՍԵՂԱՆԸ
(Աթոռվների գլուխների վրա դրվելու են մարմարե խաչկալ այուներ)

Ձերդ Սրբություն՝ ուզում տվեք կրկին շնորհակալություն հայտնել Ձեր հյուրընկալության և հյուրասիրության համար և որպես հիշատակ մեր այս այցելության, խոնարհաբար խնդրում եմ ընդունել այս փոքրիկ հիշատակը, նկարների այս ալբոմը։

Նորին Ս. Օծությունը

ական ներում Ձեր պատվիրակությունը ընդունեց Մեր առաջարկը ու եկավ նաև էջմիածին։ Անկեղծորեն, Մենք իրոք կսպասեինք, որ այս այցելությունը անպայման տեղի ունենար։ Մենք բոլորս քրիստոնյաներ ենք և ինչքան իրար լավ ճանչնանք և մոտենանք

իրարու, կխորհինք, թե այնքան ավելի օգտակար կըլլա Քրիստոնեական եկեղեցիին ընդհանրապես, և այնքան ավելի երջանիկ կըլլան ճոգիպես մեր եկեղեցիները: Մեծաճարգ դոկտ. Վիսսերտ դը Հուֆտ ակնարկեց իրավամբ՝ սովետական երկիրներու քրիստոնեական եկեղեցիներու սիրո ճարաբերություններուն: Իրոք որ Մեզ համար երջանկություն է, որ այնքան ջերմ բարեկամական ճարաբերություններ կան Ռուս Պրովոսլավ եկեղեցիի և մեր եկեղեցիի միջև: Մեր ցանկությունն է, որ նման բարեկամական ճարաբերություններ ճնարավոր չափով տարածվին բոլոր քրիստոնյա եկեղեցիներու վրա: Այս. մանավանդ այն պատճառով, որ մեր եկեղեցին՝ Հայ եկեղեցին ցրված կապրի աշխարհի մեջ: Մենք շատ ուրախ ենք, որ դոկտ. Վիսսերտ դը Հուֆտ ակնարկեց նաև այն սիրալիր ճարաբերություններուն, որ կան մեր և Անգլիկան եկեղեցիի միջև երուսաղեմ: Ուրախ ենք նույնպես, որ երուսաղեմի ճայոց պատրիարք Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան միշտ սերտ կապեր պահած է Ձեզ և Ձեր էկումենիկ շարժման ճետ: Մենք ճույս ունինք, որ մեր եղբայրական կապերը ճետզճետե ավելի կամրապնդվին ու արդյունավետ կդառնան, մեզ առավել զորացնելով իբրև եկեղեցի: Ձեր և մեր մտածումները և զգացումները իրար ճետ կնեռկաշնակվին և մեր աղոթքները միատեղ կբարձրանան առ Աստված: Անգամ մը ևս Մենք բարի գալուստ կմաղթենք Ձեզ բոլորիդ, և ճույս ունինք, որ ճանելի օրեր պիտի անցնեք մեր մեջ. Ս. էջմիածնի Մայր Տաճարի կամարներուն տակ, սուրբգրական Արարատի փեշերուն:

Բարի՞ եկաք, ճազա՞ր բարով, և Տերը մեզ օգնական»:

Պաշտոնական այս ընդունելությունից հետո հարգելի հյուրերը առաջնորդվում են Հոգևոր Ճեմարան և գրադարան, որտեղ նրանց ընդունում է Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արբահամյանը, իր հետ ունենալով մի քանի դասախոսներ: Սրբազանը անգլերեն լեզվով բացատրություն է տալիս հյուրերին Ճեմարանի ներկա վիճակի և նրա ապագա հեռանկարների մասին, մանրամասն ծանոթացնում է Ճեմարանի ուսումնական ծրագրին, որից հետո հյուրերը այցելում են դասարանները և լսում դասախոսություններ:

Ապա հյուրերը այցելում են Էջմիածնի ամսագրի խմբագրությունը, որտեղ խմբագիր Ա. Հատիտյանը բացատրություններ է տալիս հյուրերին ամսագրի հրատարակության, տպագրանակի և Մայր Աթոռի այլ հրատարակությունների մասին:

Հարգելի հյուրերը ապա առաջնորդվում են Մայր Տաճար, հանգամանորեն ծանոթանում նրա պատմության և ճարտարապետական առանձնահատկություններին, այցելում կան առանձնահատկություններին, այցելում կան եկեղեցական արվեստի թանգարան:

Հյուրերը ցանկություն են հայտնում տեսնելու նաև Էջմիածին քաղաքի մյուս սրբավայրերը՝ Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի եկեղեցիները և Զվարթնոցը: Տեղում հայ ճարտարապետության նշանավոր հուշարձանների մասին տրվում են համապատասխան բացատրություններ: Վկայարանները և Զվարթնոց եկեղեցու ավերակները դիտելուց հետո հարգելի հյուրերը վերադառնում են Վեհարան անմոռանալի տպավորություններով: Մանավանդ Ս. Հռիփսիմեի տաճարը, իր վերանորոգված վիճակում, հիացրել էր նրանց:

Ժամը 4-ին Վեհարանում, ի պատիվ հարգարժան հյուրերի, տրվում է ճաշկերույթ, որին, բացի հյուրերից, ներկա են լինում նաև Մայր Աթոռի միաբանությունը, դիվանապետը և խմբագիրը: Ճաշի ընթացքին Վեհափառ Հայրապետը կրկին բարի գալուստ է մաղթում հյուրերին և բաժակ է առաջարկում նրանց գործի հաջողության համար: Պատասխան խոսքում պատգամավորության նախագահ դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտն ասում է.

«...Նորից ևս կուզենայի ասել, որ մենք զգացված ենք Ձեր այս սիրալիր և քրիստոնեական ընդունելությունից: Ձերդ Սրբություն, որտեղ որ մենք լինում ենք, մեզ ընդունում են այնպես, որ կարծեք թե մենք մեր տանն ենք: Ձեր ընդունելությունը բացառիկ է մեզ համար. մենք հպարտ ենք, որ տեսանք սուրբ լեռը՝ Արարատը և Ս. Էջմիածինը: Ուրեմն թույլ տվեք խոնարհաբար բաժակ բարձրացնել Ձեր Եկեղեցու և անձամբ Ձերդ Սրբության կենացը»:

Ճաշկերույթն անցնում է սրտագին, ջերմ մթնոլորտում:

Նույն օրը երեկոյան, պատվարժան հյուրերը ներկա եղան Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի բալետի երեկոյին:

***

Կիրակի, դեկտեմբերի 13-ը, պատմական օր է Ս. Էջմիածնի միաբանության և հայ հավատացյալ ժողովրդի համար, որոնք այնքան հուզումով հետևում են Մայր Աթոռում տեղի ունեցող շինարարական նորություններին: Ավարտվել է Մայր Տաճարի Ավագ Սեղանի կառուցումը:

Ժամը 11-ն է: Օրվա պատարագիչն է մեր սիրելի և շինարար Հայրապետը:

Հայրապետական Քարոզը Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար։ Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ս. Սեղան, և հանդիսավոր ու հոգեպարար շարականներով ու աղոթքներով կատարում է Ավագ Սեղանի լվացման կարգը, ջրով ու գինիով, և ապա Սրբալույս Մյուռոնով օծում է Ս. Սեղանի նոր վեմը. «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի զգագաթն աստուածային Ս. Սեղանս...»։

Աստվա՜ծ իմ, որքա՜ն իմաստություն և ջերմություն կա մեր հոգևոր այս արարողություններին մեջ, որոնք միշտ իմաստավորել են հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր կյանքը և մխիթարել նրան։

Սկսվում է հայրապետական սուրբ պատարագը։ Դասերում տեղ են գտավել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակության անդամները իրենց ուղեկիցներով, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, մայրաքաղաքից եկած հյուրեր ու Մայր Աթոռի աշխարհական պաշտոնյաներ և բազմաթիվ հրավիրյալներ։

Մայր Տաճարը լեփ-լեցուն է աղոթողներով։

Ս. Սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Տիրայր վարդապետները։

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»։ Քարոզում է Վեհափառ Հայրապետը։

«Փա՜ռք քեզ, Աստուած, փա՜ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՜ռք քեզ»։

«Սիրելի՛ և մեծարգո ճյուռեր և սիրելի՛ հայ ժողովուրդ.

Այս Ս. Տաճարի բեմեն ձեզ բոլորիդ ավետիս կուտանք, որ ողորմությամբ Աստուծո, այսօր, կիրակի, դեկտեմբերի 13-ին. համի Տյառն 1959, արժանի եղանք Ս. Մյուռոնով օծելու ամենայն ճայոց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի այս Ավագ Ս. Սեղանը։

Օծեցինք և օրհնեցինք այս մարմարակերտ Ս. Սեղանը «վասն մեծի փառացն Աստուծոյ» և ի վայելումն հայ ժողովուրդի։

Զավակնե՛ր Մեր սիրելի, Մեզ համար այսօր ոչ միայն սովորական ուրախության և մխիթարության օր է, այլ մանավանդ խորունկ ճուզումներու պահ մը, երբ այս պատմական Տաճարի կամարներուն տակ կօրհնենք և կօծենք վերակառուցված Ս. Սեղանը։

Այսօր պատմական օր է Մեզի և համայն հայ ժողովուրդի ու Հայ Եկեղեցվո համար, որովհետև սովորական եկեղեցի մեջ չէ որ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ Ս. ՍԵՂԱՆԻ ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆ ՁԱՐԴԱՔԱՆԴԱԿՆԵՐԸ

կգանվինք և ոչ ալ սովորական եկեղեցի մը Ս. Սեղանն է որ օծեցինք, այլ հայ հավատքի կեդրոն, բոլոր հայ եկեղեցիներու Մայր հանդիսացող Միածնաէջ այս Տաճարի Ս. Սեղանը, զոր նախ Ս. Գրիգոր Լուսավորիչ օծեց և օրհնեց, որ ե դարի վերջերը, 481 թվականեն վերջ, հայրենասեր իշխան Վահան Մամիկոնյանի ձեռքով վերանորոգվեցավ և վերստին օծվեցավ և օրհնվեցավ վերակառուցված այս Ս. Սեղանը։ Ե դարեն ճետո մինչև մեր ժամանակները այս Ս. Տաճարը քանի՜-քանի անգամներ սրբապղծվեցավ և մասամբ քանդվեցավ և վերստին վերականգնվեցավ շնորհիվ Աստուծո ողորմության և հայ ժողովուրդի հավատքի, որ միշտ կանգուն և պայծառ պահեց այս Ս. Տաճարը։

Սիրելի՛ ժողովուրդ, երկար է մարտիրոսության պատմությունը այս Ս. Տաճարի, որովհետև երկար է պատմությունը հայ ժողովուրդի մարտիրոսության։ Անա թե ինչու Մեր սրտի խորքեն մեծ ճուզումով կկրկնենք. «Փա՜ռք քեզ, Աստուած, փա՜ռք քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փա՜ռք քեզ»։

Մեր վերաշինվող Հայրենիքի խաղաղ պայմաններուն մեջ, մեր բոլոր բարի շինարար

ուժերը հավաքած, կարողացանք վերակառուցել և այսօր օծումը կատարել այս նորակերտ Ս. Սեղոնի:

Այսուհետև մեր բոլոր աղոթքները, բոլոր հայ հավատացյալներու աղոթքները աշխարհի վրա ուր որ այ անհնք գտնվին, պիտի ուղղվին այս Ս. Սեղանին, վասն բարեբերության և վասն երջանկության հայ ժողովուրդի, վասն անսասանության և հառաջդիմության մեր վերածնած Մայր Հայաստանի, վասն խաղաղության ամենայն աշխարհի և վասն եղբայրակցության բոլոր եկեղեցիներու:

Ահա այստեղ են համաշխարհային էկումենիկ շարժման ներկայացուցիչները՝ Բուս Պրովոսլավ եկեղեցվո ներկայացուցիչները, եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի ներկայացուցիչները Ամերիկայի Միացյալ Նահանգներեն, Անգլիայեն, Հունաստանեն և Հեռավոր Արևելքեն:

Ահա եկեղեցիներ, որոնք այնքան տարածված են և այնքան մեծ ուժ մը կներկայացնեն աշխարհի մեջ:

Այս սուրբ առիթով մենք կոչուենք առնոնց ժամանումը այստեղ և կաղոթենք առ Աստված, որ մեր բոլոր բարի ցանկությունները իրականանան: Այդ բարի ցանկություններու շարքին Մենք կուզենք հիշատակել Մեր անկեղծ իղձը, որ իրականություն դառնա աշխարհի բոլոր քրիստոնյա եկեղեցիներու միջև եղբայրական սիրո և համագործակցության հաստատումը և ամրապնդումը: Եվ այս հանդիսավոր առիթով կկամենանք անգամ մը ևս հայտնել Մեր նույնքան անկեղծ իղձը, որ մեր Ս. եկեղեցին ևս, Հայ եկեղեցին հեռու չմնա այդ շարժումեն, և հետզհետե առավել սերտացնե իր բարեկամական կապերը եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հետ:



ՄԱՏՈՒ ՏԱՃԱՐԻ ԴԱՍԸ ԱՏՅԱՆԻՑ ԲԱԺԱՆՈՂ ՄԱՐՄԱՐՅԱ ՀԱՂՈՒՐԻ ԵՐԿԱԹՅԱ ԴՈՒՌԸ

Այս սուրբ պահուն Մենք մեծապես մխիթարված ենք, որ մեր մեջ կգտնվին բարձրաստիճան եկեղեցական հյուրեր աշխարհի բոլոր կողմերեն: Մենք չէինք նախատեսեր, որ Ս. Սեղանի օծումը պիտի զուգադիպի մեր հարգելի հյուրերու գալուն: Ուրախ ենք սակայն, որ այդպես եղավ:

Իբրև քրիստոնյա հավատացած ենք, որ ճնագարյան այս Ս. Տաճարը՝ էջմիածինը ոչ միայն հայ ժողովուրդի սրբությունը կճանդիսանա, այլ նաև իր պատմությամբ և ճարտարապետությամբ՝ համաքրիստոնեական հավատի և արվեստի կոթողը:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԻ ԱՐԾԱՎԸ

Մենք կնավատանք, որ համբերատար ու ենթակայական աշխատանքով, լավատեսության ոգիով և մանավանդ աշխարհի խաղաղության պայմաններու մեջ ժողովուրդները և եկեղեցիները պիտի կարողանան առավել մոտենալ իրարու, առավել հասկնալ զիրար, առավել եղբայրանալ ու գործակցիլ, առավել հաջողությամբ իրագործելու համար սուրբ նպատակներ և երազներ:

Թող Աստուծո օրհնությունը և մեր Տիրոջ սերը և խաղաղության ոգին իջնեն մեր բոլորի վրա և առաջնորդեն մեզ՝ ի մխիթարություն բոլոր ժողովուրդներու և ի պայծառություն բոլոր եկեղեցիներու: Ամեն»:

Քարոզից հետո շարունակվում է հայրապետական սուրբ պատարագը, որից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ միաբանության և հավատացյալ հայ ժողովրդի անունից լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին Ս. Սեղանի օծման առթիվ և մի անգամ ևս ոգեկոչում է հիշատակը Մայր Աթոռի մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի և նրա աղնիվ տիկնոջ, որոնց կտակով վերակառուցվել է Մայր Տաճարի Ավագ Սեղանը, այլ նորոգությունների հետ:

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է հիշատակը Կյուլպենկյան գերդաստանի, շնորհակալություն է հայտնում Ս. Սեղանի օծման առթիվ արտահայտված զգացմունքների համար, ապա օրհնում բոլոր ներկաներին:

Նույն օրը, հետմիջօրեի ժամը 2.30-ին, Վեհարանի ընդունելության սրահում տեղի է ունենում պաշտոնական խորհրդակցություն Վեհափառ Հայրապետի, Գերագույն Հոգևոր խորհրդի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվիրակության միջև: Ջերմ մթնոլորտում տեղի է ունենում մտքերի փոխանակություն Հայ Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի փոխհարաբերությունների և եղբայրական կապերի սերտացման մասին:

Խորհրդակցությունից հետո, ժամը 4-ին, ի պատիվ հյուրերի, կազմակերպված էր ճաշկերույթ Հոգևոր Ճեմարանի մեծ դահլիճում: Նախագահում էր Վեհափառ Հայրապետը: Բացի մեծարգո հյուրերից ներկա էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, վանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Ընդունելությունն անցավ ջերմ և սրտագին մթնոլորտում: Բաժակներ են առաջարկվում Վեհափառ Հայրապետի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ներկայացուցիչների, հայրենի կառավարության և նրա ներկայացուցչի, հովվապետների կենաց և ճառեր են փոխանակվում: Ճաշկերույթին մեջընդմեջ երգում էր Հոգևոր Ճեմարանի երգչախումբը: Բարեկամական և քրիստոնեական սիրալիր մթնոլորտում վերջացավ ընդունելությունը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ:

Ապա հյուրերը առաջնորդվում են Վեհարան՝ հրաժեշտ առնելու Վեհափառ Հայրապետից: Նորին Սրբությունը, խորապես հուզված, իր գոհունակությունն է հայտնում այս այցելության համար և բարձրաստիճան հյուրերին բարի ճանապարհ է մաղթում՝ ցանկանալով նրանց սուրբ գործին լիակատար հաջողություն: Եվ ի հիշատակ նրանց այս այցելության, նվիրում է Ս. Էջմիածնի պատկերներով արծաթյա ափսեներ, իսկ պատվիրակության ղեկավար գերհարգելի քարտուղարին՝ Ս. Էջմիածնի շրանկի մեծադիր պատկերը Արարատի ֆոնի վրա: Մի վերջին անգամ պատվիրակության անունից շնորհակալության խոսք է ասում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը և ապա ողջագուրվում է Վեհափառ Հայրապետի և ներկաների հետ, տանելով իր հետ Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի օրհնությունները:

Հաջորդ օրը, երկուշաբթի, սեպտեմբերի 14-ին, հյուրերը Երևանի օդանավակայանումն են: Նրանց ճանապարհելու համար եկել են Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տեր-յանը:

Հյուրերը հրաժեշտ են առնում ներկաներից և ժամը 10-ին ինքնաթիռը օդ է բարձրանում, տանելով իր հետ հյուրերին, որոնք մեկնում են լավագույն տպավորություններով:

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1959 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ երեկոյան, Վեհափառ Հայրապետը, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, միաբանության և ուսանողության համար դասախոսություն կարդաց «Մշակույթ և քաղաքակրթություն» նյութի շուրջ։ Դասախոսությունը լսվեց խորունկ ուշադրությամբ։ Վերջում վերատեսուչ Հայկազուն սրբազանը ջերմ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ նրա շահեկան և ուսանելի բանախոսության համար։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, երեկոյան ժամը 6.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո։

Երեկոյին ներկա էին Վեհափառ Հայրապետը և ամբողջ միաբանությունը։

Վերատեսուչ սրբազան հայրը իր բացման խոսքի մեջ հայտնեց, որ կազմվել է մի հանձնախումբ Հոգևոր Ճեմարանի ուսանողներից, որը պետք է յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ կազմակերպի գրական-գեղարվեստական երեկոներ։

Այս երեկոյին իրենց շարադրությունները կարդացին Ա. Մովսիսյանը (Բ լսարան)՝ «Գագիկի շինարարական աշխատանքների պատկերը Անանունի պատմության մեջ», Կ. Սուքիասյանը (Բ լսարան)՝ «Գագիկի կերպարը Անանունի պատմության մեջ»։ Կատարվեցին արտասանություններ, մեներգեր և նվագ։ Նվագը ղեկավարում էր Գ լսարանի ուսանող ուրարակիր Խորեն Հակոբյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, «Ցղուքիւն Ս. Աստուածածնի յԱննայէ»։ Օրվա տոնի առթիվ, Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի վրա, պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Ադրբեջանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ թեմական գործերով և ընդունվեցին Վեհափառ Հայրապետից։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 6.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, միաբանության և ուսանողության համար իր երկրորդ դասախոսությունը կարդաց Վեհափառ Հայրապետը «Մշակույթ և քաղաքակրթություն» նյութի շուրջ։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ՇԱԲԱԹ, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի տոնի օրը, սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Երդում էր Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, իրենց թեմերը վերադարձան Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Ադրբեջանի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 6.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, տեղի ունեցավ ուսա-

նողության հերթական երկրորդ հավաքույթը, նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանին։

Ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության մասին հետաքրքիր զեկուցում կարդաց Գ դասարանի ուսանող Արտաշես Վարդանյանը։ Գործադրվեց ճոխ հայտագիր բաղկացած արտասանություններից, մեներգերից և խմբերգերից։

Գրական երեկոյի փակման խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարի նորաձև Ավագ Ս. Սեղանի վրա պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ Գրիգոր Տաթևացու կյանքի, գործունեության և գրական վաստակի մասին, մեծ սուրբի մահվան 550-ամյակի կապակցությամբ։

Իր քարոզի վերջում սրբազանը սրտագին կոչ արեց Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության՝ լինել Գրիգոր Տաթևացու նման առաքինի, նախանձախնդիր, հավատավոր և գիտուն հոգևորական, լավագույնս ծառայելու համար Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❁❁❁

1960 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Կաղանդ և Տարեմուտ։

Նոր տարվա ուրախ առիթով Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, ծանրանալով ազգերի, մարդկային կյանքի մեջ ժամանակի արժեքի վրա և ապա բարեմաղթություններ արեց՝ հոգով պայծառացած և վերանորոգված շարունակելու ազնիվ աշխատանքը հոգուտ եկեղեցու, Հայրենիքի և հասարակության։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Մայր Տաճարում կատարվեց նաև Հայրապետական մաղթանք։

Նոր տարվա առթիվ Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց բազմաթիվ շնորհավորություններ։

❁❁❁

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Ճրագալույց Մենդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում հանդիսավորապես կատարվեց Ճրագալույցի արարողությունը։

Ճրագալույցի սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և քարոզեց որպես մեծ տոնի խորհրդի և նշանակության մասին՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» բնաբանով։

Ճրագալույցի սրբազան արարողություններին նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ, որից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարան։

❁❁❁

ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

❁❁❁

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաքիրյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ մեռելոց։

❁❁❁

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց լեխ պատմաբան, խեթերեն լեզվի խոշոր մասնագետ, ակադեմիկոս Բ. Գրոզնու աշակերտ դոկտ. Վլադիմիր Սոուչեկը։ Հարգելի հյուրը եղավ Մայր Տաճարում և եկեղեցական արվեստի թանգարանում և մեկնեց լավագույն տպավորություններով։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Լեհաստանի կարցերների միության պատվիրակությունը, որի կազմումն էին միության գլխավոր շտաբի անդամներ, «Դրուժինա» ժուռնալի խմբագիր Վլոդեկ Գժելյակը (պատվիրակության ղեկավար), միության միջազգային բաժնի վարիչ Ցաշեկ Կուբսկին և ուրիշներ։ Հյուրերը մեծ հիացմունքով դիտեցին Մայր Տաճարը, ծանոթացան նոր պեղումներին և եղան եկեղեցական արվեստի թանգարանում, որտեղ նրանց ընդունեց թանգարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը և ծանոթացրեց թանգարանում պահվող արվեստի հազվագյուտ նմուշներին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Սովետական Միության հետ բարեկամական կապերի Ռումինական ընկերության պատվիրակությունը, գլխավորությամբ ընկերության գլխավոր խորհրդի նախագահի տեղակալ Մարին Ֆլորա Յունեսկուի։ Հյուրերը մեծ հետաքրքրությամբ դիտեցին Մայր Տաճարը, եկեղեցական արվեստի թանգարանը և հետաքրքրվեցին Հոգևոր Ճեմարանով։ Հյուրերին ընդունեց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։





ՄԵԾՐ ԵԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՏՈՆԸ

Մեր օրացույցի մեջ նշված դեկտեմբերի 26-ը Եկեղեցու մեծ սուրբերից մեկի՝ Ս. Ստեփանոս նախասարկավագ և առաջին մեծ մարտիրոսի տոնն է։ Այս տոնը միաժամանակ տոնն է Մայր Աթոռի սարկավագների և Հոգևոր Ճեմարանի ուսանողության։

Ինչպես միշտ, այս տարի ևս, մեծ սուրբի հիշատակը արժանավայել կերպով տոնելու համար, սարկավագների ժողովը զբաղվեց նախապատրաստական աշխատանքներով։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը հրավիրվեց սուրբ պատարագ մատուցելու՝ Մայր Տաճարում Ս. Ստեփանոսի անունը կրող սեղանի վրա։ Օրվա տոնի հանդիսություններին որպես բուրվառակիրներ ընտրվեցին Հոգևոր Ճեմարանում եկեղեցական երաժշտության դասախոս արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանը և Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։ Սարկավագները, ըստ հարմարության, իրենց մեջ բաժանեցին օրվա տոնի առթիվ երգվելիք Օրհնության՝ «Նահատակ բարի Քրիստոսիս և. Հարցի՝ «Ընդ երկնային հոգեղինաց դասքն» շարականների մենակները։

Դեկտեմբերի 23-ին, ուրբաթ օրը ժամը 5-ին, Մայր Տաճարում, հավարտ երեկոյան ժամերգության, կատարվեց Ս. Ստեփանոսի նախատոնակը։ Հանդիսավոր արարողության մասնակցում են Ս. Էջմիածնի միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսանողությունը։ Մայր Աթոռի սարկավագները, հինավուրց Տաճարի կամարների տակ, վեհ և խորունկ ապրումով, մի անգամ ևս ոգեկոչում են նախավկա սուրբի հիշատակը՝ հոգեպարար շարականների կատարմամբ։

Դեկտեմբերի 20-ին, շաբաթ, առավոտյան ժամը 8-ին լսվում են Մայր Տաճարի զանգերի քաղցրահնչուն զողանջները։ Սկսվում է առավոտյան ժամերգությունը։ Հանդիսավոր ու վեհ է հնչում «Այսօր դասքն»-ը և բոլորի գիտակցության ու երևակայության մեջ կենդանանում ու պայծառանում է Քրիստոսի Եկեղեցու համար նահատակված, քրիստոնեական կրոնի անկուն մարտիրոսի պայծառ դեմքը։

Իշման Ս. Սեղանի առջև վեհափառ Հայրապետը, շրջապատված Ս. Էջմիածնի միաբաններով, նախագահում է եկեղեցական արարողությանը։

«Փառք ի բարձունս»-ից առաջ սարկավագները, զույգ-զույգ, հագնված տոնական սպիտակ շապիկներ, ըստ ավագության դուրս են գալիս Մայր Տաճարի հարավարևելյան ավանդատնից, բուրվառ և խնկի տապանակ ի ձեռին, սաղավարտ ի գլուխ, և շարվում են դեպի Իշման Ս. Սեղանը։ Հուզիչ է պահը և գեղեցիկ՝ տեսարանը։ Ծանր և հանդիսավոր երգվում է հրեշտակների փառաբանությունը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Սարկավագները միաբերան կարդում են «Աստուած մեծ» քարոզը, ապա «Նախասարկավագ և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս» Մանկունք շարականը։

Հանդիսութեան վերջում սարկավագները զույգ-զույգ մոտենում են Վեհափառ Հայրապետին, երեք անգամ խնկարկում և համբուրում իրենց հոգևոր ծնողի Ս. Աջը։

Ավարտված է առավոտյան ժամերգութիւնը։ Վեհափառ Հայրապետի դիմաքն են շարված տասնմեկ սարկավագներ՝ լսելու Հայրապետական պատգամը։ Խոր լռութեան մեջ խոսում է Վեհափառը իր սարկավագ զավակներին։

«Յաւել ի մեզ, Տէ՛ր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»։

«Սիրելի՛ սարկավագներ.

Այս աղոթքը դուք մտնելանդ այսօր պիտի արտասանեք բացառիկ խոր ապրումով մը, այսօր, երբ մեր եկեղեցին կոռնեն հիշատակը Ս. Ստեփանոսի։

Ս. Ստեփանոսի սանը առավելապես ձեր տոնն է, վասնզի, ինչպես գիտեմ, ան եղավ առաջին սարկավագը քրիստոնեական եկեղեցիին։ Առաջին սարկավագը, առաջին վկան, առաջին մարտիրոսը։ Անա հոգևոր փառքի տիտղոսներ, որոնք կպատկանին Ս. Ստեփանոսին։ Այս տեսակետեն ոչ ոք կհավասարի անոր և ոչ ոք կգերազանցի զայն։

Ս. Ստեփանոսի հոգին լի էր հավատքով, հույսով ու սիրով և իր կյանքը նույնքան լի էր առաքինի գործերով։ Երբ քրիստոնեական կանոնները լեռներ շարժեց, և երբ որ շարժեց, մարդու հոգին պայծառակերպող և մարդկության պատմությունը նեղությունով



ՄԱՅՐ ԱՔՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ

նոր ուխտը հաստատողներու մեջ, առաջիններեն եղավ Ս. Ստեփանոս։

Լեռներ շարժող հավատքի պատմական առաջին ապացույցը տվողը հանդիսացավ Ս. Ստեփանոս, իր կյանքի գործերով և մանավանդ իր նահատակությամբ։ Ս. Ստեփանոսի մանը ապացույցը եղավ Քրիստոսի հարության։

Ս. Ստեփանոս նալածվեցավ իր հավատքին համար և դատարանի առաջ բերվեցավ։ Հալածիչները հարց տվին իրեն, թե ինչ է իր հավատքը։

Ս. Ստեփանոս, բյուրեղյա պայծառությամբ և սրբազան քաջությամբ մը, խոս-

տովանեցավ իր հավատքը հոյակապ ճառով մը, որ հոգեոր ճշմարիտ ապրումի և բարոյական նկարագրի գլուխ-գործոց մրն է: Իր անարդար դատավորները, սակայն, զինքը Խարկոծեցին ու Ստեփանոս մեռավ, հավետ ապրելու համար:

Ահա հանի մը խոսքով կյանքի պատմությունը և մեծ խորհուրդը Ս. Ստեփանոս նախասարկավագին, որուն տիտղոսը դուք ևս կկրեք, սիրելի՛ սարկավագներ:

Դուք կոչված եք նմանելու Ս. Ստեփանոսին հավատքով, հույսով, սիրով և առաքինի գործերով:

Դուք կոչված եք այս երկրավոր կյանքը սպրելու Ս. Ստեփանոսի տեսիլքով: Դուք կոչված եք ծառայելու մեր Ս. Եկեղեցիին, Ս. Ստեփանոսի նվիրվածությամբ:

Սիրելի՛ սարկավագներ, այսօր ձեզ հայածողներ չկան, սակայն կրնա պատահիլ, և այդ շատ բնական է, որ ձեզ հարց տվողներ լլլան, թե ինչո՞ւ կապրիք այս սև սքեմի տակ, ի՞նչ է ձեր ուխտը և ի՞նչ բանի կհավատամ դուք:

Նույն պայծառությամբ դուք պիտի խոստովանիք՝ «ես կհավատամ մեր Փրկչի սիրո և խաղաղության Ս. Ավետարանին»:

Նույն հաստությամբ դուք պիտի խոստովանիք՝ «ես կհավատամ Ս. Էջմիածնին ու անառարաբելության անցյալի մեջ, ներկայիս և ապագային»:

Նույն հոգեոր հպարտությամբ դուք պիտի խոստովանիք՝ «ես կհավատամ Ս. Մեսրոպին, հայ լեզվին և հայ մշակույթին»:

Նույն անխախտ համոզումով դուք պիտի խոստովանիք՝ «ես կհավատամ իմ ժողովուրդին և իմ Հայրենիքին, մարտիրոսացած, բայց վերածնած հայ ժողովուրդին ու Մայր Հայաստանին»:

Եվ վերջապես նույն համեստությամբ և անձնվիրությամբ դուք պիտի խոստովանիք՝ «ես կհավատամ իմ ուժերուն, իմ աշխատանքին, զոր ուխտած եմ ի սպաս դնել Հայաստանյայց Եկեղեցիին և հավատավոր Հայ Ազգին, այժմ և միշտ»:

Ահա՛ մեր օրերու ձեր Հավատամքը: Ահա՛ այն ոգին, որ պետք է լուսավորե ձեր հանապարհը, որով դուք պիտի առաջնորդվիք ու գործեք: Եվ ահա՛, թե ինչո՞ւ այսօր, երբ դուք կվառավորեք Ս. Ստեփանոսը, պետք է ջերմապես աղոթեք և միշտ հայցեք՝ «Յամել ի մեզ, Տէ՛ր ամենակալ, գեհաւտ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սիրելի՛ և բարեշնորհ սարկավագներ, շնորհավորելով ձեր տոնը, ի սրտե կմաղթենք ձեզ զորություն մարմնո և հոգվո, լիառատ շնորհք և աստվածային օրհնություն, ամեն»:

Ժամը 10.30-ին սկսվում է սուրբ պատարագը: Ճեմարանի սաները երգում են Մ. Եկմալյանի պատարագը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը քարոզում է «Ստեփանոս այր լի շնորհօք և զօրութեամբ» բնաբանով, մի անգամ ևս ոգեկոչելով Ս. Ստեփանոսի հիշատակը:

Հավարտ սուրբ պատարագի սարկավագների խումբը, Մայր Տաճարի լուսաբարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի և գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի առաջնորդությամբ, բարձրանում են Վեհարան: Վեհափառ Հայրապետը օրհնում է սարկավագներին «Պահպանիչ»-ով, ապա նվերներով շնորհավորում սարկավագների տոնը:

Ժամը 2.30-ին, վանքի ընդհանուր սեղանատան մեջ, տրվում է ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների: Ճաշին ներկա են միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսներ և վանքի պաշտոնեությունը:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Սեղանի վրա առաջինը խոսք է առնում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, որը բաժակ է բարձրացնում նախ Վեհափառ Հայրապետի թանկագին կենացը, և ապա հանուն միաբանության, սրտագին շնորհավորում է սարկավագների տոնը:

Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսում է մարդկային կյանքի չորս հանգրվանների, այն է՝ մանկության, պատանեկության, երիտասարդության և ծերության վրա, և իր խոսքը մասնավորելով սարկավագներին, ասում է. «Այսօր մեր երիտասարդների տոնն է, որոնք գիտակցելով իրենց կոչման, մտել են այս սուրբ ասպարեզի մեջ և իրենց վրա են վերցրել Քրիստոսի քաղցր լուծը»: Ապա սրբազանը հաջողություն է մաղթում նրանց՝ իրենց վանական կյանքի ապագա գործունեության մեջ, լավագույնս ծառայելու Մայր Աթոռին: Սարկավագների խումբը երգում է «Նախասարկաւագ» շարականը:

Հոգևոր Ճեմարանի դասախոս պր. Արթուն Հատիտյանը, իր խոսքն ուղղելով սարկավագներին, թելադրում է նրանց լինել հավատավոր, աշխատասեր և իրենց կյանքով ու գործունեությամբ նմանվել Ս. Ստեփանոսին և մեր նախնի սուրբ հայրապետներին՝ լավագույն կերպով սպասարկելու համար Ս. Էջմիածնին, Հայաստանյայց Եկեղեցուն և հայ ժողովրդին: Ապա մաղթում է

նրանց ունենալ Ստեփանոսի հավատը և Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետների մշակույթի սերը և գիտությունը։ Սրտագին կոչ է անում՝ զբաղվել մեր եկեղեցական մատենագրության ուսումնասիրությամբ, որտեղ մշակույթի բազում գանձեր կան թաղված և որոնք սպասում են գուրգուրոտ ձեռքերի և չերմ սրտերի՝ լույս աշխարհ գալու համար։

Բարեշնորհ Վարդան սարկավագ Շամլյանը ընթերցում է իր ինքնագիր կրոնաշունչ բանաստեղծություններ՝ Ս. Ստեփանոսի տոնի առթիվ գրված։

Ճաշի վերջում, ի դիմաց սարկավագների, շնորհակալության և երախտապարտության խոսք է ասում բարեշնորհ Հովհաննես սարկավագ Եղիայանը։

Երբ ճաշը մերձ էր իր ավարտին, Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնորհավորելով սարկավագների տոնը, հորդորում է նրանց, որ հաստատ մնան իրենց ուխտի վրա և մի անգամ ևս վերանորոգեն իրենց խոստումը պայծառ գիտակցությամբ, անկաշառ և անպայմանավոր կերպով ծառայելու հավիտենական Ս. Էջմիածնին, հայ ժողովրդին և Մայր Հայրենիքին։

Վերջում բոլորը երգում են Մայր Աթոռի հոգևոր հիմնը՝ «Էջ Միածին է Հօր» շարականը և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ավարտվում է Մայր Աթոռի սարկավագներին ի պատիվ տրված այս ճաշկերույթը։

ՂԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՆԼԻՑԱՆ

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ

Հինգշաբթի է, դեկտեմբերի 31-ը։

1959 թվականի վերջին օրը։ Տոնական տրամադրություն և եռուզեռ կա Մայր Աթոռում և Հոգևոր Ճեմարանում, որտեղ վերջացել են առաջին եռամսյակի քննություններն ու ստուգումները գոհացուցիչ արդյունքներով և բոլորը, վերատեսուչ ու դասախոս, միաբան և ուսանող, հաճելի փութկոտությամբ և իրենց պարտքը կատարած մարդկանց գոհունակությամբ, պատրաստվում են ճանապարհելու 1959 թվականը, որը Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի համար իրապես եղավ արդյունաշատ տարիներից մեկը, և սրտագին խոհերով ու հույզերով, խաղաղ խճմտանքով դիմավորելու Ամանորը՝ 1960 թվականը։

Տարվա վերջին օրը անցնում է է՛լ ավելի արագ, նոր տարվա հանդիսության նախապատրաստական աշխատանքների հետևանքով։

Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց մեծ սրահում պատրաստվել է արդեն ամանորի ավանդական սեղանը։ Հայրենի երկրի բարիքներով ծանրաբեռնված սեղանի շուրջ տեղ են գրավել Մայր Աթոռի ամբողջ միաբանները, Հոգևոր Ճեմարանի դասախոսներն ու ուսանողները, վանքի պաշտոնյաներն ու աշխատողները, մոտ 150 հոգի։

Ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներով, Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանի առաջնորդությամբ մուտք է գործում դահլիճ և ընդունվում ջերմ, սրտագին ծափերով։

Ամանորի սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Ապա հոտնկայս ունկնդրվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագը, որից հետո ուսանողական երգչախումբը կատարում է Մայր Աթոռի հիմնը՝ «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմագին, կրոնաբույր և հայրենասիրական մթնոլորտ։

Վերատեսուչ սրբազանը առաջինը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի նոր տարին.

«Վեհափառ Տեր.

Հավաքված ենք դարձյալ սեղանի մը շուրջը, որ փակումն է անցյալի սեղաններուն և բացումը՝ ապագայի նոր կյանքի։ Այս պահուս միտքս կուգա սա գեղեցիկ խոսքը. «Զի՞նչ տաց տրիտուր Տեառն. ի՞նչ պիտի տամ Տիրոջը Իր տվածին փոխարեն։

Արդարև, երբ մեկը պահ մը առանձնանա և իր խղճմտանքի հետ հաշվի նստի, այն բոլոր բարիքներուն համար, որ վայելած է, ինքնաբերաբար պիտի կրկնե իր միտքեն՝ «Այս ամենուն փոխարեն ես ի՞նչ պիտի տամ Տիրոջը։ Անսահման են Աստուծո պարգևները մեզ համար, որոնց թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես պետք ունինք մեր աստենական կյանքին մեջ։

Տարի մըն ալ անցավ մեր կյանքեն։ 1959 թվականը քանի մը ժամ վերջը պատմության պիտի պատկանի։ Կարժե որ կենանք պահ մը, ընելու մեր հաշվեհարդարը մեր անցուցած օրերուն հետ. «Զի՞նչ տաց տրիտուր Տեառն»։

Ահա այս պահուս, կեցած այդ հանդրվանի վրա, հարց կուտանք մենք մեզի. «Երեկ ի՞նչ ըրինք և վաղը ի՞նչ պիտի ընենք»։ Մեր կյանքի կշիռքը դրված է մեր խղճմտանքի առաջ։ Մենք որոշապես կտեսնենք այդ կշիռքին զույգ նժարները։ Եթե ծանր կկշռեն մեր բարի և ազնիվ գործերը, հօգուտ մեր եկեղեցիին, մեր ժողովուրդին, որքա՞ն երջանիկ կզգանք մենք զմեզ և բախտավոր, և դեռ որքա՞ն կարող ենք վայելել, հանգարտ խղճմտանքով, այսօրինակ սեղաններ։ Իսկ եթե ծանր է մեր թերություններու և տկարություններու նժարը, այն ատեն պիտի ունե-

նանք հոգեկան տանջանք մը, որ պիտի ալեկոծե մեր խղճմտանքը, և ո՛չ սեղաններ, ո՛չ զվարճություններ պիտի կարողանան ամոքել և թեթևցնել մեր խղճմտանքի վրա ճնշող այդ անտանելի ծանրությունը։

Նոր տարվան սեմին, այս գեղեցիկ պահը ճիշտ ժամանակն է հաշառիկա մեր մնացած օրերու համար, որոշելու մեր կյանքի ուղին ըստ ավետարանական բանին. «Տալ զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ»։ Այս պիտի ըլլա մեր ժամանակներու գերագույն ուխտը։

Այս առաջադրությամբ, հանուն Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմին և ուսանողության, կշնորհավորեմ Ձերդ Ս. Օծության Նոր տարին, սրտագին մաղթանքներով, ինչպես նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամներու և պատկառելի միաբանակից եղբայրներուս և բոլոր պաշտոնյաներուն ամենքը, այն բոլոր զոհողություններուն համար, որ կրնան Հոգևոր Ճեմարանի համար։

Կաղաթենք առ Աստված, որ պարգևէ Ձեզ, Վեհափա՛ռ Տեր, երկար և քաջառողջ կյանք, արևոտ օրեր, որպեսզի Դուք տեսնեք Ձեր փափագներու իրականացումը, ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, ի ծաղկումն Մայր Հայրենիքի։

Այս պահուս մեր ամենուն սիրտը կլեցվի ուրախությամբ և հպարտությամբ, ու մենք կկրկնենք շարականագրին հետ. «Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ, ի յարմատոյն Յեսսեայ բղխմամբ գաւազանի հասեալ ժամու, շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զքեզ, Տէր, այժմ և յաւիտեան»։ Ամեն։

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը, սրտագին ծափերի զվարթ հնչյունների տակ։

Մայր Աթոռի հովանու ներքո և Վեհափառ Հայրապետի նախագահության տակ կազմակերպված ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, ընտանեկան մթնոլորտ։

Նոր տարվա խոհերով և գալիք պայծառ օրերի լավատեսությամբ համակված, ոտքի է կանգնում Վեհափառ Հայրապետը՝ բաժակ բարձրացնելու հաջորդաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության, Մայր Հայրենիքի և նրա իմաստուն ղեկավարների, Հայաստանի և Սփյուռքի հայ ժողովրդի կենաց։ Կաղանդի գիշեր, Նոր տարվա սեմին, ջերմ հավատով, պայծառ լավատեսությամբ են հնչում Վեհափառ Հայրապետի խոսքերն ու խորհրդածությունները, որոնք տպավորվում են մի անգամ ևս խորապես բոլոր ներկաների մտքում և սրտում՝ համակելով նրանց Հայ Եկեղեցու, Հայրենիքի, մեր ժողովրդի հայրապետական ապագայի խանդավառ հեռանկարներով։ Ամբողջ դահլիճը մեկ մարդու պես ոտքի կանգնած ծափահարում է, բաժանելով Վեհափառ Հայրապետի խոհերն ու զգացումները։

Հավաքույթի ընթացքում գործադրվում է նաև գեղարվեստական ճոխ մի հայտագիր։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը հաջողությամբ կատարում է «Էջ Միածին ի Հօրէ», «Որք զարդարեցին» շարականները, «Սեղանն է առատ», «Միրանի ծառ», «Սոնա յար», «Անձրևն եկավ», «Ամեն հայի սրտից բխած» խմբերգերը։ Բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը, Պետրոս սարկավագ Բերբերյանը, Հակոբ սարկավագ Մոզապալյանը, իրենց մեներգերով խանդավառություն են ստեղծում սեղանների շուրջ։ Բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը (Վ. Թեքեյան—«Հաշվեհարդար»), Բ լսարանի ուսանող Հակոբ Գյոքչյանը (Հովհ. Թումանյան—«Սուտիկ որսկանը»), Ա լսարանի ուսանող Կարապետ Սերայդարյանը (Վ. Դավթյան—«Ջահել աշխարհ»), Գ դասարանի ուսանող Հովհաննես Աշչյանը (Հովհ. Հովհաննիսյան—«Նոր տարվա երգ»), Ա դասարանի ուսանողներ Դավիթ Դիլանյանը (Եղիշե Դուրյան—«Աղոթք Տերունական») և Աբրահամ Մազլումյանը (Վ. Սարգսյան—«Թեթև ուզում եմ») ապրումով կատարած արտասանություններով ներկաներին բերում են նոր հույզեր, նոր խոհեր, անվերջ ծափեր խլելով։

Գ լսարանի ուսանող բարեշնորհ Հակոբ սարկավագ Գարաճյանը, ի դիմաց սարկավագների, կարդում է հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր.

Թույլ տվեք ինձ, Նոր տարվա այս ուրախ և հանդիսավոր տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սարկավագների անունից շնորհավորել Ձերդ Վեհափառության Նոր տարին։ Այսօր, Ձերդ Վեհափառության հայրական սիրալիր ներկայությամբ, կրկին համախմբված ենք ավանդական այս սեղանի շուրջ՝ հրաժեշտ տալու անցնող հին՝ 1959 տարվան և նոր հեռանդով ու խոհերով, նոր հույզերով դիմավորելու նոր՝ 1960 տարին։

Այս անցնող տարվա ընթացքում մենք, Մայր Աթոռի ուսանող սարկավագներս, Ձեր հոգևոր որդիները, չնայած Ձեր այնքան զբաղված վիճակին, մյուս տարիներից ավելի վայելեցինք Ձերդ Ս. Օծության հայրական խնամքը, որի շնորհիվ աճեցին մեր հոգեկան և իմացական կարողությունները։

Այս բոլորի համար, Վեհափառ Տե՛ր, սարկավագների անունից հայտնում եմ մեր որ-

դիական անհուն երախտագիտություն ու շնորհակալություն։ Մեր շնորհակալությունն եմ հայտնում նաև Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազան հոր, վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես հոր, որոնք դեկավարում են ուսանողությանը և հսկում նրանց վրա, իրենց ամբողջ ջանքերն ի գործ դնելով նրանց հոգևոր, իմացական և բարոյական դաստիարակման վեհ գործի համար։

Ջերմագին շնորհակալություն նաև մեր սիրելի և անխոնջ դասախոսներին, որոնք իրենց ամբողջ եռանդն ու կարողությունը չեն խնայում աճեցնելու և հարստացնելու մեր միտքն ու հոգին։

Կաղոթենք, որ Աստված երկար կյանք, քաջառողջություն և արեշատություն պարգևի Ձեզ, մեր սիրելի և աստվածարյալ սուրբ Հայրապետ։

Շնորհավո՜ր նոր տարի։

Գ դասարանի ուսանող Վռամշապուհ Ճիհանյանը, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի ուսանողության, կարդաց հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տե՛ր,

Խորհրդավոր շատ պահեր կան մարդկային կյանքում, որոնցից մեկն էլ այս պահն է։ Մենք սրտի անհուն թրթիռով հրաժեշտ ենք տալիս անցնող տարվան։ Այսպիսի մի խորհրդավոր վայրկյանում ծնվեց հին տարին, և այժմ, մեկ տարի անցած այդ պահից, գնում է հավիտենականության գիրկը՝ մարդկային պատմության մեջ թողնելով անջնջելի հետքեր։

Վեհափառ Տե՛ր, ես անչափ երջանիկ եմ զգում ինձ, ներկա լինելու Ամանորի այս հանդիսավոր տոնակատարությանը այստեղ, այս նվիրական հարկի տակ, Ձեր թանկագին ներկայությամբ, և չեմ կարող իմ և իմ ուսանող եղբայրների սրտագին երախտիքները չհայտնել Ձերդ Սրբությանը, Ձեր հայրական հոգատար վերաբերմունքի համար դեպի ուսանողներս։ Որպես տրիտուր այդ հոգատարության, մենք, Հոգևոր Ճեմարանի սաներս, միայն պետք է լավ սովորենք, որպեսզի արդարացնենք մեր վրա դրված հույսերը։

Վեհափառ Հա՛յր, մեր ժողովրդի նվիրական զգացմունքների ներկայացուցիչն եք Դուք, որ Ձեր ձայնը բարձրացրիք հանուն խաղաղության պաշտպանության, Ձեր անխոնջ աշխատանքը այդ գործում դնահատվեց ըստ արժանվույն, սակայն մեր սրտագին բարեմաղթություններն ու իղձերն են՝ տեսնել զարդարված բազմաթիվ շքանշաններով Ձերդ Վեհափառության կուրծքը, որի տակ բաբախող սիրտը հավասարապես պատկանում է թե՛ հայության և թե՛ բոլոր ազնիվ մարդկանց։

Օգտվելով այս ուրախ առիթից, այս սուրբ հաստատության մեջ սովորող ուսանողության անունից ջերմ երախտիքներ եմ հայտնում նաև մեր սրբազան վերատեսչին ու դասախոսական կազմին, մաղթելով երկար կյանք, եռանդ ու ավյուն, և միաժամանակ շնորհավորում եմ նրանց նոր տարին։

Շնորհավո՜ր նոր տարի նաև Հայրենիքից հեռու, օտար հորիզոններում, Հայրենիքի ջերմ կարոտը սրտներում ապրող հայ եղբայրներին։ Տա՜ Աստված, որ նրանք հաջորդ նոր տարիները դիմավորեն Հայրենի հողում, Հայրենի կառավարության ու Ս. Էջմիածնի հովանու ներքո։

Թույլ տվեք մի անգամ ևս շնորհավորել Ձեր Նոր տարին, Վեհափառ Տե՛ր, և ի դիմաց իմ ուսանող եղբայրների՝ մատչիլ ի համբույր Օծյալ Ձեր Ս. Աչույնս»։

Ա դասարանի ուսանողներ Աբրահամ Մազլումյանը, Կառլեն Այվազյանը, Եղիշե Բաղրամյանը ներկայացրին մի կենդանի պատկեր Նոր տարվա առիթով, արժանանալով ջերմ ծափերի։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծված ուրախությունը խորանում էր գիշերվա ժամերի հետ միասին, որոնք անցնում էին թեև արագ, բայց հաճելի և բովանդակալից։

Գիշերվա ժամը 12-ն է արդեն։ Մի պահ սրահում հանգում են լույսերը։ Խոր լռության մեջ լսվում է Երևանի կառավարական շենքի ժամացույցի զարկը՝ 12։ Անցել է հին տարին։ Ահա և 1960 թվականը։ Առաջինը խոսում է Երևանը, Հայրենիքը։ Շնորհավոր քո Նոր տարին՝ մեր սիրելի ու պաշտելի Հայրենիք։ Շնորհավոր և քո Նոր տարին՝ բարի և արի, հավատավոր և աշխատասեր հայ ժողովուրդ։

Վառվում են Նոր տարվա առաջին լույսերը՝ պայծառ, ջերմ և կենսատու։ Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը և հոգեշնորհ Տ. Հարությունվարդապետ Մատենճյանը ոտանավորով բովանդակալից «գաղանդչեքներ» են բաժանում միաբաններին, դասախոսներին, ուսանողներին, խորունկ հետաքրքրություն ստեղծելով։ Ապա ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ, երգի ու բարեմաղթությունների զվարթ հնչյունների տակ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ իր Հայրապետական օրհնությունը և պատգամը տալու համար։

Վեհափառ Հայրապետի պատգամը, հավատով և լավատեսությամբ ջերմացած, խանդավառ և համոզիչ շեշտով արտասանված, խորապես տպավորվեց բոլոր ներկաների սրտերում և հիշողության մեջ ու գոտե-

պնդեց բոլորին՝ Մայր Աթոռի միաբան թե ուսանող, դասախոս թե պաշտոնյա, ծառայող թե մշակ, ձեռք-ձեռքի տված աշխատելու ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի շինություն Մայր Հայրենիքի։

Իր պատգամի վերջում Վեհափառ Հայրապետը նորից սրտագին բարեմաղթություններ արեց Մայր Աթոռի անսասանության, մեր Հայրենիքի հզորության և աշխարհի խաղաղության համար։

Ուշ գիշերին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ Նոր տարվա առթիվ կազմակերպված ընդունելությունը Մայր Աթոռի հովանու տակ, Հոգևոր Ճեմարանում։

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՄԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 13-ին, չորեքշաբթի, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց մեծ դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի 1958—1959 ուսումնական տարվա Գ լսարանի չորս շրջանավարտների վկայականների բաշխման հանդեսը։ Ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը։ Այստեղ էին նաև Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

Հանդեսը սկսվեց «Որք զարդարեցին» շարականով, որից հետո, հանդիսավոր իրադրության մեջ, իր բովանդակալից «Հուսկ բանք»-ով հանդես եկավ վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը.

«Վեհափա՛ռ Տեր, սրբազա՛ն և հոգեշնո՛րհ հայրեր և սիրելի՛ ներկաներ.

Այս հանդիսավոր պահուն, որքա՜ն իմաստալից են Մատթեոսի Ավետարանի սա խոսքերը. «Հունձք բազում են, և մշակք սակաւ. արդ, աղաչեցէք զտէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւրս։ Այլաբանորեն ըսված այս խոսքը կուղղվի Ավետարանի ճշմարիտ քարոզիչներուն, որոնց պետքը այնքան զգալի էր այդ օրերուն։ Ճշմարիտ չէ՞ արդյոք այս խոսքը՝ մեր օրերու համար ալ, երբ աշխարհի ամեն կողմը տարածված հայ հավատավոր ժողովուրդը կարիքը ունի իրական արժանավոր մշակներու։

Հայաստանյայց եկեղեցին, որ գրեթե երկու հազար տարիներու հոգևոր կազմակերպություն մըն է, հակառակ իր այնքան տագնապալից օրերուն, անսայթաք քալած է միշտ հայ ժողովուրդին հետ, երբեմն ցնցոտիներ հագած, մերթ վայելուչ պատմուճաններ, սակայն երբեք չէ կորսնցուցած իր հոգեկան բյուրեղ մաքրությունը, շնորհիվ այն մշակներուն, որոնք իմաստուն կերպով գիտցած են իրենց ժամանակին «տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։ Պատի՜վ և փա՜ռք բոլոր այդ անմահ հոգիներուն, որոնք առաջնորդեցին հայ ժողովուրդը «առ չուրս հանգստեանն»։

Ուրախության և գոհունակության պահ է մեզ համար։ Մեր առջև կեցած են ահա Հոգևոր Ճեմարանեն չորս շրջանավարտներ, գրած իրենց ձեռքը մաՀին վրա։ Այս չորս ուսանողները մարմնական սնունդ, հոգևոր

կրթություն, լույս և հավատք ստացան այս սուրբ հաստատության մեջ և անոնց հոգին, օրերու հետ միասին, լեցվեցավ լույսովը այն մաքուր կանթեղին, որուն ձեթը, ինչպես կրսե շատ գեղեցիկ կերպով մեր անմահ բանաստեղծը Թումանյան, հայ ժողովուրդին արցունքն է։

Հայ ժողովուրդի արցունքով լուսավորված այս հոգիները ունին գերագույն պարտք մը դեպի այդ ժողովուրդը, այն է՝ հատուցանել ինչ որ ստացան անկե, ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։

երջանիկ պիտի ըլլանք ամենքս ալ, երբ դուք լավագույն կերպով գիտնաք արժանավորել զանոնք։ Հետևեցե՛ք մեր նախնի եռամեծ վարդապետներու մեծ հոգիներուն, ունեցե՛ք անոնց մաքուր և անսասան հավատքը, սիրեցե՛ք մեր ժողովուրդը և Հայրենիքը, և դուք արդեն վարձատրված կըլլաք թե՛ Աստուծմեն և թե՛ հայ ժողովուրդեն։ Ապրեցե՛ք մաքուր, կրոնավորի մը վայել կյանքով, զամվեցե՛ք ձեր աշխատանքի սեղաններուն, և թող երբեք չմարի ձեր մեջ ուսանելու և ուսուցանելու սերը։

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՎԵՐԱՏԵՍՑԻ ՀՆՏ

Իմ սիրելի՛ ուսանողներ, դուք, որ կարժանանաք այս վկայականին, այն թող չշլացնե ձեզ. այդ պաշտոնական թուղթ մըն է լոկ։ Այն կոչումը, որուն դուք արժանացած եք, մեծագույն վկայականն է ծառայության մեր հավատավոր ժողովուրդին, որ կսպասե ձեր յուրաքանչյուրի հոգիին մեջ տեսնել իսկական և քաջ հովիվը, որ կդնե իր անձը իր հոտին վրա։

Երջանիկ կզգամ ես ինքս, թերևս ամենեն ավելի, երբ իմ վերատեսչության օրով դուք կստանաք ձեր վկայականները։ Բայց որքա՜ն

Այս հանդիսավոր առիթով իմ, ինչպես նաև Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմի և ամբողջ ուսանողության կողմեն, կշնորհավորեմ ձեզ, ձեր այս շատ երջանիկ պահուն։ Կմաղթեմ, որ դուք ըլլաք ամշակ առանց ամօթոյ», չմոռնաք երբեք ձեր կյանքին մեջ հայության Սրբության Սրբոց Ս. Էջմիածինը, անոր երանաշնորհ Գահակալները և մանավանդ մեր և ձեր թանկագին Հայրը՝ Վեհափառ Հայրապետը, որուն ունչին և շունչին տակ դուք հասակ առիք և ուռճացաք։ Ձեր ամենեն դժվար պահերուն լսեցեք ձեր խղճի ձայնը, ան ձեզ երբեք պիտի չխաբե։

Աստվածային օրհնությունը և հովանին թող ձեր վրա ըլլան, ամեն։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից շրջանավարտներին շնորհավորում և խրատական խոսք է ասում պր. Ա. Աղաջանյանը։

Ապա կատարվեց վկայականների բաշխումը։ Բարեշնորհ Սանդրա սարկավագ Բեհբուդյանցը, Կարապետ սարկավագ Բենլիյանը, Ժիրայր սարկավագ Ճերեճյանը և ուրարակիր Ցոլակ Աղաջանյանը, դահլիճում հավաքվածների ծափերի տակ, Վեհափառ Հայրապետի ձեռքից աջահամբույրով ստացան ժապավենով փաթաթված իրենց վկայականները։ Վեհափառ Հայրապետը վկայականների հետ յուրաքանչյուր շրջանավարտի նվիրեց նաև ձեռքի ժամացույց, իսկ վերատեսուչը՝ մեկական գրքարար Աստվածաշունչ։

Այնուհետև, հուզված և խանդավառ մթնոլորտում, խոսք առին չորս շրջանավարտները, որոնք նախ իրենց շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնեցին Հոգևոր Ճեմարանի վերատեսչին և դասախոսական կազմին։

Նրանք իրենց շնորհակալության հատուկ խոսքն ուղղեցին մանավանդ իրենց հոգևոր Հոր՝ Վեհափառ Հայրապետին և իրենց ուխտը վերանորոգեցին, ուխտ հավատարմության և անպայմանավոր հնազանդության։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Այսօրվա հանդիսությունը բացառիկ տեղ մը կգրավե անշուշտ մեր աշխատանքի այս չորս տարիներու ընթացքին մեջ, վասնզի առաջին անգամն է, որ Մեր օրով Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը իր շրջանավարտները կունենա։ Մեր բոլորիս հոգիները ուրախությամբ և քաղցր հույսերով լեցված են այս պահուս։ Կխորհինք, թե նախ պարտինք շնորհավորել Ճեմարանի վերատեսուչ Հայկազուն սրբազան եղբայրը Մեր, իրեն և ամբողջ դասախոսական կազմին ուղղելով Մեր շնորհակալության խոսքը՝ իրենց տարած անխոնջ ու բոլորանվեր աշխատանքին համար, աշխատանք, որով անոնք նշմարիտ հավատքով և առատությամբ կկերտեն մեր ուսանողներու հոգիները, գիտությամբ կլուսավորեն անոնց միտքը և իրավ հայրենասիրությամբ կջերմացնեն անոնց սրտերը։

Սիրելի՛ շրջանավարտներ, ավարտեցիք ուսմանց վեցամյա ընթացքը մեր Հոգևոր Ճեմարանին, սակայն իրականության մեջ դուք կգտնվիք ոչ թե աշխատանքի մը վախճանին, այլ, ընդհակառակը, նշմարիտ ձեր աշխատանքի նաճապարհի սեմին։ Վեց տարիներու այստեղ ձեր ստացած ուսումը, ձեր ստացած դաստիարակությունը, ձեր ապրումները և նեղշնչումները ուրիշ բան չեն եղած, եթե ոչ արթնցնել ձեր մեջ հոգևոր կյանքին նվիրվելու ներքին զգացումը, ձգտումը և կամեցողությունը։ Եթե իրոք ունիք նվիրումի այդ ներքին ապրումը, ձեր ազատ կամքով և խոր անկեղծությամբ, այդ կնշանակե, որ ձեր հոգիներուն մեջ բյուրեղացած է արդեն հոգևոր կոչումը։ Մեր եկեղեցին, Ս. Էջմիածինը, մանավանդ մեր օրերուն, կարիք ունի կոչումի տեր մարդոց, որոնք, հոգևոր սրտմը նագած, ծանր բայց քաղցր լուծը տանին անտրտունջ և առանց սակարկելու, նշմարիտ նվիրումով։

Մեր՝ հոգևորականներուս մեջ երբեմ պետք չէ խոսին փառասիրությունը, անհատական շահերը, եսասիրական կիրքերը կամ արծարսիրությունը։ Այլապես պիտի ըլլայինք բախտախնդիրներ և խոսքի վանառականներ՝ արժանի մեր ժողովուրդի արհամարհանքին։ Այսպիսի հոգևորականներ ավելի վնաս կպատճառեն եկեղեցիին և մեր ժողովուրդին, քան թե արտաքին օտար մեր հակառակորդները։ Եթե այսօր մեր ամբողջ հոգևորականությունը կանգնած ըլլար իր կոչման հոգեվար-բարոյական և հայրենասիրական զգացումներու բարձունքին վրա, պիտի խնայվեր մեր եկեղեցիին ազգակործան ու եկեղեցամեղ այն տագնապը, որ ստեղծվեցավ հայ Սփյուռքի մեջ որոշ տեղեր։

Տեսնելով անդունդը, ուր կգլորվին ուղեկորույսները, սիրելի՛ երիտասարդներ, ուղղեցե՛ք ձեր հայացքը դեպի Ս. Էջմիածին և անգամ մը ևս ուխտեցե՛ք մնալ հավատարիմ ձեր ուխտին՝ անձնուրացությամբ ծառայելու մեր Ս. Եկեղեցիին, հայ ժողովուրդին և մեր վերածնած Մայր Հայրենիքին։

Գիտենք, բազում դժվարություններ կան ձեր առաջ, հոգևոր ասպարեզին մեջ։ Բայց ո՞ւր չկան դժվարություններ։ Նշմարիտ նկարագիրներ դժվարության առաջ առավել

կամրանան, առավել կբյուրեղանան, առավել կբոցավառվին, առավել բռնի՛ կառնեն: Արտասահմանի մեջ սկիզբ առած ազգապր և Ս. Էջմիածնի դեմ թշնամական արարքները թող առավել զորացնեն և առավել գոռեպրեն ձեզ, ձեր առաքելության ուղիղ ճանապարհի վրա:

Այո, դժվար է հայ հոգևորական լինելը: Բայց դժվար է նաև հայ լինելը: Իսկ այս դրվարությունները ռեզ մը իրար կնանդիպին ու կնույնանան: Այդ մեր հպարտությունն է:

Հոգևոր որդի՛ք Մեր սիրելի, կնամբուրենք ձեր ճակատները և կօրհնենք զձեզ: Շնորհք ընդ ձեզ»:

Հանդեսի երկրորդ բաժնում գործադրվեց գեղարվեստական ծրագիր։

Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ ուսանողների վկայականների բաշխման հանդեսը վերջացավ Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆ

1. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ ՄԸ

Եմ գիտեր ինչո՞ւ այսքան խոռվեց զիս Ամենայն Հայոց Կաթողիկոսին նախաձեռնությունը Եղիշե պատրիարք Դուրյանի ծննդյան հարյուրամյակը տոնելու։ Անո՞ր համար արդյոք, որ մարդ կհուզվի, երբ սիրած մարդիկը միտքը կբերե հանկարծ, իր չսպասած մեկ պահուն։ Կամ թե անուշ ու տխուր հուշերով լեցուն շրջանի՞ն համար արդյոք, որ մտքիդ առջև կուգա մեկեն, հին դեմքերը ոգեկոչած միջոցիդ։

Բայց ինձի կթվի, թե այդ խռովքը նաև անոր համար է, որ առիթ մը կըլլա ան ինձի քանի մը տող գրելու մարդու մը մասին, որ ոգեորած է մեր պատանեկությունն ու երիտասարդությունը, և զոր հիմա հիշելու այլևս առիթներ գրեթե չունինք։ Հոբելյանները, զորս ատեն-ատեն կտոնենք, իմաստ մը պիտի չունենային ինքնին, եթե առիթ չտային մեզի պահ մը ետև նայելու և մեր երեկը դիտելու համար, մեր միտքը բերելու համար երեկվան մարդիկը և դատելու համար զանոնք նոր օրերու մեր փորձությամբ։

Անգամ մը գրած եմ ես Դուրյանի մասին, ասկե ճիշտ երեսուն տարի առաջ, երբ անոր հիսնամյակը կտոնվեր։ Հոդվածներու շարքը, զոր այդ առթիվ տպեցի, հետո տեղ գտավ իրեն ձոնված «Մշակն ու վարձը» հատորին մեջ։

Երբեմն, երբ կթղթատեմ հին գրվածքներ՝ վերապրելու համար միամտության ու խանդավառության, հույսերու և հուսախաբության մեր հին օրերը, առիթը կունենամ այդ հոդվածներն ալ աչքե անցնելու։

Կկարծեի այն ատեն, թե Դուրյան պատրիարքի մասին ըսած եմ լրիվ ամեն բան. բայց կտեսնեմ հիմա, որ անոնց մեջ ըսված է ինչ որ մարդ կըսե ապրող մարդու մը համար։ Որքան ալ անկեղծ ըլլա մարդ, ինչպես որ փորձած եմ ըլլալ իմ հոդվածներուն մեջ, չի կրնար ամեն բան ըսել. հյուրի մը առջև մարդ չի խոսիր ամեն բան։

Պետք է մարդ հողը մտնե, որպեսզի կարենաս զայն լրիվ տեսնել, ու պետք է սուգն ալ անցնի, զայն կարենալ դատելու համար։

Հիմա, որ անցեր է արդեն երեսուն տարի, երբոր սուգը մարեր է վաղուց և մեղմացեր անձին հմայքը, կրնանք խոսիլ իր մասին ևս պաղարյուն։

Որքա՞ն տեղին է արտացոլել սա քանի մը տողը, զորս Դուրյան ինքը կգրեր հառաջաբանին մեջ Խրիմյան Հայրիկի «Ամբողջական երկ»-ին, որ 1929-ին լույս տեսավ. «Գուցե ոմանք կանուխ նկատեն Խրիմյանը վերապրեցնելու պետքը, քանի որ անոր հասարակաց հմայքը դեռ չէ ջնջված այն կուրծքերեն՝ որ անոր շունչովը բաբախեցին. ու դեռ ապրող սերունդ մը կա մեր մեջ, որ անոր կյանքն ու գործերը կպատվե կենդանի պաշտումով մը. դեռ վարաղաթն Արծիվին թռիչքը կհածի մեր մթնոլորտին մեջ, իր լուսավոր ստվերը դեռ բաժնված չէ մեր արևեն, դեռ

իր ձայնն ու հառաչանքները, իր երգերն ու պատգամները չեն մարած, չեն մոռցված։

Այլևս կանուխ չէ գրել նաև իր մասին։

***

Հարկ կա՞ր այս նոր ուրվանկարին, երբ արդեն այնքան շատ բան գրված է անոր մասին, ու երբ հորելյանեն հետո լույս տեսած «Մշակն ու վարքը» իր մեջ այնքան դրվագներ կամփոփե անոր կյանքեն, բոլորն ալ գրված գինք մոտեն ճանչցողներու։

Հնարավո՞ր էր մանավանդ Դուրյանի մասին նոր բան ըսել, երբ անոր կյանքը այնքան խնամքով վերլուծեց իր սանն ու հաջորդը Արմաշի մեջ ու Երուսաղեմի Աթոռին վրա, երբ, ինչպես կըսեր Զոպանյան, «Քիչ անգամ մեր մեջ անձնավորություն մը, և այնպիսի բարդ ու ճոխ անձնավորություն մը՝ ինչպես է Դուրյան սրբազանը, ուսումնասիրված է այնքան բազմակողմանի, խորաթափանց ու անկողմնակալ ըմբռնողությամբ և արտահայտված այնքան նրբությամբ, ճշտությամբ ու հրապույրով, ինչպես հաջողած է ընել Թորգոմ սրբազան իր այս գործին մեջ։

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐՅԱՆ

Ինձի այնպես կթվի սակայն, թե միշտ նոր բան կարելի է ըսել մարդոց մասին, որոնք այնքան խորունկ են և բարդ՝ ինչպես Դուրյանն էր, և առհասարակ միշտ կարելի է

նոր բան գտնել ըսելու՝ երբ ժամանակը կհեռացնե քեզ նյութեդ։

Երբ երեսուն տարիներ առաջ, հոդվածներու ակնարկված շարքը նվիրեր էի Դուրյանին, ուրվանկարելե հետո զայն իր կյանքին և գործունեության զանազան երեսներուն մեջ, ըսեր էի, թե ան ժլատ է եղած իր գիտական պաշարը հանրության ինչքը դարձնելու։ Ու ահա, իր սաներեն մեկը՝ Շահե վարդապետ Գասպարյան, հետագային արքեպիսկոպոս, կշտամբեր էր զիս ըսելով, որ «Դուրյան սրբազանը հեռվեն միայն ճանչցող՝ համբավ շինած, հատորներ արտադրած գրագետ մը, հոդվածի մը վերջը «քանքարաթաքույց»-ի ամբաստանությունը կբներ սրբազան հորելյարի մասին», և կավելցներ. «Քանի՜ անարդար պարսավ էր այդ։ Մարդիկ կամովին աչքերնին փակած ըլլալու են միայն, անտեսելու համար Դուրյանի հաղորդականությունը, որով հիսուն տարիներ և մինչև օրս՝ Կոստանդնուպոլսո, Պարտիզակի, Դպրեվանքի, Զմյուռնիո և այժմ ալ Ս. Սաղեմի մեջ՝ իր հմտությենեն բաժին, իր խորհուրդներեն ներշնչում և իր քարոզներուն ձևեն ու իմաստեն՝ հավատք ու մխիթարություն կարտադրե անխնա»։

Այս տողերը գրողը հավակնությունը չունի Դուրյանի մտերմության մեջ ապրած ըլլալու, և անոր աշակերտ ըլլալու բախտն ալ ունեցած չէ։ Բայց ան կհավակնի այնուամենայնիվ, թե կրցած է Դուրյանը ճանչնալ։ Ու կարելի չէր չճանչնալ մեկը՝ որ քեզ կառինքներ առաջին իսկ հպումիդ, մեջդ կայծ մը կկաթեցներ ու քեզ կստիպեր, որ ա՛լ իրեն հետևիս, քայլ առ քայլ, բոպե առ բոպե, հոգ չէ հեռվեն։

Ու հետո, մոտն ապրողը չի տեսներ հաճախ լրիվ լույսը, մոտեն, կշլացնե ու քեզ կարգելե դիտելե։ Պետք է հեռանալ՝ զգալու համար զայն։ Լեռները քեզ չեն կախարդեր, երբ իրենց մոտն ես. պետք է հեռանաս՝ որ զանոնք ըմբռշխնես իրենց բովանդակ շքեղությանը մեջ։

***

Էջերը, որ պիտի հետևին, ոչ կենսագրություն մը պիտի ըլլան սա կայն, ոչ ալ ուսումնասիրություն մը իր գործին վրա։ Ավելի ձեռնհասներուն կիյնա այդ զույգ մը հոգը։ Իմս փորձ մըն է միայն քանի մը գիծեր տալու Դուրյան սրբազանի այնքան բազմերես և այնքան բեղմնավոր կյանքեն, ոգեկոչելու համար պահու մը, երբ կլրանան շուտով իր ծննդյան հարյուրամյակն ու մահվան երեսներորդ տարին, պատկառելի իր դեմքը այնպես ինչպես որ էր, կամ ավելի համեստ ըլլալու համար՝ այնպես ինչպես որ կրցած է զայն ճանչնալ այս տողերը գրողը։

2. ՍԿՅՈՒԴԱՐԵՆ ՊԱՐՏԻԶԱԿ

Եվ սակայն քայլ առ քայլ պետք է հետևիլ անոր կյանքին։ Ան ծնած է 1860-ին, Սկյուտար, և եղբայրն էր վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանին։ Եվ այսքանը արդեն շատ բան կրսե մեզ։

Միհրան, ան, որ օր մը պատմության պիտի անցներ իբրև Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան, աչքը կբանար պահու մը, երբ հայ կյանքը հոն սկսեր էր փոխել։ Հին շրջան մը կփոխվեր ու նորը կուգար դեռ դեղնկոտ քայլերով։ Խորհրդավոր է զուգադիպությունը. Դուրյան կծներ Ազգային Սահմանադրության հիմնված տարին։ Հաճախ ըսված է, թե Ազգային Սահմանադրությունը չպրսակեց հայ ժողովուրդին հույսերը և լարդարացուց լիովին իր հիմնադիրներուն սկզբնական երազները։ Զայն պետք է դատել սակայն իրեն ծնունդ տվող մտահոգությանց մեջ, ու պայքարին մեջ, զոր այդ առիթով որդիները բացին իրենց հայրերուն դեմ։ Եթե ան հաճախ քառակուսի անիվ եղավ, ամուլ վեճերու բեմ և կրքերու բախման վայր ու խանձարուր հայ ռոմանտիզմի, չմոռնանք, որ երբեմն այնտեղ արձագանք տվին հայ ժողովուրդին վշտերը և երազները ևս, ու մարմին առավ ու բանաձևվեցավ հայ դատը։

Որքա՜ն քմծիծաղ հիմա մեր դեմքին վրա՝ երբ նոր օրերու կարկինով չափենք մեզմե առաջի շրջանը. փորձեցեք սակայն պահ մը ապրիլ այդ շրջանի մարգոց հոգին ու հուզումները, որպեսզի շատ բան ներեք անոնց միամտությենեն ու անոր ընկերակցող սայթաքումներեն ալ։

Այդ օրերու ռոմանտիզմն էր, որ հետո իրապաշտ պիտի դարձներ մեզ, ինչպես որ այդ օրերու մառախուղեն պիտի գար օր մը լույսը։

Դուրյան այդ մառախուղի օրերեն կուգա, ու այդ օրերեն կուգա լույսի ծարավը, որ հետո պիտի ոգևորեր ամբողջ սերունդ մը։

Տասներկու տարեկան կար արդեն, երբոր տեսավ մահը իր եղբոր, որ կշիշեր թշվառության մեջ։ Ան տեսեր էր, թեև դեռ պատանի, բովանդակ դրամը, որ հանճարի հուրքով բռնկած տարաբախտ քերթողին կյանքը

դառնացուց և խամբեցուց անոր հանճարը, լսեր էր անոր սիրո հեքերը և հեկեկանքը, ինչպես նաև տրտունջը Երկնքի դեմ։

Ջէր կրնար անոր հոգիին բան մը չկարթել իր հոգիին մեջ ալ։

Սկյուռարը, այդ տարիներուն, մեկն էր Կոստանդնուպոլսո ամենեն տաք անկյուններեն։ Հոն էր մարմին առեր կրթական առաջին շարժումը ու հոնկե էր բխեր ժողովրդական պայքարը՝ իշխողներու լուծեն ազատելու համար հայ կյանքը։ Ճեմարանը, որ հոն հիմնվեր էր 1836-ին, իսկապես լույսի վառարան մը եղեր էր տակավ, մանավանդ որոշ շրջան մը, համախմբելով ինչ որ Կոստանդնուպոլիսը ուներ ընտիր։ Խաչատուր Միսակյան արդեն չկար, բայց կար իր շունչը։ «Պոետ»-ենն դեռ հետք մը կար Դուրյանի օրով ալ։

Դուրյան աշակերտեցավ նախ հոն։ Ան ուսուցիչ ունեցավ Սիմոն Ֆելեկյանն ու Սրապիոն Թղլյանը, երկու կարկառուն դեմքեր, երկուքն ալ հայագետ, այն օրերուն իմաստով, որոնցմե առաջինը, ավա՜ղ, հանդգներ էր պահ մը Պետրոս Դուրյանի քերթվածներուն հետ վարվիլ այնպես, ինչպես աշակերտական շարադրությանց հետ կվարվին.—սրբադրե՞ր էր զանոնք,—իսկ երկրորդը հավանաբար ներշնչեր էր գրական ճաշակ և թատրոնի սերն ալ վառեր էր պատանի քերթողին մեջ։

Դուրյան հոն էր, որ ունեցավ իր առաջին շփումը հայ դպրությանց հետ. թեև դեռ մանուկ, հոն առավ ան գիտության համը։ Եվ ավելցնենք, որ Մելքոն Կյուրճյանը ևս հոն կուսաներեր այն օրերուն, ան, որուն հետ բուռն գրավեմ մը պիտի ունենար ինք օր մը։

Հետո, 1872—1873 թվականներուն, Ս. Խաչ կուսանի Դուրյան Դպրոցակից են հոն իրեն Վահրամ Թորգոմյանը, Հարությունն Մրմրյանը և ուրիշներ, անուններ, զորս կհիշենք ցույց տալու համար սերունդը, որ հասունցավ իրեն հետ մեկտեղ։

Ս. Խաչի գրասեղաններուն վրա է դեռ, երբ 1873-ին, ուրեմն հազիվ 13 տարու, իր գրական նախափորձերը կընե Դուրյան, իսկ երեք տարի հետո, ուսանելու տարիքին մեջ դեռ, ուսուցիչ կկարգեն զինքը նույն այդ դպրոցին մեջ։

Ու հինգ տարի ան կուսուցանե հոն, բայց և կուսանի։ Արդեն գծված է իր բովանդակ կյանքի ուղին,—ուսանիլ և ուսուցանել։

Ոչ ոք կրցած է բացատրել սակայն, թե ինչպես, մեկեն, հոգևոր կոչման կմղվի Դուրյան։ Հավանաբար հմայքն է տարած Իզմիրլյան եպիսկոպոսի, որ այն օրերուն Ս. Խաչի քարոզիչ էր։ Ու արդարև 1878-ին սարկավագ կձեռնադրվի Իզմիրլյանեն, ու տարի մը հետո Հայ եկեղեցին իր ծոցը ունի եղիշե վարդապետ Դուրյանը, դեռ գրեթե պատանի։

Այո, գրեթե պատանի, բայց արդեն հմայք կստեղծե իր շուրջը։ Ուսուցիչն ու քարոզիչը, ձեռք-ձեռքի, ասպարեզ կբանան իրեն։

Քսան տարեկան վարդապետ՝ ան կհորինե արդեն իր առաջին երկը՝ «Ընթացք ի Դրոց բարբառ»։

Շրջան մըն է, երբ գրաբարը չէ լքած իր դիրքերը դեռ։ Հավատացողներ կան դեռ անոր հարության։ Մատաթիա Գարագաշյան և Հակոբ Գուրգեն փորձած են արդեն իրենց միամիտ փորձը մեռելը գերեզմանեն կանչելու, լույս ընծայելով «Ճաշակ ոսկեղէն դպրութեան»-ը և չհաջողելով ուրիշ բան ընել, բայց եթե ատեն մը ևս վառ պահել պաշտամունքը գրաբարին ու անոր տեղ վերեպահել դպրոցներուն մեջ։

Դուրյան վարդապետ մեկն է գրաբարով խանդավառվողներեն։ Գրաբարի ուսուցման իր դասագիրքը ապացույց է։

Նույն այդ տարին, 1880-ին, Դուրյան կմտնե արդեն իր բուն առաքելության մեջ։ Պարտիզակի դպրոցին համար տեսուչ մը կփնտռեն, որ միևնույն ատեն ստանձնե եկեղեցվո քարոզչությունն ալ, ու Դուրյանն է, որ կկանչվի այդ պաշտոնին։ Իզմիտի ծոցին ծայրը, պչրուտ բլուրի մը վրա թառած այդ գյուղը լույսի ծարավով բռնկած է վաղուց, երբ Դուրյան ոտք կկոխե հոն։ Դուրյան լույսի աղբյուր մը կըլլա լույսի ծարավ այդ գյուղին համար։

Պարտիզակը զայն փրկեց՝ կըսեն։ Զայն կազդուրեց նախ մարմնով։ Վտիտ ու դժգույն պատանին, որ եղեր էր ան Կոստանդնուպոլսեն չմեկնած, շուտով առուգացավ, դնդեր ու դույն ստացավ։

Պարտիզակը զայն կազդուրեց հոգվով ալ։

Արդարև Դուրյան, երբ Պարտիզակ գացեր էր 1880-ին իբրև քարոզիչ և իբրև ուսուցիչ, հազիվ քսան տարեկան էր, և ուրիշ բան չէր տարած իրեն հետ, բայց եթե մոգական անունը, զոր եղբայրն էր իրեն տվեր, քանի մը տարվան ուսուցչության փորձը Կոստանդնուպոլսո մեջ, ինքնաշխատությամբ ձեռք ձրգված գիտական համեստ պաշար մը, և իր գրական ու գիտական նախափորձերը, որոնք լեցուն էին արդեն խոստումով։

Պարտիզակի մեջ էր, որ մարմին առավ Դուրյան։ Տասը տարին, զորս անցուց այնտեղ, ոչ միայն լույսի ծարավով ողողեր էր հայ գյուղը, այլև խորացուցեր էր զինքը գիտական իր պաշարին մեջ։ Ուսեր էր և ուսուցեր այնտեղ ամբողջ տասը տարի։

Բավ է աչքի անցնել երկերը, որոնք իրմե լույս տեսան Պարտիզակ գտնված տարիներ-

րուն, ինչպես՝ «Ընտիր ասացվածքս»-ը (1882), «Ընթացք ի Գրոց բարբառս»-ի Բ տարին (1883), «Պատմություն հայ մատենագրության»-ը (1885), «Բառագիտություն»-ը (1886), առանց հիշելու իր հոդվածները զանազան պարբերականներու, ինչպես «Երկրագունգ»-ի մեջ և իր տեղեկագիրները՝ Իզմիրյանց մրցանակի ներկայացած գիտական աշխատանքներու մասին։

Եվ այլևս անցուցե՞ր եք ցանկը սաներուն, որ իր ձեռքին տակ հասունցան Պարտիզակի մեջ։ Տարբեր ասպարեզի և տարբեր արժեքով մարդիկ, բայց բոլորն ալ հայ հանրային կյանքին նվիրեցին իրենք զիրենք։

Ըսենք անցողակի, որ եթե Դուրյան վարդապետի ցանած շունչը չլլլար, հավանաբար խաթարվեր հայ սրտով այդ փոքր ավանը։ Մարգորսությունը չկրցավ աղիտաբեր ըլլալ հոն։ Ամերիկյան բարձրագույն վարժարանը, որ հոն հաստատված էր, չհամարձակեցավ շատ հեռանալ իր կրթական առաքելությենեն, և Մխիթարյանները ուրիշ բան չբրին, բայց եթե Պարտիզակեն իրենց վանքը տանիլ ընդունակ տղոց հույլ մը, որոնք Ս. Ղազարի մեջ հետք պիտի ձգեին օր մը։

3. ԱՐՄԱՇ ՈՒ ԴՈՒՐՅԱՆ

Մեր սերունդը չէր իսկ ծնած Պարտիզակի իր տարիներուն։ Մենք Արմաշի մեջ գտանք զայն։

Եվ արդարև Դուրյան միտքս կբերե ամենեն առաջ Արմաշը, Կոստանդնուպոլսո մոտիկ զուտ հայկական այն գյուղը, որ համբավավոր է իր Ջարխափանով։ Համբավավոր էր եղած դարերով և էր մեր օրերուն ալ։

Հայաստանի սրտեն հեռավոր ափեր նետված փշրանք մըն էր Արմաշն ալ, ինչպես էին Նիկոմիդիո շրջանի բազմաթիվ հայ գյուղերը՝ Պարտիզակը, Օվաջըքը, Արսլանբեկը, ինչպես և Ադափազարը, որ արդեն քաղաք էր, ուր դարերով անեղծ էին մնացեր հայ լեզուն ու հայկական ավանդությունները։

Արմաշն ու իր Ջարխափանը անջնջելի պիտի մնային սակայն մեր պատմության մեջ, եթե հանկարծ դպրեվանք մը ստեղծված չըլլար այնտեղ իր կյանքի վերջին քառորդ դարուն, թեև վանքն ու իր կողքին հոգևոր կյանք վաղուց է կային, ժէ դարու սկիզբեն։

Նիկոմիդիո խաղաղ այդ անկյունին մեջ, Ջարխափան Ս. Աստվածածնա հովանիին տակ դպրեվանք մը հաստատելու նախաձեռնությունը Աշըգյան պատրիարքին կուգար, բայց այդ նախաձեռնությունը իր սաղմնային ձևին մեջ ալ կմնար, եթե Օրմանյան սրբազան ցարեն հալածված, ընդհատած չըլլար էջմիածնի մեջ սկսած իր առաքելությունը, Կոստանդնուպոլիս դարձած և հոգևին պատրաստ նման առաքելության մը լծվելու։

Օրմանյան պիտի չկրնար սակայն հաջողությամբ պսակել իր առաքելությունը, եթե ինքն ալ, իր կարգին, իր կողքին չգտներ հանկարծ երիտասարդ այդ վարդապետը, որ տարի մը հետո Պարտիզակեն կուգար իբրև իրեն օգնական։ Արմաշ հասած 1889-ին և անմիջապես գործի սկսած, տարվան մը փորձով հասկցած էր Օրմանյան, թե կարելի պիտի չըլլար առձեռն ուժերով, այսինքն այն հոգևորականներով, որոնցմով կազմված էր տեղվույն միաբանությունը և կամ որոնք իր տրամադրության տակ դրվեցան, գլուխ հանել իրեն վստահված դժվարին գործը։

Դուրյան իր փրկությունն եղավ, և Արմաշինը։

Դուրյանի հոբելյանական հատորին սկիզբը զետեղված կենսագրական նոթերուն մեջ շատ ճիշտ ըսված է. «Առանց Օրմանյանի կազմակերպող մտքին, Դպրեվանքը պիտի չունենար կամ պիտի չկրնար շարունակել թերևս իր գոյությունը. բայց նույնքան ճըշմարիտ պիտի ըլլա ըսել, թե առանց Դուրյանի Դպրեվանք պիտի չկրնար ստանալ գրական ու գիտական փայլը, զոր ունեցավ իր գոյության ընթացքին»։

Աշըգյան, քանի պատրիարք էր, շարունակեր էր անշուշտ հովանավորել Արմաշը, ու գտնվեր էր Աբիկ Ունճյան մը ևս, որ իր ուսերուն էր առեր նյութական հոգը։ Բայց այդքանը բավ չէր։ Օրմանյան, ակնարկելով Աշըգյանի ունեցած դերին, կըսե, թե «սակայն յուր մասը հովանավորի գերն էր, նյութականը Ունճյան Աբիկի, և ներքինը Օրմանյանի և Դուրյանի արդյունք էր»։ Օրմանյանի դերը ևս հովանավորի դերին պիտի վերածվեր շուտով, երբոր պատրիարք դառնար, և Արմաշի հոգևոր բեռը պիտի դրվեր Դուրյանի ուսերուն։

Դուրյան վարդապետ երեսուն տարեկան կար-չկար, երբ ոտք կոխեց Արմաշ, հայ նոր հոգևորականությունը պատրաստելու առաքելության լծվելու համար։ Բայց ան արդեն պաշար կտաներ իր հետը և պատկառանք։ Ու այդ պաշարին և պատկառանքին ուժով էր, որ ան ամբողջ սերունդ մը թրծեց, նախ, 6 տարի, գործակցելով Օրմանյանին, հետո, 8 տարի ալ, միս-միանակը, այսինքն իր իսկ շունչովը։

Եվ ադեմ է, որ Արմաշ ու Դուրյան սկսան այլևս շփոթվիլ։

... Երբ մանուկ էի՝ քանիցս զիս տարած են Արմաշ։ Այդ օրերին բան մը միտքս չէ։ Կհիշեմ միայն գոմեշի սայլերուն թափորը, որ Ադափազարեն ճամբա կելլեր դանդաղ-դանդաղ, կանգ կառներ պահ մը Ջիֆտլիկ, որպեսզի սայլերը քիչ մը հանգչին ու մարդիկ քիչ մը «զովանան» շուրին եզերքը, ու հետո ճամբա կիյնար վերստին, ճռնչալեն ու ճռնչալեն, մինչև որ հասներ Արմաշի սարը։ Կհիշեմ Դեյիրմեն-դերեն, ուր կկենային դարձյալ սայլերը, ու ջաղացքի հացը զոր հոն կերած եմ, Արմաշեն բան մը միտքս չէ։

1900-ի այցս արդեն միտքս է, Դեռ փոքր մանուկ, բայց արդեն գիտեի, թե ուխտի տեղ մըն է Արմաշը, ուր ցավագարները բժշկելու կբերեն, թե վանք մը կա հոն ու լեփ-լեցուն վարդապետ։

Գոմեշի նույն սայլերը, նույն արարողությունները Ջիֆտլիկի և Դեյիրմեն-դերեի մեջ, ու նույն վերելքը դեպի Արմաշի սարը։ Բայց հիմա արդեն վանքը ուրիշ է քեզ համար։ Կրնաս մտերմանալ անոր հետ, կըրնաս մտնել ամեն տեղ ու տեսածդ միտքդ պահել,— Քառասուն Մանուկը, վանքին ջաղացը, այգին։

Այդ օրվընե կհիշեմ ես Դուրյանը, կհիշեմ, մշուշի պես, իր պատարագը։ Հետագային ալ տեսած եմ իր պատարագները, բայց ուրիշ պատարագ էր այն առաջինը։

Այդ օրվընե է, որ միտքիս մեջ կշփոթվին Արմաշն ու Դուրյանը։ Օրմանյանն էր Դրպրեվանքն ստեղծողը, ու հետագային ալ շատերը վարեցին դայն- ինչպես Բարգենը, Թորգոմը, բայց առանց Դուրյանի կարելի պիտի չըլլար Արմաշն ըմբռնել, ոչ ալ Դուրյանն ըմբռնել առանց Արմաշի։ Դուրյան եղավ Արմաշի հոգին։

Տասնչորս տարիները, զորս անցուց ան վանքին մեջ, իր կյանքին ամենեն բեղմնավոր տարիներն էին արդարև։ Այդ շրջանին էր, որ Արմաշը հասցուց իր լավագույն հունձքը, ու Դուրյան, ինքը, հոն հասունցավ լրիվ, իր բարձունքն հասավ։

4. ՀՈՆԻԱԿԱՆԻ ԱՓԵՐՈՒՆ ՎՐԱ

Տասնչորս տարի վանքի մը ծոցը, գիշերցերեկ գրքերու մեջ խոր թաղված, օրինքուն ուսանելով և ուսուցանելով,— չէին կրնար չքայքայվիլ մարդու մը ջիղերը։ Դուրյան ստիպված էր բժիշկներուն անսալ այլևս։ Անհրաժեշտ էր միջավայր փոխել։

Ու ան սիրով համակերպեցավ, երբ իզմիրցիք առաջնորդ ընտրեցին զինք 1904-ին։

Ես չեմ հավատար, որ Դուրյան Իզմիր գնաց, խեղճուկ Արմաշեն նախընտրելով Հոնիականի դիցուհին իր քաղաքի հրապույրներով, կամ նյութական բարոր վիճակ մը ապահովելու համար իրեն, ինչպես որ կակնարկե Օրմանյան իր «Ազգապատում»-ին մեջ. «Եթե Դուրյան յուր սիրած ուսումնական կյանքեն զատվելով վարչականին մտնել փափաքեցավ, ոչ թե վարչական զբաղմանց վրա հարդ կամ բաղձանք ունենալեն հառաջ եկավ, այլ պարզապես յուր ապագային համար նյութական միջոցներու պետքը զգալուն հետևանքն եղավ, որուն ստուգիվ ձեռնտու չեղավ Դպրեվանքը»։

Իսկ իր կենսագրության մեջ, որ Թորգոմ եպիսկոպոսի գրչեն ելած է, ուրիշ կերպ կըսվի. «Վանական կյանքի սեղմ պայմանները, որոնց մեջ ճնշված էր տասնչորս տարիներե ի վեր, նյութական ու բարոյական հոգերու մաշող սաստկությունը, և, վերջապես, գիշերաչան տքնությանց խոնջենքը հետզհետե ազդած էին իր ֆիզիկականին վրա, ու մարթային բուռն անհանգստություն մը կենեզեր զինքը հաճախ, երբեմն անկողին ալ ձգելով սաստիկ տենդ ու տապով։ Բժիշկները անհրաժեշտ նկատած էին իրեն համար թողուլ վանքը և ավելի հանգստավետ կյանքի մը պայմանները նախընտրել։ Այս պատճառով չկրցավ մերժել Զմյուռնիո թեմին հրավերը»։

Իզմիրի իր չորս արտիները միջանկյալ մեկ շրջան էին իր կյանքին։ Բայց այդ միջանկյալ տարիներուն անգամ ան չդադրեցավ ուսանելե և ուսուցանելե։ Միշտ գրքերուն մեջ էր, ու միշտ ամբիոնին վրա։ Այս անգամ ալ Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարաններուն սաներն ու սանուհիները բախտ ունեցան զինք ունկնդրելու։

Բայց Իզմիրի իր տարիներիը այլապես ալ ուշագրավ դարձան։ Իզմիրի մեջ ատեն ունեցավ բանաստեղծությամբ ալ պարապելու։ Եթե Ս. Մինասի շուքին տակ, Պարտիզակի մեջ, և Արմաշ՝ Քառասուն Մանուկի կողքին, գիտական մարդն էր որ հասունցեր էր իր մեջ, Հոնիականի ափերուն վրա, արդեն, քերթողն է, որ կլրանա իր մեջ։ Իր լավագույն քերթվածները այդ օրերեն մեզ կուգան։

5. «ԱՋԱՏՈՒԹԻՒՆ ԵՐԲԱՐՑ ՄԵՐՈՑ ԳԵՐԵԼՈՑ»

Իզմիրի առաջնորդ էր, երբ, 1908-ին, «Հուրրիեթ»-ը հրատարակվեցավ Կոստանդնուպոլսո մեջ։

Երեք տասնյակ տարիներու չարաշուք լուծե մը հետո հանկարծ ինքզինք ազատած կարծեր էր հայ ժողովուրդը, լեցված ան-

զուսպ խանդավառությամբ մը, ինչպես կըլլան բանտե մը ազատվողները, ու շփոթած, խավարեն հանկարծ լույսին ելլող մարդոց պես։ Գինով էինք։

Գինովության մեջ մարդ կկուրնա ու կկորսնցնե իր բանականությունը։

Այդպես էր այդ օրերուն հայկական Կոստանդնուպոլիսը։ Եվ ան, հին ռեժիմը քանդված տեսնելու իր մոլեգնության մեջ, տապալեց նաև Օրմանյանը, որ տասներկու տարի պատրիարքություն էր ըրեր, Համիդի ամենեն զարհուրելի այդ տարիներուն։

Օրմանյանը տապալելե հետո, նոր կուռք մը պետք էր նոր օրերու համար։ Եվ այդ կուռքը կարծես վաղուց էր պատրաստ։ Իզմիրլյանն էր, որուն առաջին պատրիարքության ատեն ցույց տված համառ կեցվածքը Համիդի հանդեպ փառապսակ մը հյուսեր էր իրեն, և այդ փառապսակը ավելի շքեղացեր էր 12 տարվան իր աքսորով Երուսաղեմի մեջ։ «Երկաթե պատրիարքը» հերոսացեր ալ էր։ Եվ ան պատրիարք ընտրվեցավ 83 ներկա երեսփոխաններու միաձայն քվեով։

Մինչև Իզմիրլյանի դարձը Երուսաղեմեն՝ տեղապահ մը պետք էր սակայն Կոստանդնուպոլսո Աթոռին համար։ Եվ այդ տեղապահը Դուրյանը եղավ, որ Կոստանդնուպոլիս կանչվեցավ իսկույն Իզմիրեն։

Պետք էր այդ օրերու խանդավառությունը ապրած ըլլալ՝ վերզգալու համար ջերմությունը, որով իսկույն շրջապատվեցավ Դուրյան, հայ ժողովուրդի բոլոր խավերեն. իսկ իր անդրանիկ քարոզը, զոր լսեցինք Մայր Եկեղեցիին բեմեն, գոհար մըն էր հոգեկան վերացման ու բանաստեղծության։ Քարոզ մը չէր, այլ քերթված մըն էր իր խոսածը այդ օր. «Հայ Եկեղեցին գարուց ի դար արձագանքեր է իր կամարներուն տակ. «Աղաղուիցն եղբարց մերոց գերելոց...».— այսպես սկսավ, ու երբ վերջացուց, արցունքը կշողար բոլորին աչքերուն մեջ, ու վաղվան լուսավոր օրերու կարոտովը կՔրթռային մեր հոգիները։

Դուրյանի տեղապահության շրջանը հազիվ երեքուկես ամիս տևեց. հուլիս 16-են մինչև հոկտեմբեր 31, ու վերջ գտավ Իզմիրլյանի Պատրիարքական Աթոռ գալուն հետ։ Այդ շրջանը ճառերու ու ցույցերու, կեցցեներու և ծափերու, շրջանն էր, ու Դուրյանի մեծ դեր մը վիճակված չէր այդ պահուն։ Ամբոխն ու ամբոխավարներն էին, որ կտիրեին ամեն տեղ, մամուլին մեջ թե փողոցը, նույնիսկ Պատրիարքարանեն ներս։

Զոհեր կփնտռեր ամբոխը 32 տարիներու իր զայրույթը հագեցնելու համար կարծես, փույթ չընելով, թե որն է անոնց մեջ բուն մեղավորը։ Թերթերը լեցուն էին ամեն օր մեղադրանքներով ասոր անոր հասցեին. թերթերուն պակաս թողածը կլրացնեին թռուցիկներն ու բրոշյուրները։ Անուշ լուրի հերոսներու փաղանգ մը բուսած էր գետնեն և դատ ու պատիժ կպահանջեր դավաճաններուն համար։ Թղթատեցնք, եթե սիրտերնիդ կդիմանա, այն օրերու թերթերը, տեսնելու համար, թե ինչ հերոսներ ունեցանք ու ինչքան պատվո ատյաններ՝ «դավաճան»-ները դատելու համար։

Հարվածներ կտեղային հոգևորականներու ալ վրա։

Մեծագույն թիրախը անշուշտ Օրմանյանն էր, տեսակ մը քավության նոխազ։ Օր չէր անցներ, որ ցեխ մը չնետվեր անոր հասցեին։ Չկա մարդ, որ թերություն չունենա կամ սխալ մը չգործե։ Օրմանյան ալ ունեցեր էր անշուշտ բնավորության իր բացասական գծերը, և իր վրեպներն ալ։ Բայց ինչ որ եղավ անոր դեմ՝ միայն կուրցած ամբոխը կրնար ընել։ Ամբոխը մինակ չէր սակայն. զայն կհրահրեին անձնական կիրքե և հաշիվներե կուրցած մարդիկ։ Եթե կարենա բացատրվիլ իսկ առանց դատ ու դատաստանի զայն Աթոռեն վար առնելու դեպքը, Կոստանդնուպոլիսը իր տարեգրության մեջ ամոթով պիտի արձանագրե 1908 հուլիսի 25-ի խայտառակությունը։ Գոհիկ ցույցերով այն օրը Օրմանյանը իր տունեն Պատրիարքարան տարին՝ որպեսզի չփախչի Ազգին հաշիվ չտված...

6. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Դուրյան Կոստանդնուպոլսո պատրիարք կըլլար դժբախտ պահու մը։ Տարի մը անցած իսկ չէր այն խարուսիկ ազատութենեն ի վեր, զոր Համիդ շնորհեր էր իր ժողովուրդին, հայուն ալ հետը։ Համիդ ինքն իսկ դավեր էր իր շնորհած ազատության, գահեն տապալեր ու տեղը բռներ էր, հանձին անվանական սուլթանի մը, ինքը Իթթիհադը, նույնքան կեղծ ու նույնքան դաժան, որքան իր գահընկեց վարպետը։ Ու ճիշտ այն օրը, երբ Համիդ կփորձեր խեղդել Կոստանդնուպոլսո մեջ իր հռչակած Հուրրիեթը, անդին Ադանայի մեջ կջարդվեին քանի մը տասնյակ հազար հայեր։ Եղեռնը ներշնչվեր էր անշուշտ Կոստանդնուպոլսեն։ Հայ ժողովուրդը կապրեր անդոհանքի, բայց և սրտմտության օրեր։ Կառավարությունը կմերժեր մեղավորները լրիվ դատել Ադանայի մեջ, ձևակերպության հա-

մար քանի մը տասնյակ Թուրք միայն հանելով կախաղան ու անոնց հետ քանի մը հայ ալ, որպեսզի Թուրք ամբոխին սիրտը ևս զովանա։

Ու նույն այդ պահուն հայ ժողովուրդը պառակտված էր ինքն ալ ներսեն։ Հայկական Բյուզանդիոնը բռնված էր ամով վեհերով։ Ազգային ժողովը սանձազերծ կրքերու կրկես մըն էր ավելի, ու մարդիկ կուրցած էին կրքերեն, ինչպես տարի մը առաջ կուրցեր էին գինովութենեն։ Բաց ու գոցի չարաբաստիկ խնդիրը եղբայրը լարեր էր եղբոր դեմ։

Այդ օրերուն է, որ պատրիարք ընտրվեցավ Դուրյան, Իզմիրլյանի փոխարեն։ Մեկը, որ իր անուշ ժպիտովը միայն խոսեր էր մինչև այն ատեն իր սաներուն ու իր ժողովուրդին, ի՞նչ կրնար ընել գառագեղին մեջ։ Ի՞նչպես պիտի կարենար մաքառիլ կառավարության մը հետ, որ Եվրոպայեն կեղծ ձևեր հետը բերած ու Համիդի հոգին իր ներսը դրված միշտ ամուր՝ կհամառեր միշտ հայը ճզմելու։ Եվ ինչպե՞ս պիտի հաշտեր խաղաղեցնել կուսակցական մոլեգնած կրքերը, որոնք արդեն վերածված էին ատելության ու ոխի։ Մոգական ցպիկներով փոթորիկն ամոքելու դարը վաղուց էր անցած։

Մտքիս առջևն է իր պարտված մարդու դիմքը Ազգային ժողովի մեջ, նիստին պահուն։ Բաց ու գոցի խնդիրն էր, որ կծեծվեր դարձյալ նույն օրը։ Կոնդակ մը ստացված էր Իզմիրլյան կաթողիկոսեն, որ կհորդորեր փակ պահել եկեղեցիները միտինգներու առջև, ու այդ կոնդակը փոխանակ կրքերը մեղմելու, ավելի ևս շղթայազերծ էր ըրեր։ Դուրյան ժողովականներուն կնայեր անզոր, ոչ իր բարի ժպիտը ուժ ուներ այդ պահուն, ոչ ալ իր քաղցր բառերը։

Հովվական սրինգի մը կախարդանքովը չեն խաղաղիր գայլերը, իսկ այն օրերուն ամեն մարդ մեյ-մեկ քիչ գայլ էր։

Շատեր զգացեր էին առաջին վայրկյանեն, որ Դուրյան հարմար մարդը չէր Պատրիարքության Աթոռին համար, մանավանդ այն օրերուն, երբ Ադանայի սպանդը սկսեր էր դարձյալ վիհ բանալ հայերուն և Թուրքերուն միջև, և մյուս կողմե հայ կյանքը սկսեր էր փոթորկիլ ներսեն՝ կուսակցական կրքերու ալիքներուն անձնատուր։ Նման օրերու մեջ տարբեր խառնվածքի տեր մարդիկ պետք են։

Դուրյան պատրիարք եթե չկրցավ կուսակցական կրքերու ալիքին մեջեն անսայթաք անցնել իրեն հանձնված նավը, չտկարացավ սակայն Ադանայի աղետին հանդեպ իր ցասումին մեջ և խրոխտ մնաց մինչև վերջին պահը։ Միակ դիրքն էր, զոր կրնար բռնել հոգևոր պետ մը այն օրերուն, անբարյացակամ կեցվածքին առջև կառավարության մը, որ կխուսափեր արդար դատաստանե մը։ Նման դատաստան մը երևան պիտի հաներ Թուրք ժողովուրդի վարիչներուն ալ մեղսակցությունը եղեռնին մեջ, իսկ Թուրք կառավարությունը, ըսենք մանավանդ Իթթիհադը, որուն ձեռքին մեջն էր երկրին ամբողջ դեկը այդ պահուն, կդողար, որ կապացուցվի ճշմարտությունը։ Կեղծ էին բոլոր մխիթարական խոսքերը և պարզ ձևակերպություններ էին կատարված քննությունները։ Ցմռոնանք պարագան ամենեն քիչ հայ կործված հայու մը՝ Հակոբ Պապիկյանի, զոր պառլամենտը Ադանա ղրկեց կծու Թուրքի մը՝ Յուսուֆ Քեմալի հետ մեկտեղ, և որ աղետի վայրեն Կոստանդնուպոլիս դարձավ ավելի քան հայ մը, լեցված ցասումով և վրեժխնդրությամբ, բայց իր տեղեկագիրը պառլամենտ ներկայացնելու օրեն գիշեր մը առաջ այլևս չկար. մեռած էր խորհրդավոր պարագաներու մեջ...

Ու հայ ժողովուրդի այդ խռովքի օրերուն, որքան սփոփիչ էր լսել, թե պատրիարքը մերժած է երթալ պալատ՝ մասնակցելու հարմար սուլթան Ռեշադի գահակալության առթիվ տրված հանդիսավոր ճաշին, և ըսածները անդին Կիլիկիո մեջ դիակներ կան անթաղ, հայոց պատրիարքը չի կրնար մասնակցիլ այդ արյունոտ ճաշին։

Ճաշին եղեր էին անշուշտ հայեր, ինչպես օսմանյան պառլամենտի հայ անդամները, երեսփոխան թե ծերակուտական, ինչպես որ եղեր էին անոնցմե ոմանք շատ ավելի արյունոտ ճաշի մը, զոր քանի մը ամիս առաջ տվեր էր Կարմիր սուլթանը պառլամենտի բացման առթիվ...։

Դուրյան չէր կրնար երկար դիմանալ։ Եվ ան չդիմացավ։ 1910 սեպտեմբեր 22-ին ան ստիպվեցավ տալ իր հրաժարականը, հակիրճ պատճառաբանությամբ մը։ Ան կխոստովաներ պարզապես, «թե հակառակ փանաքի ճիգերուս, կարող չեղա պաշտոնական հարաբերություններով բաղմակարոտ հայ ժողովրդյան ամենակենսական պետքերուն և պահանջներուն գոհացում տալ բաղձացված չափերով, թե բացարձակապես ամեն կուսակցութենե վեր մնալով հանդերձ անկարող եղա մեր ազգային կյանքը ակնհայտնի փլացնող ընդդիմադիր ուժերը հրավիրել հաշտ ու համերաշխ գործակցության մը և ազգային իշխանությունը իր բարոյական կենտեն բարձրությանը մեջ ըմբռնված ըլլալու միամտությունս օգտակար արդյունք մը չունեցավ ինքնին»։

Ազգային երեսփոխանական ժողովը նույն օրն իսկ ընդունեց իր հրաժարականը։

Դուրյանը ես իբր ուսուցիչ չունեցա, բայց զայն ունեցա իբր քեռի կեղրոնականեն շրջանավարտ եղած տարիս, 1909-ին։ Դուրյան պատրիարք էր այդ միջոցին, բայց սիրով եկեր էր մեր գրաբարի և մատենագրության քննության։

7. ԴՈՒՐՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ընթերցողներս թող չխաբվին խորագրես, Դուրյան կաթողիկոս եղած չէ երբեք։

Եվ սակայն դիպվածով մը միայն չեղավ։

Կաթողիկոսներ ունեցած ենք, որոնք ընտրված են բայց չեն կրցած օծվիլ, ինչպես Արղությանը. 1800 մայիս 8-ին կաթողիկոս ընտրված, 1801 մարտ 9-ին մեռեր էր Թիֆլիս, էջմիածին անգամ չհասած։ Եղած են, որոնք կաթողիկոս են ընտրված, բայց մերժած են ընդունիլ, ինչպես Ներսես Վարժապետյանը, որ ընտրվեր էր 1884 մայիս 9-ին և ցարեն ալ վավերացվեր. առողջական վիճակը, զոր պատճառ էր ցույց տվեր մերժելուն, պատրվակ կարծվեցավ պահ մը, մահը սակայն չուշացավ. ան աչքերը փակեց նույն տարվան հոկտեմբեր 26-ին։

Ունեցած ենք կաթողիկոսներ, որոնք ընտրված են բայց չեն վավերացված, ինչպես Մելքիսեդեկ եպիսկոպոսը. 1885-ին ան էր ընտրված իբրև առաջին թեկնածու, և սակայն ցարը Մակարի ընտրությունը վավերացուց։ Մելքիսեդեկ եպիսկոպոսը 30 քուե էր ստացեր Մակար եպիսկոպոսի 16 քվեներուն դիմաց, բայց Մակար նստավ Աթոռը։

Եղած են դեմքեր, որոնք հավանաբար ավելի հարմար էին Կաթողիկոսական Աթոռին համար, բայց Ազգը չէ ընտրած զանոնք. Օրմանյանը՝ օրինակ։ Կիրքերը շատ բուռն էին 1909-ին, ինչպես և 1911-ին, և իր շուրջ ստեղծված վեճերը դեռ շատ թարմ, որպեսզի կարենար քվե շահիլ։ Դեպքերն են հաճախ, որ մարդը կվարեն։

Եվ վերջապես դեմքեր ալ եղած են հայ հոգևորականության մեջ, զորս Ազգը ուզած է ընտրել, բայց դավաճանած է քվեն։ Դուրյան այս վերջիններեն է։

Իզմիրլյանը վախճանած էր 1910-ին և 1911 դեկտեմբերին էջմիածին էին հավաքված պատգամավորներ աշխարհի բոլոր կողմերեն՝ ընտրելու համար անոր հաջորդը։

Դուրյան, որ 1909-ին իբր երկրորդ թեկնածու ընտրված էր Իզմիրլյանի հետ, միակ հավանական ընտրելին կմնար հիմա։

Եվ արդարև Կոստանդնուպոլսո մեջ լուր ունեինք, թե էջմիածին հավաքված պատգամավորները համաձայն են արդեն կաթողիկոս ընտրել Դուրյանը, կազմակերպելով այնպես, որ ան քանի մը քվե ավելի ստանա քան Սուրենյանը, որ պիտի ընտրվեր իբր երկրորդ թեկնածու։

Մենք Կոստանդնուպոլիս կսպասեինք վայրկյանե վայրկյան իր ընտրության լուրին. Դուրյան արդեն կաթողիկոս էր մեզ համար։

Թերթի մը խմբագրության մեջ կաշխատեի ես այն տարին և հերթապահ էի այդ գիշեր. հետս կմնար հերթապահ գրաշար մըն ալ։ Դուրյանի կենսագրականը շարված, զետեղված էր էջին մեջ, ինչպես և լուսանկարին կլիշեն։ Քանի մը տող պարապ էինք թողած, որպեսզի վերջին պահուն ավելցնենք ստացած քվեներուն թիվը ևս, երբոր հեռագիրը ընտրության լուրը բերեր։

Եվ ահա շփոթեցուցիչ անակնկալը։ Հեռագիրը հաղորդեց, թե կաթողիկոս է ընտրված Գևորգ Սուրենյան 72 քվեով։

Ի՞նչ ենք քաշեր գրաշարն ու ես, որպեսզի Դուրյանի համար շարվածները էջեն հանենք, շարված պահեստի ուրիշ նյութեր զետեղենք անոնց տեղ ու քանի մը տողով ալ ծանուցանենք Սուրենյանի ընտրությունը։

Օրեր հետո, սակայն, պարզվեցավ ծանոթ դավը։ Դուրյանը զեղչեր էին իրենց քվեներուն մեջեն, որպեսզի ավելի ըլլան Սուրենյանի քվեները։ Ու Դուրյան ստացեր էր մեկ քվե պակաս։

Եթե Դուրյան բազմեր Կաթողիկոսական Աթոռը, տարակույս չկա, որ իրեն հետ բացառիկ պատկառանք կմտներ վանքեն ներս, և Գևորգյան ճեմարանը ոսկյա նոր շրջան մը կապրեր քանի մը տարի։

(Շարունակելի)

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀԲՈՒԴՅԱՆՑ

ՂԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՋԱՀԿԵՑՈՒ ՆԵՐԲՈՂԸ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ

Հայ եկեղեցու դավանության շերմ պաշտպան և հմուտ աստվածաբան Ղազար կաթողիկոսը ծնվել է Ջահուկ գավառում։ Ջահուկը այդ շրջանին ունիտոռների կենտրոնն էր, իսկ Ղազար Ջահկեցին նրանց թունդ հակառակորդներից մեկն է հանդիսանում։ Եվ նրա «Դրախտ ցանկալի» գիրքը, որը հրատարակվել է Կոստանդնուպոլսում 1735 թվականին, «հերքմնագիր մըն էր հռոմեական վարդապետությանց, և բացատրություն Հայ Եկեղեցվո դավանության, պատմության հետ խառն» (Օրմանյան, «Ազգապատում», հատ. Բ, էջ 2916)։ Նույն ժամանակաշրջանին, 1737 թվականին նա հրատարակում է նաև մի երգարան։

Ղազար Ջահկեցին, որպես քաջ աստվածաբան, շատագովական աշխատությունների հետ զուգընթաց գրել է նաև կրոնական բանաստեղծություններ, որոնց մի գեղեցիկ նմուշն է «Ներբողեան ի դէմս Սրբոյն Էջմիածնի Նորին տեառն Ղազարու վարդապետին Ջահկեցւոյ», գրված աստվածաբանական խոր հմտությամբ, վառ երևակայությամբ և հայրենասիրական շերմ շունչով։ Այս բանաստեղծության մեջ կա ազգային ոգի, զգացողություն և միտք, հարուստ պատկերներով և նմանություններով։

Ջահկեցու հրատարակվող ներբողը վերցված է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի հետևյալ ձեռագրերից.

A ձեռագիր, № 4644, 1804 թ., թերթեր 26բ—30բ.

B ձեռագիր, № 3416, 1766 թ., թերթեր 26ա—30ա.

C ձեռագիր, № 7667, 1759 թ., թերթեր 34ա—35ա։

B ձեռագիրը որպես խորագիր ունի «Ներբողեան ի դէմս Սրբոյ Էջմիածնի Նորին տեառն Ղազարոյ վարդապետին Ջահկեցւոյ», իսկ C ձեռագիրը՝ «Տաղ Սուրբ Էջմիածնին»։

Ձեռագրերի տարընթերցվածքները տրվում են ծանոթագրություններում։

Միջնադարյան տաղարանները լի են Ս. Էջմիածնին նվիրված տաղերով, Ս. Էջմիածնին, որ հայ ժողովրդի համար 16 դար ոգևորության աղբյուր է եղել, քաջալերության ձայն և դեպի աղատություն կանչող մշտաբարբառ հրավիրակ։ Ի դեմս Ս. Էջմիածնի գրված այդ ներբողների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Ջահկեցու վերոհիշյալ տաղը։

Ղազար կաթողիկոս Ջահկեցին (1737—1751 թ.թ.), շնայած իր կաթողիկոսության շրջանի խառն գրության, զբաղվել է նաև շինարարությամբ։ Նա կառուցել է Ներկոս վեհարանի շենքը, մի հյուրանոց, որը մինչև հիմա էլ կոչվում է իր անունով Ղազարապատ։

Ղազար կաթողիկոս Ջահկեցին վախճանվել է 1751 թվականին և թաղվել է Ս. Գայանեի վանքում։

ՆԵՐԲՈՂՆԱՆ Ի ԴԷՄՍ ՍԲԲՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ
ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՂԱԶԱՐՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՀԱՀԿԵՑԻՈՅ

Էջմիածին մայր հաւատոյ,
Միրանափայլ կաղմեալ լուսոյ,
Կամարազարդ պրսակ նորոյ,
Հրաշիւք ցուցեալ նախնոյն մերոյ։

5 Էջմիածին ծայրածաւալ,
Ջահարորբոք փայլատակեալ,
Եօթնաձեղուն Սիոն շինեալ,
Երկնակառոյց շաւղօք ցուցեալ։

Էջմիածին նաւ փրկութեան,
10 Քան զնոյի մեծին տապան,
Ծովահերձող իշխանութեան
Եւ նահանջող դեւոց արեան։

Էջմիածին տուն տէրունեան,
Պատճառ մերոյ ազատութեան,
15 Ցեգիպտական ծառայութեան,
Հանեալ ի լեառն սրբութեան։

Էջմիածին խորհրդաւոր,
Եւ ոսկեձոյլ լցեալ սափոր,
Մանանայիւն այն երկնաւոր,
20 Առ որ պատմեաց մեծն Գրիգոր։

Էջմիածին գերազանցեալ,
Քան զՄովսէսի խորանն ընտրեալ,
Հաւատս անբիծ քև ըսկըսեալ,
Ցքնաղագեղ հրաշազարդեալ։

25 Էջմիածին խաչանշան,
Բուրվառ ոսկի և գաւազան,
Իւղոց բուրմունք նարդոսական,
Անուշահոտ աստուածանման։

Էջմիածին քառատեսակ,
30 Ադինարուխ դեւոց վտակ,
Աստուածագիր մատեան տախտակ,
Եօթնաշահեան մեզ աշտանակ։

Էջմիածին փառօք լցեալ,
Երկրորդ Սինայ ի քեզ ցուցեալ,
35 Անդ Մովսէսի ըզնա տեսեալ
Եւ աստ Գրիգոր գերազանցեալ։

Էջմիածին յարկ պետութեան,
Եւ գայիսոն զօրեղութեան,
Ամուր պատուար հաստատութեան,
40 Ուղղափառաց յոյս փրկութեան։

Էջմիածին տեղ հանգստեան,
Բնակեաց ի քեզ յերկնից արքայն,
Հիմանց քարինքդ կարկեհան,
Քան զամենայն յարկսն Յակոբեան։

45 Էջմիածին բարձր աշտարակ,
Գերակայեալ աստուածունակ,
Յասպեաց արձան և միայնակ,
Պճնապաճոյճ և անքանակ։

Էջմիածին լեառն մածեալ,
50 Լեառն Աստուծոյ Դաւիթ երգեալ,
Աստուածորդին ի քեզ հաճեալ,
Ոսկի ուռամբն յերկնից իջեալ։

Էջմիածին հանգոյն ցուցար,
Սուրբ Սաղիմայ յար և յարմար,
55 Եւ ըզհրաշս, որ անդ արար,
Յատուկ հայոց առանձնաբար։

Էջմիածին ըստ երգողի,
Առն իմաստնոյն Սողոմոնի,
Եւ կաթոգին սէր փեսայի,
60 Ընդ սուրբ հարսինդ անարատի։

Էջմիածին մուծո ի տուն,
Եւ հրճուեցայց յանմահ գինոյն,
Անդ հաստատիլ հոտոյ իւղոյն,
Մածկիլ ի ներքոյ խնծորոյն։

65 Էջմիածին սրահ լուսաւոր,
Արդ ըստ որում էլ հրաշաւոր,
Անմահ, հրզօր, սուրբ թագաւոր,
Ուստի արար զքեզ երկնաւոր։

Էջմիածին լեառն բարձու,
70 Հանգոյն պետաց հրեղէն դասու,
Վարդապետաց բան և լեզու,
Քանոն կրօնից մարդկան խրատու։

Էջմիածին դու հարսնարան,
Անմեղ Գառին սուրբ զենարան,
75 Մարմնոյ արեան իսկ խառնարան,
Ախտից սրբիչ և մաքրարան։

Էջմիածին անճառական,
Հրաշատիպ և աննըման,
Սխրատեսակ և կերպարան,
80 Ականակապ քաղաքն այն։

---

[1] A լուսոյ։ 6 B չահայբորբոք։ 8 A երկնանման։ 9—12 C չիք։ 10 B մեծի։ 11 B ծովայհերձող։ 14 A պայլաու։ 18—140 C չիք։ 22 A Մոսէսի։ 23 A ամբիծ։ 26 B բուրվաու։ 33 A Մոսէսի. B ըզնա։ 38 A Գրիկոր. B Գրիբոր։

42 B երկնից։ 43 A կարկէհան։ 46 A գերազանցեալ։ 47 B արձայն։ 48 B պճնայպաճոյճ։ 52 A հանդուցն։ 58 A Սողոմանի։ 61 B մուծո ի տուն։ 62 B անմահ։ 63 B հաստատել։

Էջմիածին աթոռ փառաց,
Առ քեզ իջեալ հաստիչն Աստուած,
Դուռն իմաստից, աղբիւր շնորհաց,
Յերկիրն օրհնեալ Հայոց Մեծաց։

85 Էջմիածին դուռն երկնային,
Առ քեզ եկեալ Աստուածորդին,
Սլացեալ ուռամբն արծուային,
Հանդերձ դասուք հրեշտակային։

Էջմիածին կազմեալ յերկրի,
90 Գմբեթակերպ նման երկնի,
Յորում ցուցաւ ձև քո մեծի,
Լուսատրչին մեր Գրիգորի։

Էջմիածին վէմ կենդանեան,
Հիմն հաւատոյ քրիստոնէութեան,
95 Եւ հրափրող արդարութեան,
Բացող դրանն արքայութեան։

Էջմիածին ճառագայթեալ,
Մագմամբ պէս պէս պարազարդեալ,
Հիահրաշիւք գեղազանցեալ,
100 Անճառելի լուսով փայլեալ։

Էջմիածին մայր պատուական,
Շինեալ աթոռ քրիստոսական,
Դասուց վերնոց միշտ օթարան,
Մեղաց քաւիչ և քաւարան։

105 Էջմիածին հարսն Անեղին,
Եւ Փեսային երկնաւորին,
Վայելչագեղ թագաւորին,
Ի թշնամեաց զմեզ փրկօղին։

Էջմիածին գեղաշուշան,
110 Զարմանատիպ յոյժ պատուական,
Արդ ըստեղծողն վերնական,
Իջեալ առ քեզ առնանման։

Էջմիածին դու զօրաւոր,
Գեղեցկաշէն և փառաւոր,
115 Կերտեալ հրաշիւք խորհրդաւոր,
Հրոյր անուն և ահաւոր։

Էջմիածին ծաղիկ փայլուն,
Եւ համասփիւռ դու գոյնզգոյն,
Նարկիզ, շուշան և վարդեգոյն,
120 Ըստ եդեմայ գեղեցկագոյն։

Էջմիածին աթոռ հայոց,
Յարկ սրբութեան զօրաց վերնոց,
Այլ և տեղի առաքելոց,
Եւ համօրէն ընտրեալ սրբոց։

125 Էջմիածին գերբընական
Տեղ մաքրագործ սրբոյ արեան,
Միրանազարդ իւղոյ օծման,
Քրիստոսազգեստ մկրտութեան։

Էջմիածին մայր գթութեան,
130 Յարկ Աստուծոյ, սրահ սրբութեան,
Զմայլեցուցիչ խրախճանութեան,
Նորոյ ուխտի ժողովրդեան։

Էջմիածին զոր շինեաց էն,
Եւ յարմարեալ յանեղ բանէն,
135 Ըզգալապէս ի Տրդատէն,
Օծմամբ օրհնեալ ի Պարթևէն։

Էջմիածին Կաթողիկէ,
Գեր քան ըզնա, որ ի Դաւթէ,
Եւ յիմաստնոյն Սողոմոնէ,
140 Այլ ամենից մարդկան ազգէ։

Էջմիածին փառօք պատուեալ,
Հայրապետօք բարգաւաճեալ,
Վարդապետօք փարթամացեալ,
Ուսումնասէր մանկամբք ծաղկեալ։

145 Էջմիածին աթոռ շնորհաց,
Օրհնեա՛ զորդիս քո ողորմած,
Ըզնբւիրօղս քոյդ պարգևաց,
Եւ զընծայօղս յիշատակաց։

Էջմիածին աստուածահրաշ,
150 Յաւէտ բաշխեա՛ որդոցդս ճաշ,
Ի քէն սարտուցեալքն կարդան վաշ,
Մատնին ի հուր երես ի քարշ։

Էջմիածին մեծ վեհարան,
Սուրբ հաւատոյ ըշտեմարան,
155 Որք զերախտիս քո ուրանան,
Երկու աչօքքն կուրանան։

Էջմիածին ծընող լուսոյ,
Գլուխ և մայր եկեղեցւոյ,
Ընկալ Ղազարս ի գութ սիրոյ,
160 Որ եմ ծառայ և որդի քոյ։

---

85 B դուռն։ 91 A որոյմ, B յուրմմ։ 92 A Գրիգորի։ 108 B փրկողին։ 113, 118 B դոյ։ 119 B նարգեզ։

122 B յար։ 124 A ընդրեալ։ 126 A մաքրակործ։ 134 B անեղ։ 138 B ըզնա։ 139 A Սողոմանէ, B իմաստնոյն։ 141 C պատեալ։ 144 A ուսոյմնասէր, B C մանկամբ։ 145—151 C յիր։ 148 B օրհնեալ, քոյ։ 150 B բաշխեա։ 152 C անկցին ի հուր, եղիցին խարշ։ 153 B քոյ մոռանան փոխ. քո ուրանան, C երախտիս։ 158 A գլոյխ, B եկեղեցոյ։ 159 C զՂազարս։ 160 C քոյ։



ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(Առաջնորդ Հայոց Ամերիկայի)

ՍՐՏԱԳԻՆ ԿՈՉ ՄԵՐ ԹԵՄԻ ՍԻՐԵՑՑԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ*

Եկեղեցաշինությունը հայ ժողովուրդի առաքինի հատկանիշներեն մին է։ Շինարար է մեր ժողովուրդը և ստեղծագործող. ուր որ գացեր է՝ շիներ է գեղեցիկ եկեղեցիներ, մշակութային շենքեր և դպրոցներ, իսկ Հայրենիքին մեջ կառուցեր է աննման կոթողներ, հայ ճարտարապետության ինքնատիպ ոճով և կաթողիկե գմբեթով հոյակերտ տաճարներ՝ նման Զվարթնոցի, Անիի և Ս. Էջմիածնի Մայր Տաճարներուն։ Եթե ուրիշ հին ազգեր իրենց պալատներով և բուրգերով կպարծենան, Հայ Ազգը իր վանքերով ու եկեղեցիներով կրնա պարծենալ, որոնք եղած են ոչ միայն հավատքի տաճարներ ու լույսի խորաններ, այլ նաև հայ մշակույթի ու կրթության վառարաններ և իր գոյության անսասան ամրոցներ։

Հայ մշակույթի ամենեն կարկառուն ճյուղերն են հայ ճարտարապետությունն ու հայ երաժշտությունը, որոնք կրոնական դրոշմ ունին։ Մեր մշակույթի ամենեն ուշագրավ կոթողը Հայ եկեղեցին է՝ իր կաթողիկե գմբեթով և ուղղաձիգ ու երկնամերձ կառույցով, իբրև կանգուն և կենդանի վկան հայ արվեստին։

Գաղթաշխարհի մեջ հայուն առաջին գործը եղած է միշտ շինել հայ եկեղեցին ու հայ դպրոցը՝ հավատքի ու մշակույթի զույգ տաճարները, որոնցմե առաջինին մեջ կվառի Լուսավորչի կանթեղը և երկրորդին մեջ՝ Ս. Մեսրոպի ջահը։

Վերջին քառորդ դարու ընթացքին, Ամերիկայի մեջ բազմաթիվ եկեղեցիներ կառուցվեր են, իսկ Հարավային Ամերիկայի հայությունը կանգնած է երկու հոյակապ տաճարներ, մին Բուենոս-Այրեսի, և մյուսը՝ Սան Պավլոյի մեջ։

Ամերիկայի հայության տարիներու երազը եղած է Նյու-Յորքի մեջ կանգնել Մայր Տաճարը և Մշակութային կեդրոնը։ Ուրախ ենք, որ առաջնորդարանի գեղեցիկ շենքը արդեն իսկ ավարտած է՝ Տիարպեքիրյան Սարգիս և Հովհաննես եղբարց իշխանական

---

* Առանձին գոհունակությամբ արձագանքում ենք ԱՄՆ-ի Հայոց բարեխնամ առաջնորդ Տ. Սիոն արքեպիսկոպոսի և թեմի ազգային-եկեղեցական մարմինների ընդհանրապես ազգասուտ և եկեղեցաշեն գործունեությանը և մանավանդ վերջին տարիներին կատարված եկեղեցաշինությանը։ Վերջերս Նյու-Յորքում ավարտվել է նոր առաջնորդարանի կառուցումը, իսկ շուտով կսկսվեն հայկական ոճով և կաթողիկե գմբեթով Նյու-Յորքում Մայր Տաճարի և Մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնք վառ վկայությունն են Ամերիկայի հայության եկեղեցասիրության և հայ մշակույթի հանդեպ ջերմ դուրգուրանքի։— ԽՄԲ. «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ.

նվիրատվությամբ, որուն համար մեր և պատվարժան թեմական խորհուրդի կողմե կհայտնենք սրտագին գնահատանք ու շնորհակալություն։

Նույնքան ուրախալի է, որ Մայր Տաճարի և Մշակութային կեդրոնի շինության ընդհանուր վարիչ և գանձապահ տիար Հայկ Գավուգճյանի անձնվեր ջանքերուն շնորհիվ՝ Կյուլպենկյան հիմնադրամեն կես միլիոն դոլլար խոստացված է Մշակութային կեդրոնի կառուցման համար, որ շուտով պիտի սկսի։

Արդ, կմնա այս ծրագրին ամենեն կարևորը և սրբազան կոթողը՝ Մայր Տաճարի շենքը, որ իր հայկական ճարտարապետական ինքնատիպ ոճով ու կաթողիկե գմբեթով պիտի ըլլա հավերժական ու պատվաբեր խորհրդանշանը հայ մշակույթին ու պարծանքը մեր նոր սերունդին։ Մայր Տաճարը իր սրբազան կամարներուն տակ պիտի համախմբե մեր սիրասուն զավակները, և անոր սեղանին վրա մշտավառ պիտի պլպլա լուսավորչի կանթեղը և իր լույսով լուսավորե մեր զավակներուն լուսակարոտ հոգին։

Ահա այս սրբազան նպատակին համար է, որ կոչ կուղղվի մեր թեմի բովանդակ հայության անխտիր, որպեսզի սրտաբուխ և առատաձեռն նվիրատվություններով իրականացնեն այս նվիրական ծրագիրը։

Մայր Տաճարի շինության հանձնաժողովը, գլխավորությամբ իր անձնվեր ու պատվական ղեկավարին՝ տիար Հայկ Գավուգճյանի, նոր ծրագրով ու հավատքով գործի սկսած է, մեկ միլիոն դոլլարի հանգանակության արշավով մը գլուխ հանելու համար այս անհետաձգելի գործը։

Ուստի, այսու, սրտագինս հրավեր կուղղենք մեր բարեպաշտ ու գոհաբերող ժողովուրդին, որպեսզի անվերապահ սիրով տա իր լուման և իշխանական նվերը այս աստվածահաճո գործին հայրենության համար։

«Եկայք շինեսցուք սուրբ գիսրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհիս»։

Կոչնենք Մայր Տաճարի և Մշակութային կեդրոնի պատվարժան հանձնաժողովի բոլոր ժրաջան անդամները և մեր թեմի հավատացյալ ժողովուրդը՝ մաղթելով ամենուն Աստուծոյ վարձատրությունը։

(ՆՅՈՒ-ՅՈՐՔ, Ամերիկայի Նայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ» ամսագիր, № 9, նոյեմբեր, 1959 թ.)

«ՄԵՆՔ ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ»

(Տպավորություններ Ս. Էջմիածնից)

Էջմիածնա Ս. Տաճարի կողքին, Վեհարանին մեջ, Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա-ի պարթև հասակը, վեհ կեցվածքը և բարի նայվածքը տակավին աչքերուս առջև է։ Ս. Լուսավորչի և իր արժանավոր հաջորդներուն ներկայացուցիչ Հայրապետին խոսքերը կարծես երկինքեն իջած՝ միշտ կհնչեն ականջիս. «Մենք աղոթում ենք բոլորի համար, աշխարհի խաղաղության համար»։

Արդարև բախտավոր են բոլոր անոնք, որ առանձնաշնորհումը ունեցած են Հայաստան և Էջմիածին այցելելու, ծանոթանալու Վեհափառին և լսելու Իր իմաստուն պատգամները։ Ավելի բախտավոր են անոնք, որ Հայաստանի մեջ Իր հովանիին տակ կապրին և առիթը կունենան միշտ մտիկ ընելու խոհական, քրիստոնեական ու հայրենաշունչ քարոզները։ Իսկ սիրյուրքի հայրենաբաղձ այն ուխտավորները, որ մենաշնորհը ունեցան տեսնելու և ունկնդրելու Հայ Աղգին հոգևոր պետը, երանելիներ են։ Երանելիներ անոր համար, որ հեռավոր երկիրներեն կրցած են արժանանալ ծաղկյալ ու շենցած Մայր Հայրենիքը այցելել ու ծնկաչոք աղոթել Մայր Տաճարին մեջ ու փառք տալ ներկա վերածնյալ Հայաստանին համար։

Տարակույս չկա, որ վերջին քանի մը տարիներու ընթացքին այցելող ուխտավորներ, ինձի նման ապրեցան հոգեկան անեկարագրելի հույզեր ու ամրապնդեցին իրենց հավատքը Ս. Էջմիածնա անմար կանթեղին համար։ Եվ սակայն, ի՜նչ մեծ ազգային հպարտություն կզգա ուխտավորը, երբ աչքերովը կտեսնե բարձր իմացականությամբ օժտված, տաղանդավոր մտավորական Հայրապետը և կունկնդրե անոր հայրական հորդորները։

Գերերջանիկ փորձառություն մըն էր այցելել մեր չքնաղ Հայաստանը ու հոգեպարար պահ մըն էր աղոթել Ս. Էջմիածնա Տաճարին մեջ և անէանալ հոգեմայլ շարականներու երգեցողությամբ։ Ամեն կիրակի հայաստանյայց եկեղեցիներու մեջ սուրբ պատարագին երգված «Տուր աշխարհիս խաղաղություն»-ը կարծես երբեք այդքան քաղցրալուր ու աղերսական չէր հնչած։ Եվ այնպես կթվեր, պահ մը, որ հայուն այդ աղոթքը միայն կրընար հասնիլ երկինք։ Կարծես խոր հաղորդակցություն մը կար երկինքին և Ս. Էջմիածնա միջև։

Թերևս երանելիներուս թիվը այնքան խոշոր չէ, սակայն ապահովաբար մենք կրընանք հասնիլ աշխարհիս ամեն կողմը ու բաժնեկից ընել մեր կրած բարձր ներշնչումներուն ու ըլլալ նաև անխորտակելի կապը Ս. Էջմիածնա և Սփյուռքի հայության միջև։ Ուխտավորի մեր նվիրական հանգամանքը այն ատեն միայն արժեցուցած պիտի ըլլանք։ Մեզի, երանելիներուս համար, սուրբ պարտականություն մը պետք է ըլլա կրկնել Էջմիածնա հանդեպ մեր հավատարմության ուխտը ամենուրեք, միշտ խոսքով և գործքով։

Դժբախտաբար ամենուն վիճակված չէ երանելի ըլլալ և այցելել Էջմիածին, սրբավայրերը Գառնի, Գեղարդ, Օշական և Ս. Գայանեի, Ս. Հռիփսիմեի, Զվարթնոցի և այլ վանքերը։ Սակայն, անոնց և մեր միջև կա հոգեկան անքակտելի շղթան՝ օղակված ճշմարիտ հայրենասիրությամբ, անխախտ հավատքով և նորանոր լուսաշող հույսերով։ Այս թանկագին արժեքներու զորությանը շնորհիվ միայն աշխարհը պիտի ճանչնա հայուն անխորտակելի կամքը ապրելու, ստեղծագործության ուժը ու մշակույթին հզորությունը։

Որքան որ ալ հեռու ենք Մայր Հայրենիքեն, մեր սրտերն ու հոգիները սերտորեն կապված են մեր դարավոր սրբությանց։ Եթե կցանկանք, որ անոնք ըլլան մշտահոս աղբյուրները մեր հավատքին ու հպարտության, պարտինք մենք ալ անոնց հանդեպ

մեր պարտականությունները խղճմտորեն կատարել։

Բաղձալի է, որ ամեն տարի ուխտավորներու մեծ թիվ մը շարունակեն այցելել Մայր Հայրենիքը և Ս. Էջմիածինը ոչ թե միայն ապացուցանելու մեր սերը, այլ հավատքի նոր ավյունով վերականգնելու և զայն ներարկելու գաղթաշխարհի մեր ազգակիցներուն։

Օտար երկինքներու ներքև ապրած հայերուս կմնա Էջմիածնա անունով եղած բոլոր կոչերուն թերել մեր բարոյական և նյութական օժանդակությունը և ծառայել Մայր Աթոռին հետ կապված մեր եկեղեցիներուն և առաջնորդարանին, Գուրգուրանքով անսալ առաջնորդ գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և հոգևոր հայրերուն հրահանգներուն։ Այսպես մենք գոհ պիտի թողունք Հայոց Հայրապետը և արժանանանք Իր օրհնությանց։

Այն ատեն միայն արժանի պիտի ըլլանք մեր պատկառելի Հայրապետին աղոթքներուն, երբ Ան կրկնե. «Մենք աղոթում ենք բոլորի համար, աշխարհի խաղաղության համար։ Այն ատեն միայն մենք ալ հանդարտ խղճով կրնանք պատասխանել։ Մենք ալ կաղոթենք Ձերդ Ս. Օծության արեշատության և ձեզ հետ աշխարհի խաղաղության համար։

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ

(Նյու-Յորք, Ամերիկայի Հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻ» ամսագիր, N 9, նոյեմբեր, 1959 թ.)

ՄԱՑՐ ՀԱՑՐԵՆԻՔՈՒՄ

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Ճարտարապետ, Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնաժողովի անդամ)

ՎԱՍՏԱԿԱԼԻՑ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՈՎ

(Ճարտարապետ Միխայել Մազմանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Դեկտեմբերի 12-ին, Երևանի Ճարտարապետների տան դահլիճում, նշվեց ճարտարապետ Մ. Մազմանյանի ծննդյան 60-ամյակը և գործունեության 40-ամյակը։

Հայաստանի Ճարտարապետների միության վարչության նախագահի տեղակալ և հոբելյանական հանձնաժողովի նախագահ Հ. Բաբայանյանը հոբելյարի մեծարանքի երեկոն հայտարարում է բացված։

Ճարտարապետ Մ. Մազմանյանի կյանքի և ստեղծագործական ուղու մասին զեկուցում է ճարտարապետական գիտությունների թեկնածու Ալ. Սահինյանը, որը հակիրճ կերպով ներկայացնում է ունկնդիրներին հոբելյարի վաստակը։ Այնուհետև ողջույնի չերմ խոսքով հանդես են գալիս Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ, ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Հ. Մարգարյանը, Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի դիրեկտոր Պ. Մելքոնյանը, Հայաստանի Կերպարվեստագետների միության վարչության նախագահ Ռ. Պարսամյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության ինստիտուտի ներկայացուցիչ Ս. Դավթյանը, «Երևաննախագիծ» հաստատության դիրեկտոր Գ. Հասրաթյանը, Հայաստանի Պետական պատմական թանգարանի դիրեկտոր պրոֆ. Կ. Ղաֆադարյանը և ուրիշներ, որոնք իրենց խոսքերում դրվատում են հոբելյարի մեծ վաստակները։

Հանդիսականները ուշադրությամբ են հետևում ու ջերմորեն ընդունում Հայաստանի ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի ու գրող Ստեփան Զորյանի ուղերձները, որոնք տկարության պատճառով չէին մասնակցում երեկոյին։

Հոբելյարի մանկության ընկերների կողմից ելույթ ունեցավ բանաստեղծ պրոֆ. Գեորգ Աբովը, որը կարդաց նաև Մ. Մազմանյանին նվիրված իր բանաստեղծությունը։

Հոբելյարի հասցեով ստացված բազմաթիվ հեռագրերի ընթերցումից հետո, հանդիսականների բուռն ծափերի տակ, ամբիոն բարձրացավ Միքայել Մազմանյանը, որը խոսելով ճարտարապետի կոչման մասին, շահեկան խորհուրդներ տվեց երիտասարդներին։

Երեկոյի հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ հոբելյարին նվիրված համերգ։ Ելույթ ունեցան Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստներ Հայկուհի Գարագաշն ու Ալ. Ադամյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Շ. Տալյանը, Ա. Ավետիսյանը և ուրիշներ։

***

Ճարտարապետ Միքայել Դավթի Մազմանյանը ծնվել է 1899 թվականի նոյեմբերի 21-ին Թբիլիսիում, որտեղ ստացել է իր միջնակարգ կրթությունը, սկզբում ավարտելով տարրական, իսկ 1918 թվականին՝ ներսիսյան դպրոցը։ Դեռևս պատանի հասակից աչքի է ընկնում գրասիրությամբ ու շնորհքով՝ նկարչության և արվեստների ճյուղի մեջ։ Իր դպրոցական ընկերների հետ նախաձեռնում է գրական-գեղարվեստական ձեռագիր հանդեսների հրատարակությունը, զբաղվում նկարչությամբ, կատարում մեր մշակույթի գործիչների (Հ. Թումանյանի, Մ. Աբեղյանի և ուրիշների) մտերմական ծաղրանկարները, որոնք ժամանակին հրապարակվել են «Գեղարվեստ» պարբերագրքի էջերում։

Հոր վաղաժամ մահը ստիպում է նրան դեռ պատանի հասակից մտահոգվել ապրուստի միջոցներ վաստակելու մասին։ 1919—1921 թվականներին երիտասարդ Մազմանյանը պաշտոնավարում է Թիֆլիսի դպրոցներում, որպես նկարչության դասատու։

Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, նա մեկնում է Մոսկվա և ուսանում Գեղարվեստական-տեխնիկական ինստիտուտի սկզբում նկարչական, ապա ճարտարապետական ֆակուլտետներում։

Ուսանողական տարիները Մոսկվայում անցնում են բեղմնավոր կերպով։ Սովորելու հետ միասին, Մ. Մազմանյանը որոշակի ծառայություններ է մատուցում հայ մշակույթի զարգացմանը. թարգմանում է և հրատարակում Գ. Պլեխանովի «Գեղարվեստը և հասարակական կյանքը» աշխատությունը, ինչպես և Ջոն Ռիդի «Տաս օր, որ ցնցեցին աշխարհը» հանրահռչակ գիրքը։ Այդ տարիներին նրա հեղինակությամբ լույս է տեսնում նաև իսպանիացի նշանավոր նկարիչ Ֆր. Գոյայի վերաբերյալ մի ամփոփ մենագրություն, հոդվածներ այլ նկարիչների մասին։

Մոսկվայի գեղարվեստական աշխարհում ունեցած ընդարձակ կապերը մեծ չափով նպաստում են նրա մտահորիզոնի ընդարձակմանը և ստեղծագործական առաջադիմական հայացքների կազմակերպմանը, որպիսի հանգամանքը իր բարերար ազդեցությամբ արտահայտվեց նրա գործունեության ամբողջ ընթացքում։

Ստանալով բարձրագույն կրթություն, Մ. Մազմանյանը իր հետ ուսանող անբաժան ընկերների՝ Կարո Հալաբյանի ու Գեորգ Քոչարի հետ, երեսուն տարի առաջ, 1929 թվականին, գալիս է Երևան։ Սովետական Հայաստանի վերակառուցվող մայրաքաղաքը նրանց կարիքն էր զգում։ Չէ՞ որ քսանական թվականներին ճարտարապետներին մատների վրա կարելի էր հաշվել Հայաստանում, այնքան քիչ էին նրանք։ Մավալվող քաղաքաշինարարական աշխատանքների, բնակելի, հասարակական և արտադրական շենքերի նախագծման ու կառուցման համար շատ մասնագետներ էին հարկավոր, և ահա նրանք, երիտասարդ ու խանդավառ, եկան ծառայելու իրենց վերածնվող Հայրենիքին։ Այդ սրբազան տենչը դարձավ նրանց ամբողջ կյանքի նշանաբանը։

Տարբեր էին նրանց հակումները, սակայն նրանց միավորում էր ստեղծագործական ձգտումների միասնությունը, նոր, սոցիալիստական ճարտարապետություն կերտելու նվիրական գաղափարը։ Դրա իրականացման համար նրանք պայքար ծավալեցին և՛ իսկական և՛ կարծեցյալ հնի դեմ, հախուռն ու կրքոտ ինչպես հատուկ է երիտասարդներին, ապրելով և՛ ստեղծագործական հաջողությունների բերկրանքը, և՛ նորի կերտման ճանապարհին անխուսափելի ձախողումների հիասթափությունը։

Օրեսնական թվականների սկզբների նրանց գործունեությունը այնքան սերտորեն է կապված իրար հետ, որ դժվար է խոսել նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական դեմքի մասին։ Սակայն այնուամենայնիվ նրանցից ամեն մեկն ուներ իր ուրույն դեմքը և կյանքում քայլեց իր ճանապարհով։

Ճարտարապետ Մ. Մազմանյանին հավասարապես հրապուրում էին ճարտարապետության և՛ պրակտիկ և՛ տեսական հարցերը, որոնց ուղղությամբ էլ նա դրսևորեց իր շնորհալի աշխատանքը, ցուցաբերելով մեծ հմտություն թե՛ մեկ և թե՛ մյուս բնագավառներում։

Սկզբում հանդես գալով գերազանցապես քաղաքաշինության ասպարեզում, նա մշակում է Կիրովական և Լենինական քաղաքների, Ղափանի և ռեսպուբլիկայի բազմաթիվ գյուղական վայրերի հատակագծեր, ցուցաբերելով տեղական պայմանների հաշվառման ուշագրավ օրինակներ։ Իր և ընկերների կատարած այդ տարիների դրական աշխատանքի արգասիք կարելի է համարել Երևանի՝ Ս. Կիրովի անվան գործարանի բանվորական ավանի հատակագծումը, որը հանդիսացավ միասնական մտահղացմամբ ստեղծված մայրաքաղաքի բնակելի առաջին զանգվածը։

Դրա հետ միասին, Մ. Մազմանյանը առանձին և ընկերների կազմել է զգալի թվով բնակելի ու հասարակական շենքերի նախագծեր։ Դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ Կառուցողների ակումբի (այժմ Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի), Երկրաբանական վարչության շենքերը, «Երգչաց»-ի բնակելի տան, Գրողների հանգստի տան (Սևանում) և հատկապես Կենտրոնական ունիվերսալ խանութի ու Գրքի պալատի մունումենտալ շենքերը, որոնք վաղուց արդեն իրականացված են ու ակտիվորեն մտել են մեր մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի մեջ։ Դրանք տարբեր չափերով մարմնավորում են ստեղծագործական այն պրպտումները, որոնք բնորոշ են 30-ական թվականների սովետահայ ճարտարապետության, մեծ մասամբ դրսևորելով հեղինակի նորարարական վերաբերմունքը ինչպես ժամանակակից շինանյութերի և կոնստրուկցիաների, այնպես էլ ազգային ժառանգության առաջադիմական տարրերի օգտագործման նկատմամբ։

Պրակտիկ գործունեությանը զուգընթաց Մ. Մազմանյանը ծավալեց գիտահետազոտական աշխատանք, ինչպես ճարտարապետության գործնական հարցերի տեղական ընդհանրացումների ուղղությամբ, որոնց արդյունքները բազմաթիվ հոդվածներով հրապարակել է պարբերական մամուլի էջերում, այնպես էլ հայ ճարտարապետության ուսումնասիրության ուղղությամբ։ Երեսնական թվականներին նրա նախաձեռնությամբ կազմակերպվեց Հայաստանի կարևորագույն պատմա-ճարտարապետական հուշարձանների չափագրությունների գործ։ Կարևոր է հիշատակել այն ջերմ և հոգատար վերաբերմունքը, որով մշտապես շրջապատել էր Մ. Մազմանյանը հայ ճարտարապետության անխոնջ հետազոտող Թորոս Թորամանյանին, մինչև վերջինիս կյանքի վախճանը, մեծապես նպաստելով բազմավաստակ գիտնականին իր հետազոտությունները ամփոփելու և հրատարակության պատրաստելու գործում։ Թ. Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծածավալ և խիստ շահեկան աշխատությունը հրատարակության պատրաստելու գործում Մ. Մազմանյանը ամենաջերմ աշակցություն է ցուցաբերել։

Եվս մի կարևոր բնագավառում անգնահատելի ծառայություն է մատուցել Մ. Մազմանյանը մեր ծագող ռեսպուբլիկային։ Քաջ գիտակցելով Հայաստանի ժողովրդական տնտեսության համար մասնագիտական կադրերի հրամայական պահանջը, նա Հայաստանի կառավարության հանձնարարությամբ հանդես է գալիս որպես ռեսպուբլիկայի տեխնիկական կադրերի պատրաստման դարբնոցի՝ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ժրաջան կազմակերպիչն ու առաջին դիրեկտորը (1931—1936 թ. թ.)։ Փաստորեն նրա ջանքերով էլ հիմք է դրվել ճարտարապետական կրթությանը ռեսպուբլիկայում։ Ինստիտուտում կատարած մանկավարժական աշխատանքի ընթացքում նա դաստիարակն ու ուսուցիչը դարձավ շինարարների և ճարտարապետների մի ամբողջ սերնդի, որը կյանք մտնելով, մեծ ոգևորությամբ նվիրվեց Երևանի ու ռեսպուբլիկայի այլ բնակավայրերի վերակառուցման մեծ, պատվավոր գործին։

1936 թվականին, Հայաստանի կառավարության աշակցությամբ, Մ. Մազմանյանը սովետական ճարտարապետների մի խմբի հետ արտասահման մեկնեց, եղավ Ստամբուլում, Աթենքում, Ֆլորենցիայում, Հռոմում ու Փարիզում։ Այս հետաքրքրական ճանապարհորդությունը մեծապես նպաստեց նրա մասնագիտական մտահորիզոնի ընդարձակմանը։

Մ. Մազմանյանի քաղաքաշինական հմտությունն է՛լ ավելի լայն կերպով դրսևորվեց 1939—1954 թվականների ընթացքում, երբ նա ճարտարապետ Գ. Քոչարի հետ միասին ներգրավվեց երկրի հեռավոր հյուսիսում ստեղծվող արդյունաբերական կարևոր կենտրոն՝ Նորիլսկի քաղաքի նախագծման ու կառուցման դժվարին աշխատանքներին։ Ցուցաբերելով ստեղծագործական վերաբերմունք ստանձնած գործի նկատմամբ, հատակագծման բնագավառում նա մտցրեց հյուսիսի առանձնահատուկ պայմաններից բխող լուծումներ, որոնք նոր ավանդ հանդիսացան քաղաքաշինական արվեստի ասպարեզում։

Լայն մտահորիզոնի տեր և բազմակողմանիորեն օժտված մասնագետ է Մ. Մազմանյանը, քաջատեղյակ ոչ միայն քաղաքաշինության ու ճարտարապետության, այլև գրականության, կերպարվեստի, թատրոնի ու երաժշտության հարցերին։ Այդ մասին են վկայում նրա և՛ հոդվածները և՛ շահեկան խորհուրդները հայ մշակույթի տարբեր բնագավառների աշխատողներին։

Այժմ էլ, երբ նշվում է վաստակած ճարտարապետի 60-ամյակը, նա ստեղծագործում է երիտասարդի ավյունով, հսկայական կենսափորձով իմաստավորված։ Մի քանի տարի է, ինչ նա գլխավորում է «Երևաննախագծի» հատակագծային արվեստանոցը, որտեղ նրա ղեկավարությամբ շարունակում է մշակվել Սովետական Հայաստանի մայրաքաղաքի նախագիծը։ Առանձնակի ուշադրություն է դարձնում նա բնակելի նոր թաղամասերի հատակագծմանը։ Հրազդանի մեծ կամուրջի մոտ, կիրճի աջ ափին ծավալվող բնակելի մեծ շրջանի, ինչպես և քաղաքի մյուս մասերում յոթնամյակի ընթացքում ծավալվող բնակարանային շինարարության համար ստեղծվող բնակելի նոր շրջանների հատակագծումը Մ. Մազմանյանի և նրա ղեկավարած ստեղծագործական կոլեկտիվի գլխավոր զբաղմունքն է այժմ։ Քաղաքաշինական այդ կարևոր հարցերը նրա կողմից դրվում են առաջադիմական, ժամանակակից լուծումներ, որոնց հիմնական սկզբունքը՝ աղգաբնակչության կենսապայմանների անշեղ բարելավումն է։

Չափազանց գնահատելի է նաև Մ. Մազմանյանի գործունեությունը ճարտարապետական գիտության բնագավառում։ Աշխատակցելով Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, նա գործուն մասնակցություն է ունենում այդ հաստատության գիտական միջոցառումներին՝ հայ ճարտարապետության և արվեստի ուսումնասիրության ուղղությամբ։

Արժանի է առանձնապես հիշատակել հոբելյարի աշխատանքի ևս մի կարևոր բնագավառի մասին։ Դա մասնակցությունն է Էջմիածնի Մայր Աթոռի կողմից իրականացվող վերաշինական աշխատանքներին։ Որպես նախագահ գլխավորելով Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնաժողովը, նա եռանդուն աջակցություն է ունենում այն բոլոր շինարարական-վերանորոգչական աշխատանքներին, որոնք վերջին տարիներս կատարվում են Էջմիածնում։ Նրա նախագծով է իրականացվում Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Շողակաթի եկեղեցիների շրջապատի բարեկարգումը։

Մասնագետի իր մեծ փորձը, ընդարձակ գիտելիքները, հայ ճարտարապետության ու արվեստի հիանալի ճանաչողությունը մեծ չափով նպաստում են Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնաժողովի աշխատանքների հաջողությանը։

Այժմ, երբ այդ աշխատանքների արդյունքները աստիճանաբար սկսում են շոշափելի դառնալ, ուրախացնելով շատերին, բնականաբար հպարտության զգացումով լցվում է նաև այն մարդու սիրտը, որի հմուտ ղեկավարությամբ, գիտական և մասնագիտական պատշաճ մակարդակով քննարկվում են և համապատասխան լուծում ստանում Մայր Աթոռի վերանորոգչական բեղմնավոր գործունեության հետ կապված նախագծային-շինարարական հարցերը։

Իր ժողովրդի մեծ վերածնունդով, հայրենի քաղաքների ու գյուղերի բարեկարգման ու կառուցապատման պայծառ հեռանկարներով ոգեշնչված, բեղմնավոր կյանքի ուղիով անցած Միքայել Մազմանյանին մնում է մաղթել քաջառողջություն և երկար կյանք, որպեսզի կարողանա նույնպիսի եռանդով, ինչպես մինչև այժմ, ազնիվ և ջանասիրաբար ծառայել իր ժողովրդին։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՉԵԽ ՊԱՏՄԱԲԱՆ ՍՈՌՈՒՉԵԿԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Խեթերեն լեզվի ուսումնասիրության համար Երևան ժամանեց հայտնի չեխ գիտնական, Պրագայի Կարլուսի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դասախոս դոկտ. Վլադիմիր Սոուչեկը։ Նա աշակերտն է ակադեմիկոս Գրոզնու, որը հայտնի լեզվաբան էր և մոտիկ կապեր ուներ հայ լեզվաբաններ Հ. Աճառյանի և Գ. Ղափանցյանի հետ։ Հայաստանում նրա կատարած աշխատանքները մաս են կազմելու մի ընդարձակ աշխատության՝ նվիրված խեթերեն լեզվին և այդ լեզվով մեզ հասած մի շարք արձանագրությունների վերծանման։

Դոկտ. Սոուչեկը հիացմունքով բաժանվեց Երևանից, որտեղ նա զգացել էր վերածնված հայ ժողովրդի սրտի զարկը, հիացել մեր ծաղկող երկրի առօրյայով, բազմաթիվ նորակառույցներով և Երևանի Մատենադարանով։

Դոկտ. Սոուչեկը դասախոսություն կարդաց Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողներին «Խեթագիտության արդի վիճակը» թեմայով։ Նա պատմության ֆակուլտետին հանձնեց խեթական սեպագիր արձանագրությունների ալբոմ։

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Տարեցտարի ընդարձակվում է Հայաստանի երկրաբան-հետախույզների աշխատանքը, մեր արդյունաբերության համար բաց անելով ավելի լայն հեռանկարներ։ Անցնող տարում ավելի քան 100 գիտական արշավ է կատարվել մեր երկրի զանազան վայրերում, որոնք ընդհանրապես պսակվել են առաջադրված նպատակները արդարացնող տվյալներով։

Ղափանի և Ալավերդու պղնձահանքերի հետախուզությունից պարզվել է, որ կարելի է է՛լ ավելի ընդարձակել Ղափանի հանքավայրի հումքի բազան, հնարավորություն ստեղծելով զգալապես մեծացնելու ֆարրիկայի կարողությունը։ Ալավերդու Լենինյան հանքերը կարող են նորից մտցվել գործուն հանքերի շարքը։ Այդ կերպով Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատը կապահովվի տեղական հումքով։

Շուտով կլուծվի Զոդի ոսկու հանքերի շահագործման կարելիության հարցը։ Մոլիբդենով հարուստ նոր հանքաքարերը է՛լ ավելի կընդարձակեն այդ թանկագին մետաղի արդյունահանումը։

Հրազդանի և Գորիսի շրջանում ուսումնասիրվել են երկաթահանքեր, որոնք ունեն այնքան պաշար, որ կարելի է ապահովել տեղական կարիքները և նույնիսկ հանքաքար մատակարարել Անդրկովկասյան մետալուրգիական կոմբինատին։

Որոշ տվյալներ կան այն մասին, թե Հայաստանում կան նավթի և գազի զգալի պաշարներ։ Նախատեսված է 1960 թվականի ընթացքում երկրաբանական հետախուզությունների վրա ծախսել 107 000 000 ռուբլի։ Այդ հետախուզությունների արդյունքով մեր ժողովրդական տնտեսությունը և արդյունաբերությունը սննախրնթաց վերելք կունենան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Դեկտեմբերի 21-ին, Երևանի Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում իր աշխատանքներն սկսեց Հայաստանի ճարտարապետների չորրորդ համագումարը։ Պատգամավորներից բացի համագումարին մասնակցում էին շինարարության բանվորներ, ինժեներներ, նախագծողներ, ռեսպուբլիկայի Շինանյութերի և կառուցվածքների գիտահետազոտական ինստիտուտի գիտնականներ, պարտիական, սովետական և արհմիութենական աշխատողներ և բազմաթիվ հյուրեր եղբայրական մյուս ռեսպուբլիկաներից։

Հայկական ՍՍՌ արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ Ե. Ասցատրյանը հրապարակում է Հայաստանի Կոմպար-

տիայի Կենտկոմի ողջույնը համագումարին։ Ապա հաստատվում է հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի ճարտարապետների միության վարչության հաշվետվությունը։

2. Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը։

3. Հայաստանի ճարտարապետների միության ղեկավար օրգանների ընտրությունը։

4. ՍՍՌՄ ճարտարապետների երրորդ համագումարի պատգամավորների ընտրությունը։

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցում է Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ, ՍՍՌՄ Շինարարության և ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ Հ. Մարգարյանը։ Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես է գալիս վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Ս. Սիմոնյանը։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին պարտիական և կառավարական բազմաթիվ անձնավորություններ։ Համագումարը տևեց մի քանի օր։

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ԺԱՄՄԵՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ.— Ժողովրդական արտիստ Թ. Սարյանի բեմադրությամբ Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում բեմադրվեց Ա. Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» դրաման։

Ադրբեջանական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Ժամմենը, որն առաջին անգամն է երևում Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի բեմում, խաղում էր Կրուչինինայի դերը։ Հանդիսականները ջերմորեն ողջունեցին տաղանդավոր հայ դերասանուհու ելույթը։

ԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ.— Քաղաքային Սովետի գործկոմի կուլտուրայի բաժնի և նկարիչների միավորման նախաձեռնությամբ կազմակերպվեց արվեստի ցուցահանդես՝ նվիրված Կիրովականի երիտասարդ արվեստագետների ստեղծագործություններին, որին մասնակցեցին բազմաթիվ երիտասարդ նկարիչներ և քանդակագործներ, ավելի քան 150 աշխատություններով, որոնք վկայում են Կիրովականի մշակութային վերելքի մասին։

Քիմիագործների կուլտուրայի պալատի ճեմասրահներում ցուցադրված գունագեղ բնանկարների, մատիտանկարների, դիմանկարների, բեմադրության արտաքին ձևավորման էսքիզների և մի շարք հայրենասիրական նյութերի քանդակների նմուշները ուշագրավ հաջողություններ են։ Ռ. Բաբայանի, Հ. Գրիգորյանի նկարները, Ա. Ուլիխանյանի և Ս. Մինասյանի դիմանկարները, Ռ. Բերբերյանի էսքիզները վկայում են արվեստագետների անժխտելի շնորհքների մասին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԻՑՈՒՐԴԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ.— Ռեսպուբլիկայի Կուլտուրայի մինիստրության Գրքի առևտրի գլխավոր վարչությունը ժողովրդական դեմոկրատիայի և արտասահմանյան մյուս երկրներում ապրող հայերի համար բաց է թողել մեծ քանակությամբ մանկա-պատանեկան, գեղարվեստական, քաղաքական և այլ գրականություն։

1959 թվականի հունվարից մինչև նոյեմբերի վերջը արտասահմանյան մոտ 40 երկրներ է ուղարկվել ավելի քան 400 000 ռուբլու արժեքով գիրք, որոնց թվում Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Վ. Փափազյանի, Հ. Հակոբյանի երկերի ժողովածուներ կամ առանձին հրատարակություններ։ Սրագրվում է ուղարկել նաև տեխնիկական գրականություն՝ հայերեն լեզվով։

ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Գ. Պետրոսյանը ԺԹ դարի վերջին տասնամյակների հայ բեմի շողշողուն աստղերից մեկն էր։ ԺԹ դարի 80-կան թվականներին Մոսկվայից Թբիլիսի գալով, նա իր ամբողջ կյանքը նվիրեց հայ բեմին և արվեստին։ Նա շարունակողը հանդիսացավ Ադամյանի լավագույն բեմական ավանդույթների, հայ թատրոնը փրկելով այն գորշությունից և անկումից, որին մատնվել էր նա Ադամյանից հետո։

Երեկոն կազմակերպել էր Հայկական թատերական ընկերությունը։ Զեկուցումով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Սարգիս Մելիքսեթյանը։ Ընթերցվեցին գրող Արազու, ժողովրդական արտիստ Վ. Միրզոյանի հուշերը։ Պետրոսյանի խաղընկեր ժողովրդական արտիստուհի Օլգա Գուլազյանը պատմեց իր հուշերը։

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳՐԱԿԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ 20-ԱՄՅԱԿԸ.— Մոսկվայի Գիտնականների տանը կայացավ հանդիսավոր համերգ, որը նվիրված էր Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Սուրեն Քոչարյանի կողմից «Սասունցի Դավիթ» էպոսի գրական կոմպոզիցիայի կատարման 20-ամյակին։

Քսան տարի է ինչ Ս. Քոչարյանը «Սասունցի Դավիթ»-ը կատարում է Մոսկվայի համերգային դահլիճներում, կուլտուրայի պալատներում և ակումբներում։ Մայրաքաղաքի հասարակայնությունը միշտ էլ բարձր է գնահատել Ս. Քոչարյանի արվեստը։ Հոբելյանական համերգը մի անգամ ևս հաս-

տատեց տաղանդավոր արվեստագետի կատարողական բարձր վարպետությունը։

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ.— Վերջերս լրացավ պրոֆ.-դոկտ. Ե. Տեր-Մինասյանի ծննդյան 80-ամյակը և գիտական գործունեության 60-ամյակը։

Ե. Տեր-Մինասյանը ծնվել է Արթիկի շրջանի Հառիճ գյուղում։ Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Գեորգյան Ճեմարանում, Լայպցիգում և Բեռլինում։ 1904—1930 թվականներին նա ունեցել է մանկավարժական, գրական գործունեություն Անդրկովկասի հայաշատ կենտրոններում։ Սկսած 1944 թվականից նա աշխատում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում՝ որպես Լեզվի ինստիտուտի ավագ գիտական աշխատակից և բառարանագրության սեկտորի վարիչ։

Պրոֆ.-դոկտ. Ե. Տեր-Մինասյանը մեր լավագույն գիտնական մանկավարժներից է։ Նրա երախտիքը մեծ է հայ հին պատմիչների ուսումնասիրության, թարգմանության և հրատարակության գործում։ Շատ կարևոր նշանակություն ունեն Ե. Տեր-Մինասյանի հայոց լեզվի պատմության շուրջ Կ. Տեր-Մկրտչյանի աշխատակցությամբ կատարած հրատարակությունները։

Առանձնապես մեծ է Ե. Տեր-Մինասյանի երախտիքը «Ռուս-հայերեն նոր բառարան»-ի (2 հատորով, 1933—1935 թ. թ.) և նույնի քառահատոր հրատարակության (1954—1958 թ. թ.) գործում։

Ցնայած առաջացած տարիքին, պատկառելի գիտնականը բարեխղճությամբ և մեծ եռանդով շարունակում է իր գիտական, մատենագրական աշխատանքը։

ՆԿԱՐԻՉ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՅՈԻՅԱՀԱՆԴԵՍԸ.— Իր ծննդյան 50-ամյակին էր նվիրվել անվանի նկարիչ Մ. Աբեղյանի վերջին ցուցահանդեսը Մոսկվայի ՍՍՌՄ նկարիչների միության դահլիճում։ Ցուցահանդեսում տեղ էին գտել Մ. Աբեղյանի տարբեր շրջանի և տարբեր բնույթի բազմաթիվ գործեր։ Բացի գեղանկարչական կտավներից, ցուցադրված են նաև գրավիչ վարպետությամբ կատարված գրաֆիկական աշխատանքներ, որոնք նույնպես գնահատված են դիտող հասարակությունից։